ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

(1941–1945 թթ.)

Գիրքը գրաքվում է ՊԱՐԳԵՎ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ,
ՀՈՎԻԿ ՄԱՄԻԿՈՆԻ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ
(ք.Վոլժսկի Վոլգոգրադի մարզ) և
ԱՆԴՐԱՆԻԿ ԿԼԻՄԵՆՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
(Սանկտ-Պետերբուրգ) հովանավորությամբ, որի համար
հեղինակը շնորհակալություն է հայտնում նրանց:

ՀՀ գլխավոր հիմնադրամ
գրադարանին.
Հ. Բալասանյան
4.10.2023թ.
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

(1941-1945 ԹԹ.)

Երևան 2022

ԱՄՀ 929:947.925 Ար-ին

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ
ОБЬЕДИНЕНИЕ ВЕТЕРАНОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ա-110895

КЛИМЕНТ АРУТЮНЯН

ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ БРАТЬЕВ МИНАСЯН В ФРОНТОВЫХ ПИСЬМАХ И АРХИВНЫХ ДОКУМЕНТАХ

(1941–1945 ГГ.)

Ереван 2022

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 422

Խմբագրական կոլեգիա՝

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՍԱՏՈՒՐԻ

ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովի նախագահ, գեներալ-մայոր:

ԵՍԱՅԱՆ ՍԻՄՈՆ ՆԻԿՈԼԱՅԻ

Հայաստանի Հանրապետության վետերանների միավորման նախագահ, գնդապետ:

Գրախոս՝

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԻԽԱՅԻԼ ԱՎԱՆԵՍԻ

ՀՀ վետերանների միավորման նախագահի տեղակալ, գնդապետ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ.

Հ 422 Մինասյան եղբայրների կյանքն ու գործունեությունը ռազմաճակատային նամակներում և արխիվային փաստաթղթերում (1941-1945 թթ.) – Երևան. «Էդիթ Պրինտ», 2022, 128 էջ, 32 էջ լուսանկար:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատից ուղարկած նամակների և արխիվային փաստաթղթերի հիման վրա լուսաբանվել է Մինասյան եղբայրների ռազմաճակատային կյանքն ու գործունեությունը, բացահայտվել Հայրենիքի, ծնողների, բարեկամների ու ընկերների հանդեպ նրանց անսահման սերն ու նվիրվածությունը, համառոտակի ցույց տրվել նրանց հետագա ճակատագիրը:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-75-736-0

© Հարությունյան Կ., 2022

ԱՌԱՋԱԲԱՆ

Խորհրդային Միության Հայրենական Մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և կամակատար երկրների դեմ տարած պատմական հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև հայ ժողովուրդը: Նրա ավելի քան 600 000 զավակներ մասնակցեցին պատերազմին, որոնցից ավելի քան 200 000-ը զոհվեցին մարտերում: Ըստ պաշտոնական տվյալների Խորհրդային Միությունից պատերազմին մասնակցել է շուրջ 500 000 հայ, որից 300 000-ը Խորհրդային Հայաստանից, 200000-ը խորհրդային մյուս հանրապետություններից: 100 000 հայեր ֆաշիզմի դեմ մարտնչել են արտասահմանյան երկրների զինված ուժերի դիմադրական և պարտիզանական շարժման շարքերում:

Պատերազմին հայ ժողովրդի մասնակցության բարձր ակտիվությունը դրսևորվեց ոչ միայն 600 000 մարդ ռազմաճակատ ուղարկելով, այլ տարբեր զորատեսակների կազմում բոլոր նշանավոր ճակատամարտերում, պաշտպանական ու հարձակվողական գործողությունների ժամանակ հայ ռազմիկների ցուցաբերած հերոսությամբ, կրտսեր, միջին, ավագ և բարձր հրամանատարական կազմում ունեցած հայերի մեծ տեսակարար կշռով:

Ըստ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության պարգևատրման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-ի տվյալների Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարտական շքանշաններով ու մեդալներով (խոսքը գնում է միայն «Արիության համար», «Մարտական ծառայությունների համար», «Ծովակալ Ուշակով», «Ծովակալ Նախիմով» մեդալներին) պարգևատրվել են 9 284 199 մարդ, որոնց թվում՝ ռուսներ՝ 6 172 976 ուկրաինացիներ՝ 1 710 766, բելոռուսներ՝ 311 105, թաթարներ՝ 174 886, հրեաներ՝ 160 772, ղազախներ՝ 96 638, ուզբեկներ՝ 80 013, հայեր՝ 66 802, վրացիներ՝ 49 106, ադրբեջանցիներ՝ 36 180 մարդ և այլն[1]: Հայրենական մեծ պատերազմի տարիներին կատարած սխրանքների համար

[1] *Газ. "Красная Звезда", 28 марта 1967.*

Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 11 635 մարդու, որից ռուսներ՝ 8182, ուկրաինացիներ՝ 2072, բելոռուսներ՝ 311, թաթարներ՝ 161, հրեաներ՝ 108, հայեր՝ 99 ղազախներ՝ 96, վրացիներ՝ 89, ուզբեկներ՝ 69, մորդվիններ՝ 61, չուվաշներ՝ 44, ադրբեջանցիներ՝ 43 և այլն[1]:

Ընդհանուր առմամբ հայերից Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 106 հոգու, որից՝ 4-ին Խորհրդա-ֆիննական պատերազմում (30.11.1939-13.03.1940), 99-ին՝ Հայրենական մեծ պատերազմում (22.06.1941-9.05.1945) և 3-ին՝ հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին սխրանքների համար: Խորհրդային Միության մարշալ Իվան (Հովհաննես) Քրիստափորի (Խաչատուրի) Բաղրամյանը և գրոհային ինքնաթիռների գնդի հրամանատար, ծովային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանը այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի անգամ. պատերազմի տարիներին Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման արժանացել են ընդամենը 115 մարդ:

Հայրենական մեծ պատերազմում կատարած անօրինակ սխրանքների համար 26 հայ ռազմիկներ պարգևատրվել են Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով ու դարձել զինվորական քաջության այդ պատվավոր շքանշանի լրիվ ասպետներ, որոնց իրավունքներն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1967 թ. սեպտեմբերի 6-ի հրամանագրով հավասարեցված են Խորհրդային Միության հերոսների արտոնություններին: Պատերազմի տարիներին Փառքի 1-ին աստիճանի շքանշանով են պարգևատրվել ընդամենը 2500 մարդ[2]: Հարկ ենք համարում նշել, որ երբ 1943 թ. նոյեմբերի 8-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հիմնադրվեց Փառքի Եռաստիճան շքանշանը, ապա Կարմիր բանակում առաջինը Փառքի շքանշանի 3-րդ աստիճանի շքանշանով

---

[1] *Герои Советского Союза. М., Воениздат. 1984, с. 245 (ադրբեջանցի համարվող 43 հերոսների մի զգալի մասը բրոներ, թալիշներ, թաթեր. լեռնային հրեաներ են և այլն):*

[2] *Ордена и медали СССР. М., Воениздат. 1974. 90.*

պարգևատրվեց սերժանտ Ժորա (Գևորգ) Ավանեսի Իսրայելյանը (17 նոյեմբերի, 1943 թ.)[1]: Հետագայում խիզախ զինվորը պարգևատրվեց նաև Փառքի 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով և դարձավ այդ շքանշանի լրիվ ասպետ[2]:

Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար պատերազմի տարիներին Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման արժանացան հայորդի՝ Համո Յոլյանը (3.06.1943), Բագրատ Հարությունովը, Նիկոլայ Նարինյանը, Բորիս Սալամբեկովը, Անդրանիկ Խաչատրյանը (5.11.1943) և Լևոն Օրբելին (10.06.1945):

Մոսկվայի ճակատամարտի ակտիվ մասնակից, Խորհրդային Միությունում ատոմային և ջրածնային ռումբի ստեղծման գործում ներդրած ավանդի համար, ակադեմիկոս Կիրիլ Իվանովիչ Շոլկինին (նույն ինքը Կիրակոս Հովհաննեսի Մելիքյան) շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի եռակի հերոսի կոչում (1949, 1951, 1958):

Հետպատերազմյան տարիներին, Հայրենական մեծ պատերազմի մասնակից երեք հայ ականավոր գիտնականների՝«ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-գնդապետ Արտեմ Իվանովիչ (Հովհաննեսի) Միկոյանին (1956, 1957), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ատոմային և ջրածնային ռումբերի ստեղծման ու փորձարկման, Մոսկվայի հակահրթիռային պաշտպանության համակարգի ստեղծման աշխատանքների ակտիվ մասնակից, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր Սամվել Գրիգորի Քոչարյանցին (1962, 1964) և ակադեմիկոս Հայկ. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համազասպի Համբարձումյանին (1968, 1978) Սոցիալիստական աշխատանքի հերոսի այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի անգամ: 1994 թ. հոկտեմբերի 11-ին ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին շնորհվել է նաև Հայաստանի Հանրապետության Ազգային հերոսի կոչում: Հիշատա-

---

[1] *Газ. "Красная Звезда". 20 декабря. 1943.*

[2] *Кавалеры ордена Славы трех степеней. М.: Воениздат, 2000, с. 232-233.*

կության է արժանի, որ աշխարհահռչակ գիտնականը Հայրենական մեծ պատերազմի տարիներին առաջարկած ինվարիանտության սկզբունքի հիման վրա մշակել էր պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, որը հիմք էր հանդիսացել ստեղծել գիշերային պայմաններում գործող օպտիկական նշանացույցեր, որոնք այսօր էլ մեծ կիրառում ունեն:

Հայրենական մեծ պատերազմի մասնակից մի շարք հայ ականավոր գիտնականների, գործարանների տնօրենների, առողջապահության բնագավառի գործիչների հետպատերազմյան տարիներին շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Նրանց թվում էին՝ ակադեմիկոս, ինժեներ-էլեկտրոտեխնիկ Անդրանիկ Ղևոնդի Իոսիֆյանը (1958), որը 1941-1975 թթ. հանդիսացել է Մոսկվայի թիվ 627 գործարանի տնօրենը. պատերազմի տարիներին՝ այդ գործարանում մշակվել և արտադրել են՝ տորպեդներ, շարժական ռադիոկայաններ, սնուցող մարտկոցներ և այլն, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-մայոր Անդրանիկ Մելքոնի Պետրոսյանցը (1962), որը պատերազմի տարիներին եղել է ԽՍՀՄ տանկային արդյունաբերության ժողկոմի տեղակալ, իսկ հետագայում ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-մայոր Իվան Լյուդվիգի Կնունյանցը (1966), որը պատերազմի տարիներին եղել է Կարմիր բանակի Գլխավոր շտաբի փորձագետ և հսկայական աշխատանք կատարել զինված ուժերի հակաքիմիական պաշտպանության բնագավառում, Պարույր Հաբեթնակի Մաթևոսյանը (1967), որը 1942-1983 թթ. եղել է Ստալինգրադի «Կարմիր հոկտեմբեր» մետաղագործական խոշոր գործարանի տնօրեն, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Իգնատի Բուռնազյանը (1976), որը պատերազմի տարիներին եղել է Հարավային, Հարավարևմտյան Կալինինի, Մերձբալթյան 1-ին և Հեռավորարևելյան 2-րդ ռազմաճակատների ռազմասանիտարական վարչությունների պետ, իսկ պատերազմից հետո երկար ժամանակ վարել է ԽՍՀՄ առողջապահության նախարարի տեղա-

կալի պաշտոնը, ակտիվորեն մասնակցել տիեզերական բժշկության ստեղծման ու զարգացման աշխատանքներին, բժշկական ծառայության գնդապետ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Իվանի Հարությունովը(1974), որը պատերազմի տարիներին եղել է 3-րդ Ուկրաինական ռազմաճակատի գլխավոր վիրաբույժը, պատերազմից հետո դարձել ԽՍՀՄ բժշկական ակադեմիայի ակադեմիկոս, Ուկրաինայի առողջապահության նախարարության գլխավոր նյարդավիրաբույժ, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի և Բուրդենկոյի անվան նյարդավիրաբուժության ինստիտուտի տնօրեն, բժշկական ծառայության փոխգնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Արամ Հակոբի Աբրահամյանը (1969), որը ակտիվորեն մասնակցել է նաև Խորհրդաֆիննական պատերազմին, եղել Լենինգրադյան զինվորական օկրուգի հոսպիտալի ուրոլոգիական բաժնի պետ, իսկ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ղեկավարել Երևանի զինվորական հոսպիտալների ուրոլագիական բաժանմունքները, այնուհետև եղել ուրոլոգների համամիութենական ընկերության նախագահ և ուրիշներ:

1945 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 69 հայ գեներալ, 1 ծովակալ (Ի.Ս. Իսակով) և 1ավիացիայի մարշալ (Ս.Ա. Խուդյակով): Հետպատերազմյան շրջանում պատերազմի մասնակից 83 հայորդու նույնպես շնորհվել է գեներալի կոչում: Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի մասնակից հայերից 152-ին շնորհվել է գեներալի կոչում: Նրանցից Ի.Ք. Բաղրամյանին 1955 թ. մարտի 11-ին շնորհվել է Խորհրդային Միության մարշալի կոչում: 1935-1978 թթ. Խորհրդային Մարշալի կոչում է շնորհել 32 հոգու[1]: 1955 թ. մարտի 3-ին Խորհրդային Միության նավատորմի կոչում է շնորհվել Ի.Ս. Իսակովին: Հարկ ենք համարում նշել, որ Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչման բացի Իսակովից արժանացել են Ն.Գ. Կուզնեցովը (3.03.1955) և Ս.Գ. Գորշկովը (28.10.1967)[2]: Հետպատերազմյան տարիներին

[1] *Советская военная энциклопедия, М., Воениздат, т.5, 1978, с. 169.*
[2] *Советская военная энциклопедия, М., Воениздат, т. 1, 1976, с. 115.*

պատերազմի մասնակից հայ ծովային սպաներից 4-ին՝ Վալերիան Իոսիֆի Սուրաբեկովին, Իվան Խաչատուրի Գալուստովին, Աշոտ Առաքելի Սարկիսովին և Վլադիմիր Քրիստափորի Սահակյանին շնորհվել է փոխծովակալի (վիցե-ադմիրալ), իսկ Արտավազդ Արամի Սաղոյանին, Միհրան Կարապետի Պետրոսյանին, Զարմայի Մամիկոնի Արվանովին և Վլադիմիր Սեմիոնի Փիրումովին՝ դեր-ծովակալի (կոնտր-ադմիրալ) կոչում[1]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ զորավարներից ու զորահրամանատարներից մեկը եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի հրամանատարի 1-ին տեղակալ՝ ծովային գլխավոր շտաբի պետ (ծովակալ Ի.Ս. Իսակով), մեկը՝ Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի 1-ին տեղակալ՝ ռազմաօդային ուժերի շտաբի պետ (ավիացիայի մարշալ Ս.Ա. Խուդյակով-Ա.Ա. Խանփերյանց), մեկը՝ 1-ին Մերձբալթյան, սպա 3-րդ Բելոռուսային ռազմաճակատի հրամանատար (բանակի գեներալ Ի.Ք. Բաղրամյան), 3-ը՝ բանակի հրամանատար. գեներալ-գնդապետ Ի.Ք. Բաղրամյանը եղել է 11-րդ գվարդիական, ավիացիայի մարշալ Ս.Ա. Խուդյակովը՝ 1-ին և 12-րդ օդային, իսկ հրետանու գեներալ-լեյտենանտ Ս.Ա. Պարսեղովը՝ 40-րդ բանակի հրամանատար, 8 հայորդի եղել են կորպուսի հրամանատար. գեներալներ Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը եղել է 50-րդ, ապա 73-րդ, Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանը՝ 90-րդ հրաձգային, Բագրատ Իսահակի Առուշանյանը՝ 11-րդ գվարդիական հրաձգային, Վլադիմիր Ստեփանի Տամրուչին (Դեմուրչյան)՝ 22-րդ տանկային, Տիմոֆեյ Վլադիմիրի Դեդեսոլյանը՝ 2-րդ գվարդիական հեծյալ, գնդապետներ՝ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը՝ 11-րդ գվարդիական մեքենայացված, Արտեմ Կարապետի Պողոսովը՝ 20-րդ տանկային և փոխգնդապետ Համբարձում Մելիքի Մելիքյանը՝ 106-րդ հրաձգային կորպուսի հրամանատար[2]:

---

[1] *Климент Арутюнян, Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг., Ер., Изд. "Зангак", 2018, с. 748.*

[2] *Комкоры, Военный биографический словарь, М., Изд. "Кучково поле", 2006, т. 1, с. 354, 355, 359, т. 2, с. 101, 162, 254-256.*

28 հայորդիներ եղել են դիվիզիայի, ավելի քան 100-ը՝ բրիգադի ու գնդի հրամանատար:Պատերազմի տարիներին Կարմիր բանակի կազմում գործում էին 6 հայկական ազգային դիվիզիա, որոնց շարքերում մարտնչել են ավելի քան 60.000 հայ ռազմիկներ: Հայկական 76-րդ լեռնահրաձգային Կ.Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ դիվիզիան, որը կազմավորվել էր Հայաստանում՝ 1920-1922 թվականներին՝ Հայաստանի առաջին հանրապետության բանակի, ապա Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի վերակառուցման հեղևանքով, 1938 թ. վերակազմավորվել էր ոչ ազգային միավորման: Հայրենական մեծ պատերազմի սկզբին՝ 1941 թ. հունիս-հուլիս ամիսներին, համալրվելով Հայկական ԽՍՀ մարդկային ու նյութական միջոցների հաշվին, այն կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը:Դիվիզիայի 16000-անոց անձնակազմից շուրջ 14000-ը կազմում էին հայերը[1]: Նույնիսկ օգտագործվում էր դիվիզիայի հին կլոր կնիքը, որի վրա հայերեն տառերով գրված էր միավորման անունը: Դիվիզիան 1941 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, համաձայն 1921 թ. փետրվարի 26-ի Մոսկվայում կնքված խորհրդա-իրանական պայմանագրի, Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ բանակի առաջապահ զորքերի կազմում անցնում է խորհրդա-իրանական սահմանը Ջուլֆայի մոտ և համարյա առանց դիմադրության հասնում Թավրիզ: Խորհրդային զորքերի մուտքը Իրան հնարավորություն է ստեղծում կարճ ժամանակամիջոցում երկիրը մաքրել գերմանաֆաշիստական գործակալներից ու վիժեցնել ԽՍՀՄ-ի դեմ Իրանը պատերազմի մեջ ներքաշելու հիտլերյան պլանները: Այդ գործողությունը նաև լուրջ նախազգաշում էր ֆաշիստական Գերմանիայի փաստական դաշնակից Թուրքիային, որը մեծ ուժեր էր կուտակել Խորհրդային Հայաստանի սահմանին և հարմար պահի էր սպասում իրականացնելու Անդրկովկաս ներխուժելու և այն տիրանալու իր վաղեմի երազանքները: Իր պատմական առաքելությունը հաջողությամբ կատարելուց հետո, դիվիզիան 1941 թ. սեպտեմբերի

[1] ՌԳ ՊՆԿՎ. ֆ. 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիա. ց. 1, գ.2. թ. 7, գ. 17. թ. 29:

10–ին մեկնեց ռազմաճակատ և նույն ամսի 26–ից Հարավարևմտյան ռազմաճակատի 38–րդ բանակի կազմում Ուկրաինայի Պոլտավայի մարզի տարածքում մասնակցեց պաշտպանական ծանր մարտերին: Հետագայում նա աչքի ընկավ հատկապես Ստալինգրադյան ճակատամարտում (17 հուլիսի 1942 թ. – 2 փետրվարի 1943 թ.), վերակազմավորվեց 51 –րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, պարգևատրվեց Լենինի շքանշանով: Այնուհետև, գվարդիականները ակտիվորեն մասնակցեցին Կուրսկի ճակատամարտին (5 հուլիսի – 23 օգոստոսի 1943 թ.), Բելոռուսական գործողությանը (23 հուլիսի – 29 օգոստոսի 1944 թ.)՝ արժանանալով Վիտեբսկյան իսկ գնդերը՝ Պոլոցկյան պատվավոր անվան: Բելոռուսական գործողության ավարտից հետո 51–րդ գվարդիական Կ.Ե. Վորոշիլովի անվան Լենինի շքանշանակիր, կարմրադրոշ հրաձգային դիվիզիան մասնակցեց Խորհրդային Մերձբալթիկայի գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման մարտերին,հաղթանակը դիմավորեց Բալթիկ ծովի ափին՝ Լիտվայի տարածքում: Բելոռուսական և Մերձբալթյան մարտական գործողությունների ժամանակ դիվիզիան մարտնչում էր 6–րդ գվարդիական բանակի կազմում, որը մտնում էր բանակի գեներալ Ի.Ք. Բաղրամյանի հրամանատարությամբ գործող 1–ին Մերձբալթյան ռազմաճակատի մեջ:

Հայկական 390–րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր 1942 թ. փետրվարի վերջերին Կերչի թերակղզում, Ղրիմի ռազմաճակատի 51–րդ բանակի կազմում մասնակցեց Կերչի ծանր մարտերին, որոնց ընթացքում հերոսաբար զոհվեց դիվիզիայի սիրված հրամանատար, գնդապետ Սիմեոն Զաքիյանը: Նա հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ աճյունը տեղափոխվեց Երևան և 1942 թ. ապրիլի 5–ին թաղվեց մայրաքաղաքի Ս.Մ. Կիրովի անվան մանկական զբոսայգում: Այնտեղ կանգնեցվեց նաև հերոս հրամանատարի հուշարձանը: 1942 թ. ապրիլի 19–ի տվյալներով Հայկական 390–րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 9133 մարդուց, որից հայեր՝ 5744, ռուսներ՝ 1162, մնացածը այլազգիներ: 1942 թ.

մարտի 13-ից հայերեն լեզվով լույս էր տեսնում «Հայկական սնայ-պեր» թերթը[1]: 1942 թ. մայիսի 7-20-ը դիվիզիան գնդապետ Հմայակ Բաբայանի (հետագայում գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս) հրամանատարությամբ, Կերչի թերակղզու Արմա-էլի շրջանում դաժան մարտեր էր մղում հակառակորդի թվով մի քանի անգամ գերազանցող ուժերի դեմ ու ծանր կորուստների գնով փակում թշնամու առաջխաղացումը դեպի Թաման: Երբ գերմանացիները մայիսի 15-ին գրավեցին Կերչ քաղաքը և դրությունը դարձավ անհուսալի, 51-րդ բանակի զորքերը թողեցին թերակղզին և տեղափոխվեցին Թաման: Թամանի թերակղզի փոխադրված զորքերի մեջ էր նաև Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը չնայած հսկայական կորուստների, պահպանել էր իր մրտական դրոշները: Սակայն 1942 թ. հունիսի 14-ին դիվիզիան ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանով կազմացրվեց:

Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր Էջմիածնում, ապա Երևանում 1941 թ. օգոստոս-1942 թ. մարտ ամիսներին և հայերեն լեզվով հրատարակում էր «Հանուն հայրենիքի» թերթը, Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ, ապա 18-րդ բանակների կազմում՝ Նովոռոսիսկ-Տուապսե շրջանում մեծ զոհերի գնով, փակեց գերմանաֆաշիստական զորքերի ճանապարհը դեպի Անդրկովկաս: Մարտերի մեջ մտնելուց առաջ 1942 թ. սեպտեմբերի 25-ի դրությամբ, դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 11463 մարդուց, որից հայեր էին 11125-ը (այսինքն՝ հայերը կազմում էին դիվիզիայի անձնակազմի 97 տոկոսը) ռուսներ՝ 210 ուկրաինացիներ՝ 67 և այլն[2]:

1942 թ. հոկտեմբերի վերջերին, նոյեմբերի սկզբներին դիվիզիան ռազմաճակատի առաջին գծից փոխադրվեց 18-րդ բանակի պահեստազոր՝ Տուապսե քաղաք, հանգստի ու համալրման համար: Չնայած վերոհիշյալ մարտերում դիվիզիան անձնազոհության գնով կատարել

[1] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 390 -րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 1, թ. 175:
[2] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 408-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 15, թթ. 1 5:

էր մարտական առաջադրանք, պահպանել մարտական դրոշները, այնուամենայնիվ այն 1942 թ. նոյեմբերի 22-ին կազմացրվեց: Նրա հիման վրա, մի քանի օր անց կազմավորվեց 7-րդ առանձին հրաձգային բրիգադը, որը 1943 թ. հունվարի 3-ից, 47-րդ բանակի կազմում, մարտերի մեջ մտավ Կրասնոդարի երկրամասում: Ապրիլի վերջերին և մայիսի ակզբներին 7-րդ առանձին հրաձգային բրիգադը վերակազմավորվեց 23-րդ հրաձգային դիվիզիայի, որն աչքի ընկավ Ուկրաինայի և Լեհաստանի ազատագրման մարտերում արժանացավ «Կիևյան» և «Ժիտոմիրյան» պատվանունների, պարգևատրվեց Կարմիր դրոշի և Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Դիվիզիան իր հաղթական մարտական ուղին ավարտեց Գերմանիայում՝ Էլբայի ափին[1]:

Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր 1941 թ. օգոստոս - 1942 թ. փետրվար ամիսներին Հայկ. ԽՍՀ Ստեփանավան ապա՝ Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքներում և հայերեն լեզվով հրատարակում իր «Մարտական դրոշ» թերթը, ռազմաճակատ մեկնեց 1942 թ. դեկտեմբերի 2-ին: Անդրկովկասյան ռազմաճակատի 44-րդ բանակի կազմում դիվիզիան դեկտեմբերի 15-ից մարտերի մեջ մտավ Մոզդոկի շրջանում: 1942 թ. դեկտեմբերի 2-ի դրությամբ դիվիզիան իր շարքերում ուներ 13837 զինվոր ու սպա, որից հայեր էին 13460, այսինքն՝ հայերը կազմում էին դիվիզիայի անձնակազմի 97,3 տոկոսը[2]: Մոզդոկի մոտից՝ Կուբանի, Ուկրաինայի, Մոլդովայի տարածքներով դեպի Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա ու Չեխոսլովակիա ձգվեց Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին: Մարտերում ցուցաբերած խիզախության համար դիվիզիան պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի շքանշանով, արժանացավ Կիրովոգրադյան և Բրատիսլավյան պատվավոր անունների:

Դիվիզիան կազմացրվեց 1945 թ. հուլիսի 2-ին՝ Հունգարիայում:

[1] Կիմենտ Հարությունյան. Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Ե., «Զանգակ» հրատ., 2002, էջ 252-257:
[2] ՌԴ ՊՆԿԱ, Ֆ. 45-րդ բանակի. ց. 9458. գ. 24. թթ. 496-504, ց. 9948. գ. 12. թ. 209-210:

Կովկասյան նախալեռներից՝ Գրոզնու մատույցներից՝ Կուբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի վրայով դեպի Լեհաստան և Գերմանիա ձգվեց Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, որն ավարտվեց Բեռլինի գրավմամբ և Էլբա գետի ափ դուրս գալով: Դիվիզիային շնորհվեց Թամանյան պատվավոր անուն, նա պարգևատրվեց Կարմիր աստղի, Կարմիր դրոշի և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով, իսկ 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերին շնորհվեց Սևաստոպոլյան պատվավոր անուն: Դիվիզիայի անձնակազմից 9 հոգի արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ 8-ը դարձան Փառքի եռաստիճան շքանշանի լրիվ ասպետ: Հերոսների թվում էին ավագ սերժանտներ Հունան Ավետիսյանը և Սուրեն Առաքելյանը, որոնք իրենց մարմնով փակեցին հակառակորդի գնդացրային ԴՀՕՏ-ի հրակնատը և կյանքի գնով նպաստեցին մարտական առաջադրանքի կատարմանը: 1943 թ. փետրվարից դիվիզիայի հրամանատարը գեներալ-մայոր Նվեր Գևորգի Սաֆարյանն էր, որը փոխարինել էր նույն թվականի հունվարի 10-ին հերոսաբար զոհված գնդապետ Արտաշես Արշակի Վասիլյանին:

Մինչ այդ 1941 դեկտեմբերի 15-ից մինչև 1942 թ. փետրվարի 23-ը դիվիզիայի առաջին հրամանատարն էր գնդապետ Սիմեոն Գևորգի Զաքիյանը, որին 1942 թ. փետրվարի 23-ին փոխարինել էր փոխգնդապետ Անդրանիկ Սարգսի Սարգսյանը: Նրանից հետո դիվիզիայի հրամանատարությունը ստանձնել էր գնդապետ Արտաշես Արշակի Վասիլյանը: Դիվիզիան կազմավորվել էր Երևանում՝ 1941 թ. նոյեմբեր – 1942 թ. հունվար ամիսներին: Սկսած 1942 թ. հունվարի 12-ից դիվիզիայի քաղբաժինը հայերեն լեզվով հրատարակում էր «Կարմիր զինվոր» թերթը: Ռազմաճակատ մեկնելու նախօրյակին 1942 թ. օգոստոսի 8-ին, դիվիզիան իր շարքերում ուներ 11782 զինվոր ու սպա, որից հայեր էին 11674-ը, այսինքն՝ հայերը կազմում էին դիվիզիայի անձնակազմի 99,1 տոկոսը[1]: 1945 թ. սեպտեմբերին դի-

---

[1] *Կլիմենտ Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 208:*

վիզիան Գերմանիայից վերադարձավ Խորհրդային Հայաստան և տեղաբաշխվեց Երևանում, Քանաքեռում և Էջմիածնում: Այն գոյություն ունեցավ մինչև 1956 թ. ամառը և համարվում էր Անդրկովկասյան կարմրադրոշ զինվորական օկրուգի առաջատար միավորումներից մեկը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմավորված հայկական ազգային զորամիավորումներից միայն մեկն էր, որ չմեկնեց ռազմաճակատ և չմասնակցեց մարտական գործողություններին: Դա Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիան էր, որը կազմավորվել էր Երևանում 1942 թ. դեկտեմբերին: 1943 թ. հունվարից դիվիզիայում հայերեն լեզվով սկսեց լույս տեսնել «Մարտ հանուն հայրենիքի» թերթը: Այդ ժամանակ դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 8981 մարդուց, որից հայեր էին 6632-ը, այսինքն՝ հայերը կազմում էին անձնակազմի 73,8 տոկոսը[1]: Այս կազմը աննշան փոփոխություններով պահպանվեց մինչև պատերազմի վերջը: Դիվիզիայի հիմնական խնդիրն էր պաշտպանել Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած սահմանը, ինչպես նաև ռազմաճակատի համար երթային գումարտակների պատրաստումն ու ուղարկումը: Դիվիզիան պատվով կատարեց իր առջև դրված խնդիրը՝ նրա շարքերում մարտական պատրաստություն ստացած ավելի քան 10000 հայ զինվորներ մեկնեցին գործող բանակ և իրենց արժանի ավանդը ներդրեցին գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախման գործում:

Բացի վերոհիշյալ Հայկական ազգային զորամիավորումներից՝ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում կազմավորվեցին կամ համալրվեցին՝ 31-րդ, 61-րդ, 136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմերը ռազմաճակատ մեկնելու նախօրյակին զգալի չափով համալրվել էին հայերով: Այսպես, օրինակ, Երևանում կազմավորված 61-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը 1941 թ. դեկտեմբերի դրությամբ 70 տոկո-

---

[1] *ՌԴ ՊՆԿԱ. Ֆ. 261-րդ հրաձգային դիվիզիայի. ց. 1. գ. 1. թ. 3, Ֆ. 56. ց. 12214. գ. 877. թ. 5:*

սով համալրված էր հայերով, որի համար այս միավորումը հաճախ համարվել է հայկական[1]: Լենինականում (այժմ՝ Գյումրի)համալրված 320-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը 1942 թ. սեպտեմբերի 16-ի տվյալներով բաղկացած էր 9124 մարդուց, որից հայեր էին 7978-ը (87,5%)[2]:

Մեծ թվով հայերով էին համալրվել Վրաստանի տարածքում տեղակայված 28-րդ և 38-րդ պահեստազորային հրաձգային բրիգադները, որտեղ պատրաստվում էին երթային վաշտեր և ուղարկվում ռազմաճակատ: 28-րդ հրաձգային բրիգադը հայերեն լեզվով հրատարակում էր «Մարտական կադրեր», իսկ 38-ը՝ «Հայրենիք» թերթերը[3]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մի քանի հազար հայերով էին համալրված 47-րդ, 63-րդ, 242-րդ, 351-րդ, 386-րդ, 392-րդ, 388-րդ, 394-րդ, 406-րդ, 414-րդ և 417-րդ վրացական, 77-րդ 223-րդ, 271-րդ, 317-րդ, 398-րդ, 400-րդ, 402-րդ, 404-րդ և 416-րդ ադրբեջանական հրաձգային դիվիզիաները:

Այսպես, օրինակ, Քութաիսիում կազմավորված 388-րդ հրաձգային դիվիզիայի կազմում 1941 թ. նոյեմբերի 11-ի դրությամբ ծառայում էին 1903 հայ, Գորիում կազմավորված 276-րդ հրաձգային դիվիզիայի կազմում՝ 1385 հայ և այլն: Ստեփանակերտում կազմավորված 402-րդ հրաձգային դիվիզիայի կազմում 1941 թ. հոկտեմբերի սկզբին ծառայում էր 3334 հայ, որը կազմում էր միավորման անձնակազմի 30 տոկոսը, Գանձակում (Կիրովաբադում) կազմավորված 398-րդ հրաձգային դիվիզիայի կազմում՝ 1925 հայ, Ուջարա երկաթուղային ավանում կազմավորված 416-րդ հրաձգային դիվիզիայի կազմում՝ 1419 հայ, Բաքվում կազմավորված 404-րդ հրաձգային դիվիզիայի կազմում՝ 1846 հայ. Եվլախում կազմավորված 400-րդ

---

[1] *Народный подвиг в битве за Кавказ, М., Изд. "Наука", 1981, с. 319.*

[2] *Կիլիկեան Հարութիւնեան. Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 303:*

[3] *Հայ ժողովրդի պատմություն. հ. 8. Ե., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 56:*

Ա 110895

հրաձգային դիվիզիայի կազմում՝ 1746 հայ և այլն[1]:

Ինչպես հայկական, այնպես էլ վրացական ու ադրբեջանական դիվիզիաների կազմում ծառայող հայերի մեջ զգալի թիվ էին կազմում Սյունիքի զավակները, որոնք իրենց կատարած մարտական սխրանքներով և ցուցաբերած քաջությամբ արժանի ավանդ ներդրեցին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում:

Այժմ տեսնենք, թե Սյունիքի, Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրու շրջաններից ինչքան հայեր են զորակոչվել Կարմիր բանակի շարքերը՝ 1941–1945 թվականներին:

Ըստ «Ղափան» թերթի 1985 թ. մայիսի 12-ի համարի ճշտված տվյալներով Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են ավելի քան 7000 կապանցիներ, որոնցից 3036-ը զոհվել են ռազմաճակատում:

1941-1945 թթ. Գորիսի շրջանից Կարմիր բանակի շարքերն են զորակոչվել9146 մարդ, որից 4144-ը զոհվել են ռազմաճակատում, նշենք, որ 1939 թ. շրջանի բնակչությունը կազմում էր 26769 մարդ[2]:

Ըստ «Սիսիան» տեղեկատու-ուղեցույցի Հայրենական մեծ պատերազմին Սիսիանի շրջանից մասնակցել է 5000 մարդ, որից 2500-ը զոհվել են[3]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Մեղրու շրջանից ռազմաճակատ են մեկնել ավելի քան 1800 մարդ, որից զոհվել են շուրջ 1000-ը[4]:

Այսպիսով՝ Սյունիքի 4 շրջաններից 1941-1945 թթ. ռազմաճակատ են մեկնել 22946 մարդ, որոնցից զոհվել են 10690-ը:

Սյունիքի զավակների ակտիվ մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին արտահայտվել է ոչ միայն ռազմաճակատին

---

[1] Կիմենար Հարությունյան. Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 204:

[2] Էդուարդ Զոհրաբյան, Համլետ Միրզոյան, Գորիսի հանրագիտարան, Ե., «Վավերիներ» հրատ. 2008, էջ 236. 110:

[3] Հ.Ս. Առաքելյան. Սիսիան (տեղեկատու-ուղեցույց), Ե., ՀԿԿ Կենտկոմի հրատ., 1987, էջ 28:

[4] Հուշամատյան, հ. 3, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, էջ 534-554:

22946 մարդ զինվորագրելով ու 10680 նահատակներով, այլև մարտի դաշտում ցուցաբերած հերոսությամբ: Ֆաշիստական Գերմանիայի և նրա խամաճիկ պետությունների դեմ մղած մարտերում կատարած սխրանքների ու դրսևորած խիզախության համար ավելի քան 10000 սյունեցիներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ անօրինական սխրանքներ կատարած 12 քաջորդի արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման. Կապանի շրջանից՝ Ավետիսյան Հունան Մակիչի (գյուղ Ծավ), ավագ սերժանտ, Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային վաշտի դասակի հրամանատարի օգնական (հետմահու), Հարությունյան Մուշեղ Աղաթելի (գյուղ Գեղանուշ), գվարդիայի եֆրեյտոր, 67-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 201-րդ գվարդիայի հրաձգային գնդի ավտոմատավոր (հետմահու), Աղամիրյան (Աղամիրով) Գոգա Գրիգորի (գյուղ Նորաշենիկ), կապիտան հեռահար գործողության ավիացիայի 5-րդ ավիադիվիզիայի 337-րդ ավիագնդի էսկադրիլիայի հրամանատար, Հակոբյան Ռուբեն Ղազարի (Իջևանի շրջնի Այգեհովիտ գյուղից, մինչև պատերազմը և հետո աշխատում էր Կապանում), գվարդիայի լեյտենանտ, 3-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 9-րդ գվարդիական հրաձգային գնդի դասակի հրամանատար. Գորիսի շրջանից՝ Առաքելյան Սուրեն Սմբատի (գյուղ Տաթև), ավագ սերժանտ, Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի 1-ին գնդացրային վաշտի ջոկի հրամանատար (հետմահու), Արզումանյան Գուրգեն Միրզայի (գյուղ Խնձորեսկ), գվարդիայի լեյտենանտ, 14-րդ գվարդիական հեծյալ դիվիզիայի 54-րդ գվարդիական հեծյալ գնդի էսկադրոնի հրամանատար (հետմահու), Կալուստով (Գալստյան) Գրիգոր Շահումի (գյուղ Քարահունջ), գվարդիայի գնդապետ, 11-րդ գվարդիական տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ (հետմահու), Սարգսյան (Սարկիսով) Արամայիս Ասատուրի (գյուղ Տեղ), գվարդիայի եֆրեյտոր, 51-րդ գվարդիական (նախկին Հայկական 76-րդ) հրաձգային դիվիզիայի 158-րդ հրաձգային գնդի

3-րդ գումարտակի գնդացրային հաշվարկի հրամանատար (հետմահու): Հետպատերազմյան տարիներին (26.04.1971 թ.) Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել նաև գնդապետ Խորհրդային Միության վաստակավոր փորձարկող - օդաչու Էդուարդ Վահանի Յոլյանին (ք. Գորիս, ծնվ. 1926 թ.), որը տարիքի պատճառով չի մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Սիսիանի շրջանից՝ Մկրտումյան Սամսոն Մովսեսի (գյուղ Բռնակոթ), կապիտան 230-րդ գրոհային ավիադիվիզիայի 805-րդ գրոհային ավիագնդի էսկադրիլիայի հրամանատար (հետմահու), Իսրայելյան Լիպարիտ Միրզայի (գյուղ Բռնակոթ), գվարդիայի սերժանտ 110-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի առանձին կապի վաշտի հեռախոսավար, Մանուկյան Անդրանիկ Ալեքսանդրի (գյուղ Բնունիս), գվարդիայի կապիտան, 1-ին գվարդիական տանկային բրիգադի հետախուզության պետ, Առուստամյան (Առուստամով) Գևորգ Արկադիի (գյուղ Շաղաթ), գվարդիայի ավագ լեյտենանտ, 7-րդ գվարդիական հեծյալ գնդի շտաբի հետախուզության սպա (հետմահու): Խնձորեսկցի գվարդիայի ավագ սերժանտ Գրիգոր Ավանեսի Գրիգորյանը պարգևատրվելով Փառքի շքանշանի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանով, դարձավ զինվորական քաջության ամենահեղինակավոր շքանշանի լրիվ ասպետ, որի իրավունքները օրենքով հավասարեցված են Խորհրդային Միության հերոսի իրավունքներին:

Հայրենական մեծ պատերազմի մասնակից սյունեցիներից 9 հոգու շնորհվել է գեներալի կոչում, որոնցից Բագրատ Իսահակի Առուշանյանին գեներալ-լեյտենանտի (Գորիսի շրջանի Վերիշեն գյուղից), Սերգեյ Եսայու Կարապետյանին (Խնձորեսկից), Մուշեղ Մինասի Մինասյանին, (Գորիս քաղաքից), Համո Սերգեյի Յոլյանին, Աշոտ Սարգսի Սարգսյանին (Սիսիանի շրջանի Աշոտավան գյուղ, հետմահու), Ռաֆիկ Միքայելի Կարապետյանին (Սիսիանի շրջանի Բնունիս գյուղից), Սերգեյ Անդրեյի Մեսրոպյանին (Մեսրոպով, Կապանի շրջանի Ագարակ գյուղից), Խորեն Հովհաննեսի Գրիգորյանին (Կապանի շրջանի Սևաքար գյուղից) և Տիգրան Մելիքսեթի Մելքումյա-

նին (Մեղրիից) գեներալ-մայորի կոչում:

Սյունեցի գեներալներն ու սպաները Հայրենական մեծ պատերազմի տարիներին աչքի ընկան նաև իրենց զորավարական բարձր ունակություններով և զբաղեցրած հրամանատարական պատասխանատու պաշտոններով: Նրանցից Բագրատ Առուշանյանը պատերազմի տարիներին եղել է 12-րդ բանակի, ապա և 56-րդ առանձին բանակի շտաբի պետ, 4-րդ հարվածային բանակի հրամանատարի տեղակալ, ապա 11-րդ գվարդիական հրաձգային կորպուսի հրամանատար: Գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը տարբեր ժամանակներում եղել է 183-րդ, 174-րդ (46-րդ գվարդիական) և 146-րդ հրաձգային դիվիզիաների հրամանատար: Նրա հայրենակից գնդապետ Նրեսես Փարսիի Բալոյանը պատերազմի տարիներին վարել է 20-րդ բանակի թիկունքի պահպանության զորքերի պետի տեղակալի, ապա պետի, 1-ին Մոսկովյան մոտոհրաձգային դիվիզիայի հետախուզության պետի, նույն դիվիզիայի 6-րդ հրաձգային գնդի, 146-րդ հրաձգային դիվիզիայի, ապա Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի պաշտոնները: Պատերազմի առաջին օրերին 216-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարն էր գնդապետ Աշոտ Սարգսյանը, որը հերոսաբար զոհվեց 1941 թ. հուլիսի 17-ին: Նրա եղբայրը՝ մայոր (հետագայում գնդապետ) Անդրանիկ Սարգսյանը պատերազմի սկզբին եղել է Հյուսիսարևմտյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնական, 1942 թ. փետրվարի 23-ից մինչև հոկտեմբերի 1-ը՝ Հայկական 89-րդ հրաձգային, 1942 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1943 թ. մարտի 10-ը՝ 151-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: Պատերազմի տարիներին գվարդիայի փոխգնդապետ Նավասարդ Թևանի Հարությունյանը (Կապանի շրջանի Շիշկերտ գյուղից) եղել է 21-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի հրամանատար (զոհվել է 1944 թ. հունվարի 10-ին), իսկ գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Մուշեղ Մինասի Մինասյանը՝ 32-րդ տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ: Գնդերի հրամանատարներ են եղել մայոր (հետագայում՝

գնդապետ) Մուշեղ Համբարձումի Կարապետյանը (Կապանի շրջանի Վերին Խոտանան գյուղից), 42-րդ կազակային հեծյալ գնդի, գվարդիայի փոխգնդապետ Անդրանիկ Հայրապետի Ղահրամանյանը (Գորիսի շրջանի Քարահունջ գյուղից),310-րդ գվարդիայի հրետանային գնդի, գնդապետ Երվանդ Աղաջանի Կարապետյանը (Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղից), 390-րդ հրաձգային գնդի, գվարդիայի մայոր (հետագայում՝ գնդապետ), Վազգեն Բախշիի Արզումանյանը (Կապանի շրջանի Քաջարան քաղաքից), 111-րդ գվարդիական հրաձգային գնդի, գվարդիայի մայոր Արշակ Ծատուրի Տեր-Զաքարյանը (ք. Մեղրի, 10-րդ գվարդիայի օդադեսանտային գնդի հրամանատար, զոհվել է 1944 թ. նոյեմբերի 30-ին Հունգարիայում) և մայոր Մկրտիչ Պետրոսի Միխայելյանը (Մեղրիից) եղել է 611-րդ կործանիչ հակատանկային հրետանային գնդի հրամանատար, զոհվել է 1943 թ. փետրվարին 7-ին Կուրսկի մարզում և այլոք:

Հայրենական մեծ պատերազմում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև թիկունքում աշխատող սյունեցիները՝ Կապանի պղնձահանքային արդյունաբերության հանքափորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները, Սիսիանի, Գորիսի և Մեղրու գյուղատնտեսության, մշակույթի և առողջապահության բնագավառ աշխատավորները: Չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին, ռազմաճակատից անընդհատ ստացվող հարազատների մահվան բոթը գուժող «սև թղթերին», սյունեցիների թիկունքում կատարած հերոսական աշխատանքի շնորհիվ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք, տարեցները ու դպրոցականները, Սյունիքը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, որտեղ ամեն ինչ արվում էր ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար:

* * *

Մենք այսպես մանրամասն խոսեցինք Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում հայ ժողովրդի և իմ հայրենի Սյունիքի զավակների դրած ավանդի մասին, որպեսզի ընթեցողը

ընդհանուր պատկերացում կազմի մեր գրքի հերոսների՝ Մինասյան եղբայրների ու նրանց ընկերների կատարած սխրանքների մասին: Իմ գրքի հերոսները ինձ համար հարազատ մարդիկ են՝ իմ քեռիները, որոնց կերպարները ինձ համար կարևոր օրինակ են հանդիսացել դառնալ Հայրենական մեծ պատերազմի հայ ժողովրդի մասնակցության տարեգիր, ավելի քան 50 տարի շարունակ պարբերաբար աշխատել ԽՍՀՄ ապա Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության (Մոսկվայի մարզ, քաղաք Պոդոլսկ) և ռազմածովային նավատորմի պատմության (Լենինգրադի մարզ, քաղաք Գատչինա) կենտրոնական արխիվներում նորահայտ փաստական նյութերի հիման վրա լուսաբանել ֆաշիստական Գերմանիայի և նրա կամակատար երկրների դեմ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը, հրատարակել ավելի քան 50 մենագրություն, արխիվային փաստաթղթերի ժողովածուներ, պատերազմում զոհվածների ցուցակ՝ հուշամատյանները:

Քեռիներս Անդրանիկ Օնիկ և Պարգև Մինասյանները, ծնվել են Հայաստանի հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Շիկահող գյուղում:Գյուղը գտնվում է Կապան քաղաքից 25 կմ հեռավորության վրա: Շիկահող գյուղը հիշատակում է 13–րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» գրքում՝ Շիկահողք անունով, որը հարկատու էր Տաթևի վանքին և գտնվում էր Սյունիքի Կովսական գավառում: Չնայած պաշտոնապես գյուղը հիշատակվում է 13–րդ դարից, սակայն գյուղի տարածքում կան հին բնակավայրի ավերակներ, որոնք վերաբերում են Քրիստոսից առաջ երկրորդ հազարամյակին: Շիկահողը գտնվում է գեղատեսիլ, անտառապատ մի վայրում, որի միջով հոսում են երկու գետակներ, գյուղի թիկունքում վեր է խոյանում Բերդի քար սարն իր հմայիչ տեսքով: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 980 մետր բարձրության վրա, բարեխառն կլիմայական գոտում, Շիկահող գետի հովտում է

[1] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Եր., «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 402:

գտնվում հանրահայտ սոսիների պուրակը, որն այսօր ընդգրկված է Շիկահողի արգելոցի տարածքում: Անտառում աճում է կաղնի, թեղի, հացենի, հոնի, սոսենի, շագանակենի, սզնու և զկռենու բազմաթիվ տեսակներ: Այգիները հարուստ են պտղատու ծառերով՝ խնձորի, թթենի, տանձենի, ընկուզենի, թզենի, փշատի, ծիրանի, դեղձի, փոշտնի, սալորի , նռնենի, անտառները հարուստ են հատկապես մասրենու և մոշի թփերով, մորու բացատներով և այլն: Գետակները հարուստ էին ձկան տեսակներով, հատկապես կարմրախայտով: Կենդանական աշխարհը շատ հարուստ էր. անտառներում կարելի էր հանդիպել արջի, գայլի, շնագայլի, աղվեսի, նապաստակի, վարազի, փորսուղի, սկյուռի, հազվադեպ կարելի էր տեսնել հովազի, լուսանի, բեզոարյան այծերի, եղնիկի (կխտարի) և այլն: Շիկահողի բնաշխարհը հարուստ էր նաև վայրի թռչուններով. կաքավ, տատրակ, մոշահավ, ճնճղուկ, ծիծեռնակ, ագռավ, բազե և այլն:

Շիկահողի արգելոցը ստեղծվել է 1958 թվականին: Գյուղում կանգուն է 17-րդ դարում կառուցված եկեղեցին, 1887 թ. կառուցված կամարակապ կամուրջը: Գյուղի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Դեռևս 19-րդ դարի առաջին կեսերին Ֆրանսիայի հանքարդյունաբերողների կողմից օգտագործվել են գյուղի մոտ գտնվող պղնձի հանքերը, որոնց ավերակները պահպանվել են մինչև մեր օրերը Շիկահողի հանդերում աճում են ցորենի, գարու և հաճարի տարբեր տեսակներ, ծխախոտ, այգիներում աճեցնում են լոբի, կարտոֆիլ, եգիպտացորեն, լոլիկ, վարունգ, դդում, սիսեռ, ճակնդեղ, սեխ, ձմերուկ և այլն: Բնակիչները բացի այգեգործությամբ և բանջարաբոստանագործությամբ զբաղվել են նաև անասնապահությամբ. կովեր, եզներ, ոչխարներ, այծեր, ձիեր, էշեր, ջորիներ, թռչնաբուծությամբ՝ հավեր, հնդկահավեր և այլն: Երկու գետակների միավորման վայրերում ստեղծված փոքրիկ լճակները ամռանը հանդիսանում էին երեխաների ու պատանիների սիրված լողատեղերը: Ահա այսպիսի հրաշագեղ միջավայրում են մեծացել իմ քեռիները, որոնցից երկուսը՝ Անդրանիկն ու Օնիկը Հայրենական մեծ պատերազմին

մասնակցել են սկզբից մինչև վերջ: Այդ գյուղում են ծնվել ու մեծացել հայրս ու մայրս, երկու քույրերս ու եղբայրս: Ես ծնվել եմ Կապանում, բայց դպրոցական արձակուրդների օրերին ամառը միշտ անց եմ կացրել Շիկահողում՝ Նազանի տատիկս, Փեդրո պապիկս ու Սոֆիա տատիկիս մոտ, խաղացել իմ հասակակից երեխաների հետ, մտերմացել նրանց հետ, որոնցից շատերը Հայրենական մեծ պատերազմում կորցրել էին իրենց հայրերին: 1939 թ.մարդահամարի տվյալներով Շիկահողը ուներ 870 բնակիչ: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 260 շիկահողցի, որոնցից 97-ը զոհվել են ռազմաճակատում: 1967 թ. հոկտեմբերի 15-ի գյուղի հրապարակում հանդիսավոր կերպով բացվեց Հայրենական մեծ պատերազմում զոհված շիկահողցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը: Հուշարձանը կառուցված է բազալտի հիմքի վրա մարմարե պատվանդանով: Կոթողի բարձրությունը 7 մետր է, երեսապատված է մարմարյա սալիկներով: Գագաթի աստղից քիչ ներքև փորագրված է՝ 1941-1945, իսկ ցածում՝ «Հայրենական մեծ պատերազմում զոհված շիկահողցիների հիշատակին համագյուղացիներից. 1967 թ.»: Հուշարձանի կողքին տեղադրված է զոհվածների մարմարյա շիրմաքարեր, որոնց վրա փորագրված են 97 զոհվածների անունները (հուշարձան կոթողի հեղինակն է Ռ. Անդրեասյանը. մարմարյա սալիկների տեղափոխմանը Երևանից՝ Շիկահող,հուշարձանի վերջնական ավարտի աշխատանքներին շուրջ մեկ ամիս մասնակցել եմ ես):

Շիկահողը հանդիսացել է պետական քաղաքական գործիչ, ազգային բարերար Պողոս Նուբար փաշայի նախնիների ծննդավայրը, որտեղից նրանք հեռացել են Զմյուռնիա, ապա Եգիպտոս, Սուդան, Ֆրանսիա: Այժմ էլ գյուղի եկեղեցու բակում պահված են Մելիք-Նուբարյանների ազգականների գերեզմանները: Նուբար փաշան 1866-1879 և 1881-1888-ին եղել է Եգիպտոսի արտաքին գործերի նախարար, 1878-1879, 1864-1889 և 1894-1895 թթ.[1] Եգիպտոսի վարչապետ: Նրա որդին՝ Պողոս Նուբարը 1906 թ. հիմնադրել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:Նա որպես Ազգային

[1] Ով ով է. Հայեր. կենսագրական հանրագիտարան, հատոր 2-րդ, Ե., ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարան» հրատ, 2007, էջ 230:

պատվիրակության նախագահ, 1919-1920 թթ. մասնակցել է Փարիզի հաշտության կոնֆերանսին՝ նպատակ ունենալով հասնել անկախ և միացյալ Հայաստանի ստեղծմանը: Ծավալել է ազգանպաստ գործունեություն, բացել հիվանդանոցներ, դպրոցներ, մշակութային կենտրոններ, հրատարակել պարբերականներ և այլն[1]: Շիկահողի ծնունդ էր նաև 1918 թ. մայիսի 24-28-ը Ղարաքիլիսայի ճակատամարտի հերոս, հրետանու հրամանատար կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը, որը նույնպես Մելիք-Նուբարյանների տոհմից էր: Այդ նշանավոր տոհմից էր նաև գիտության նշանավոր գործիչ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որը գործել է Ինդոնեզիայում, Հնդկաստանում, Չինաստանում և Հայաստանում, զբաղվել է բանասիրությամբ արվեստաբանությամբ ու փիլիսոփայությամբ: Շիկահողում են ծնվել կենսաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Աշոտ Իվանի Մինասյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մանվել Մակիչի Սիմոնյանը, տեխնիկական գիտությունների թեկնածուներ Գարեգին Սարգսի Մելքոնյանը, Կլիմենտ Ենոքի Հակոբյանը, քիմիական գիտությունների թեկնածու Համլետ Սարգսի Մելքոնյանը, Լենինի շքանշանակիր, ստախանովական հանքափոր Արամ Գաբրիելի Մարտիրոսյանը, նրա որդին՝ գնդապետ Ալիկ Արամի Մարտիրոսյանը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, անվանի հանքափոր Համլակ Մարտիրոսյանը, գնդապետ Արթուր Կամոյի Հարությունյանը:Շիկահողցու զավակներ են ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Գարեգինի Մելքոնյանը (Մոսկվա), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Աշոտի Մինասյանը (Երևան), «Շարական» և «Գանձեր» համույթների գեղարվեստական ղեկավար Դանիել Երաժիշտը (Գրիշա Արշավիրի Դանիելյանը, Երևան), պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը (Երևան), տեխնիկական գիտությունների թեկնածու Ռոլանդ Շմավոնի Մինասյանը (Բաքու, Երևան) և ուրիշներ:

---

[1] *Նույն տեղում. էջ 340 (իմ հորական գծով պապիս՝ Ռուբենի հոր՝ Հարությունի մայրը՝ Մարգարիտը, Մելիք-Նուբարյանների տոհմից էր):*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Մինասյան եղբայրներից ավագը՝ Անդրանիկը ծնվել է 1914 թ. հուլիսի 7–ին Շիկահողում: Հայրը՝ Փեղրով Աղաջանի Մինասյանը բնիկ շիկահողցի էր: Մինչև գյուղում խորհրդային կարգեր հաստատելը նա սովորել էր կար ու ձև անել, ձեռք էր բերել «Ջինգեր» մակնիշի գերմանական կարի մեքենա, որն աշխատում էր ոտքերի օգնությամբ և կարում էր տարբեր հաստության կտորներ: Մայրական գծով պապիկս ուներ նաև ջորի, որի վրա հաճախ կարի մեքենայով շրջում էր մոտակա գյուղերում և զանազան հագուստ կարում կանանց, երեխաների և տղամարդկանց համար: Անդրանիկի մայրը՝ Սոֆիան ծնվել էր Շիկահողի ամենամոտիկ գյուղ Սրաշենում և տնային տնտեսուհի էր: Երբ 1921 թ. գյուղում հաստատվեց խորհրդային կարգեր պապս մինչև 1929 թ. մենատնտես էր, զբաղվում էր հողագործությամբ և իր արհեստով, երբ ստեղծվեց կոլտնտեսությունը նա մտավ կոլտնտեսության մեջ և նվիրվեց հանրային տնտեսության զարգացման գործին: Այդ տարիներին գյուղում կառուցվեցին հիվանդանոց, միջնակարգ դպրոց, ակումբ–գրադարան, խանութ, հյուրատուն և այլն: Անդրանիկը սովորում էր գյուղի միջնակարգ դպրոցում, միաժամանակ օգնում հորը գյուղում տնտեսական աշխատանքում: Յոթնամյակն ավարտելուց հետո նա մեկնում է Բաքու՝ հորեղբոր Բագրատ Աղաջանի Մինասյանի մոտ՝ ուսումը շարունակելու նպատակով: Բագրատ Մինասյանը 1918 թ. կոմունիստական կուսակցության անդամ էր, ապրում էր Բաքվի Սաբունչի բանվորական ավանում, աշխատում նավթարդյունաբերության բնագավառում: Նա ակտիվորեն

մասնակցել էր Բաքվի կոմունայի պաշտպանության մարտերին Կարմիր գվարդիայի շարքերում: Անդրանիկը ուսման հետ զուգահեռ աշխատում է հորեղբոր մոտ, 1932 թ. ընդունվում կոմունիստական կուսակցության շարքերը, կատարում կուսակցական պատասխանատու առաջադրանքներ:

Ուսումն առնելուց և որոշ ժամանակ Բաքվում աշխատելուց հետո Անդրանիկը վերադառնում է հայրենի Շիկահող՝ ծնողների մոտ և աշխատում գյուղի միջնակարգ դպրոցում, որպես ռուսաց լեզվի, աշխարհագրություն և պատմություն առարկաների ուսուցիչ, այնուհետև հարևան Ծավ գյուղի դպրոցի տնօրեն: 1939 թ. դեկտեմբերին Անդրանիկ Մինասյանը 200 կապանցիների թվում զորակոչվում է Կարմիր բանակ և զինվորական ծառայության անցնում Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգի 6–րդ հրաձգային դիվիզիայի 84–րդ հրաձգային գնդի 1–ին գումարտակի 1–ին հրաձգային վաշտում, որպես քաղդեկի տեղակալ: Նույն գումարտակում էին ծառայում համազյուղացիներ՝ Թավաղի Արշակի Բաղդասարյանը, Հրաչիկ Հովհաննեսի Բախշյանը, Իշխան Սարգսի Հարությունյանը, Գարեգին Հովսեփյանը, Աղունց Արամայիսը, Սրապիոն Դավթյանը: Երբ 1941 թ. հունիսի 22–ի վաղ առավոտյան ժամը 4–ն անց 50 րոպեին ֆաշիստական Գերմանիան հանկարծակի հարձակվեց Խորհրդային Միության վրա և սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, առաջին իսկ պահից թշնամու ծանր հարվածը իր վրա վերցրին Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգի զորքերը, որոնց թվում նաև Բրեստի ամրոցում տեղակայված 84–րդ հրաձգային գունդը: 1941 թ. հունիսի 22–ից մինչև հուլիսի 20–ը գնդի անձնակազմը հերոսաբար դիմազրավեց հակառակորդի թվով մի քանի անգամ գերազանցող ուժերին՝ կաշկանդելով վերջինների առաջխաղացումը: Բրեստի ամրոցի կայազորի պաշտպանների մեծ մասը զոհվեց մինչև վերջ հավատարիմ մնալով զինվորական երդմանը, իսկ մի մասն էլ վիրավոր կամ ուժասպառ վիճակում գերվեց թշնամու կողմից: Ամրոցի պաշտ-

պանների շարքերում մարտնչում էին Խորհրդային Միության ավելի քան 30 ազգությունների և ժողովուրդների ներկայացուցիչներ, որոնց թվում հայ ժողովրդի 500 զավակներ: Նրանցից 200–ը կապանցիներ էին, 76–ը՝ նախկին մանկավարժներ: Երբ սկսվեց պատերազմը 84–րդ հրաձգային գնդի 1–ին գումարտակը գտնվում էր Բրեստի ամրոցից դուրս՝ դաշտային պարապմունքների համար նախատեսված հրաձգարանում, գումարտակի հրամանատարի փորձը մարտերով ճեղքել հակառակորդի օղակը և միանալ ամրոցում գտնվող գնդի հիմնական ուժերին, անհաջողությամբ ավարտվեց, քանի որ թշնամուն արդեն հաջողվել էր ամրոցը վերցնել տասնյակ անգամ շատ զորքերի ու տեխնիկայի շրջափակման մեջ: Ուստի գումարտակի հրամանատարը ենթարկվելով դիվիզիայի շտաբից եկած հրամանին սկսեց կազմակերպված կերպով նահանջել Կոբրինի ուղղությամբ, որը գտնվում էր Բրեստից արևելք Բրեստ–Մինսկ խճուղու վրա: Նահանջի ճանապարհին գումարտակը մի քանի անգամ հայտնվեց հակառակորդի ինքնաթիռների ռմբակոծության, տանկերի ու հրետանու կրակի տակ: Երբ հունիսի 23–ին Կոբրին քաղաքը գրավվեց գերմանական զորքերի կողմից, Ա.Ֆ. Մինասյանի գումարտակը մարտերով նահանջեց Դրոգոչինի ուղղությամբ (Կոբրինից արևելք՝ Կոբրին – Պինսկ խճուղու վրա) և առավոտյան պաշտպանություն բռնեց այնտեղ: Հունիսի 25–ի առավոտյան ժամը 10–ին հակառակորդը վերսկսեց հարձակումը: Գումարտակի անձնակազմը կազմակերպված հակահարված հասցրեց նրան և մինչև երեկոյան ժամը 20–ը պաշտպանեց գրաված դիրքերը: Դրանից հետո գումարտակը ստիպված էր տեղի տալ հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշմանը, թողնել պաշտպանական դիրքերը և նահանջել Իվանովո–Մոլոտկովիչի–Պինսկ ուղղությամբ:

Պատերազմի առաջին օրերին տեղի ունեցած իրադարձությունների մասին Ա.Ֆ. Մինասյանը հետագայում նամակով պատմում է Կարերյան ռազմաճակատում մարտնչող եղբորը՝ Օնիկին:

«Կարոտալի եղբայր Օնիկ ջան։ Երկար ժամանակ ձգտում էի քո հասցեն իմանալ, բայց չէր հաջողվում։ Իմ տեղափոխմանս հետևանքով նույնիսկ տնից իմ նամակների պատասխանը չէի ստանում և ամբողջ ժամանակաշրջանում մտածում էի քո մասին գոնե մի տեղեկություն ստանալու։ Դարան մտած թշնամին խեղաթյուրեց մեր կյանքը, մեզ չվիճակվեց անցած աշնանը հանդիպել հայրենիքում շարունակելու ընտանեկան քաղցր կյանքը։ Պատերազմի ալիքը գցեց մեզ մի տեղից մյուս տեղը, որի պատմությունը երկար է։ Անկասկած նույն մտատանջությունները քեզ էլ են տանջում իմանալու իմ մասին և գուցե հայտնի կլինի իմ գլխով անցած պատմությունը։ Իմ այս նամակով ցանկանում եմ հայտնել քեզ, որ ես ողջ և առողջ եմ չնայած կայծակնային առաջին հարվածը ես ստացա։ Պատերազմն սկսելու օրից մենք գտնվում էինք դաշտային պարապմունքում։ Հակառակորդի կողմից սահմանը խախտելուց հետո մենք սկսեցինք դիմադրել և մեծ դժվարությունների հանդիպելով, թշնամուն հակահարված տալով հետ նահանջեցինք։ 5-6 անգամ ընկանք թշնամու օղակի մեջ, ավինամարտի միջոցով հաջողվեց ազատվել թշնամու օղակից, թե ինչպիսի սարսափելի պատերազմ էր այդ մասին ավելորդ եմ համարում գրել քանի որ քեզ հանդիպելուց հետո ավելի մանրամասն կպատմեմ։ Թշնամին ավինամարտերի ժամանակ փսխուստի է դիմել մարտադաշտում թողնելով հարյուրավոր սպանված զինվորներ ու սպաներ։ Սակայն նա նրանոր ուժեր նետելով շարունակում է հարձակումը և ստիպում մեզ նահանջել։ Արևմտյան Բելոռուսիայի Պինսկ քաղաքի տակ մի անհավասար մարտում մի քանի գնդացրորդների հետ ես մասնակցեցի հակառակորդի մեկ գումարտակի հետ դաժան մենամարտին, որը տևեց 3 ժամ։ Մենք մի քանի հոգով կարողացանք ետ մղել թշնամուն, մինչև մեր գումարտակի հիմնական ուժերը բարեհաջող կարողանում են անցնել գետի մյուս ափը։ Մարտի վերջում թշնամու դիպուկահարի կրակից ես ծանր վիրավորված եմ ձախ թևից և ուսից, բայց վիրա-

կապելով վերքս և զսպելով ցավս ես անտառներով ու ճահիճներով երկու օր հետո կարողանում եմ հասնել իմ գումարտակին: Դրանից հետո երեք օր շարունակ մասնակցում եմ մարտերին, սակայն վերքս ծանրանալուց հետո ինձ սանիտարական գնացքով տեղափոխում են հոսպիտալ: Ճանապարհին մեր գնացքը մի քանի անգամ ընկավ թշնամու ռմբակոծության տակ և վերջապես հաջողվում է հասնել Օրյոլ քաղաք և տեղավորվել հոսպիտալում: Մոտ մեկ ամիս ու հինգ օր բուժվելուց հետո օգոստոսի 11–ին դուրս եմ գրվում հոսպիտալից և նշանակում ստանում Բրյանսկի ռազմաճակատում՝ շինարարական մի գումարտակում: Բրյանսկից նահանջելուց հետո (Բրյանսկ քաղաքը գերմանական զորքերը գրավում են 1941 թ. հոկտեմբերի 6–ին – Կ.Հ.) մեզ տեղափոխում են Պենզա քաղաք (որտեղ հասնում ենք հոկտեմբերի 31–ին) հատուկ աշխատանք կատարելու համար: Երկար ժամանակ այնտեղ մնալուց հետո 1942 թ. հունվարի 25–ին մեզ տեղափոխում են Տամբովի մարզի Մարշանսկ քաղաք: Ես այնտեղ նշանակվում եմ սակրային գումարտակի վաշտի քաղղեկ և այնտեղ մնում մինչև մարտի 5–ը: Այնուհետև մեր գումարտակը ուղարկում են դեպի արևմուտք, թե որտեղ, հայտնի չէ, այնուամենայնիվ կաշխատեմ տեղ հասնելուց նամակ գրել քեզ»[1]:

Այժմ անդրադառնանք Անդրանիկի եղբոր Օնիկի ճակատագրին:

Օնիկ Մինասյանը ծնվել է 1917 թ. նոյեմբերի 7–ին Կապանի շրջանի Շիկահող գյուղում: Տարրական կրթություն ստացել է գյուղի դպրոցում, ապա ուսումը շրունակել Բաքվում՝ հորեղբայր Բագրատի մոտ:

1931 թ. նա վերադարձել է ծնողների մոտ, ապա աշխատել Կապանի փոստատանը սկզբում որպես հեռագրիչի օգնական,

---

[1] *Նամակը ամբողջովին ես հրատարակել եմ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1978 թվի 3-ում, էջ 17-18 (Անդրանիկը ամբակազմ, համարյա 2 մետր հասակ ունեցող գրամատոր էր):*

ապա հեռագրիչ: 1936 թ. Օնիկը դարձյալ մեկնում է Բաքու և ուսումը շարունակում թիվ 22 երեկոյան դպրոցում, միաժամանակ ցերեկները աշխատում որպես հեռագրիչ: 1938 թ. հոկտեմբերին նա Բաքվից զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և ծառայել Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգում, մասնակցել Բելոռուսիան սպիտակ լեհերից ազատագրելու գործողությանը:

1939 թ. Օնիկը սովորել և ավարտել է կրտսեր հրամանատարների գնդային դպրոցը Պոլոցկում և ստացել քաղղեկի տեղակալի կոչում: 1939 թ. նոյեմբերի 30–ից մինչև 1940 թ. մարտի 13–ը քաղղեկի տեղակալ Օնիկ Մինասյանը ակտիվորեն մասնակցել է Խորհրդա–ֆիննական պատերազմին՝ Լենինգրադյան զինվորական օկրուգի 168–րդ հրաձգային դիվիզիայի շարքերում, ձմեռային ծանր պայմաններում հաղթահարել Մաններհայմի պաշտպանական անառիկ գիծը: Պատերազմից հետո նա սովորում և ավարտում է դիվիզիայի կուսակցական դպրոցը, 1941 թ. փետրվարին անդամագրվում կոմունիստական կուսակցությանը: Հայրենական մեծ պատերազմը Օնիկ Մինասյանը դիմավորում է Լենինգրադի մատույցներում և 208–րդ առանձին զենիթային դիվիզիոնի կազմում մասնակցում քաղաքի հերոսական պաշտպանության առաջին մարտերին: Այնուհետև, իր զորամասի հետ, Մինասյանը տեղափոխվում է Կարելյան ռազմաճակատ և Անդրբևեռային երկրամասի բնակլիմայական բարդ պայմաններում մարտնչում գերմանաֆաշիստական զավթիչների ու նրանց դրածո սպիտակ ֆիններին դեմ:

Հետաքրքիր է պատերազմի հենց առաջին օրը՝ 1941 թ. հունիսի 22–ին Օնիկի գրած նամակը ծնողներին: «Սիրելի հայրիկ և մայրիկ ջան,– գրում է նա,– Այսօր ճամբարից ճանապարհվում ենք դեպի Սորտավալա[1]: Թե հետագայում որտեղ կլինենք, այդ առայժմ հայտնի չէ: Չափազանց խնդրում եմ մեր մասին բոլորովին չմտածեք: Ես և Անդրանիկը որտեղ էլ լինենք, միշտ լավ և առողջ ենք լի-

[1] *Սորտավալա քաղաքը գտնվում է Լադոգա լճի հյուսիսային ափին:*

նելու: Պատերազմի ժամանակ գուցե մեր նամակները ուշ հասնեն: Դրա համար բոլորովին չանհանգստանաք, ուժերիս չափ կաշխատեմ հաճախակի կապ պաշտպանել նամակով: Այժմ գրեցեք հին հասցեով, մինչև մեր հիմնական ռազմաճակատի հասցեն ուղարկելը: Միշտ եղեք ուրախ: Մենք միշտ պատրաստ ենք մեր ամբողջ կյանքը նվիրել մեծ հաղթանակի համար:

Սիրելի հայրիկ և մայրիկ ջան:

Դուք պետք է հպարտ լինեք, որ ձեր զավակները այսօր կռիվ են մղում թշնամու դեմ՝ վաղվա էլ՛ ավելի երջանիկ ու սքանչելի կյանքի համար Կարմիր բանակը ջարդուփշուր կանի մեր հայրենիքի ոխերիմ թշնամիներին: Մենք, անշուշտ, փառապանծ հաղթանակով կվերադառնանք տուն. ջերմ համբույրներով, ձեր՝ Օնիկ»[1]:

Քաջարի հայորդին Կարելյան ռազմաճակատում ցուցաբերած սխրանքների համար արժանանում է կառավարական պարգևների ստանում մայորի զինվորական կոչում, նշանակվում նույն դիվիզիոնի հրամանատարի քաղաքական գործով տեղակալ:

1944 թ. փետրվարի 23–ի թվագիր մեկ այլ նամակում Օնիկ Մինասյանը գրում է ծնողներին. «Սիրելի ծնողներ: Հայտնում եմ ձեզ, որ ես շատ լավ եմ, ողջ և առողջ: Այսօր փետրվարի 23–ին մեր ռազմաճակատի շտաբից հրաման ստացվեց, համաձայն որի, ինձ շնորհվում է մայորի զինվորական կոչում: Իհարկե, այդ նոր զինվորական կոչումն ինձ ավելի պատասխանատու է դարձնում և այն արդարացնելու համար ես պետք է շատ աշխատեմ: Կարմիր բանակի 24–րդ տարեդարձին (1942 թ. փետրվարի 23–ին ինձ շնորհվեց քաղղեկի, 25–րդ տարեդարձին՝ կապիտանի, իսկ հիմա, 26–րդ տարեդարձին՝ մայորի կոչում: Ներկայումս է՛լ ավելի եռանդով ու անդադար կաշխատեմ, որպեսզի միշտ պատվով պահեմ իմ բարձր զինվորական կոչումը և պատասխանատու աշխատանքը: Շատ լավ անցկացրինք Կարմիր բանակի 26–րդ տարեդարձը...

---

[1] *Նամակը նույնությամբ մենք տպագրել ենք «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1978 թ., թիվ 3–ում. էջ 16-17:*

Ինձ ստիպեցին երգել[1] մայրենի լեզվով, երգեցի Սայաթ–Նովայից և Թումանյանի «Անուշից»... Մինչև նամակս հասնի տուն երևի մեր գյուղում արդեն կսկսվի բացվել մանուշակը... գոնե նամակի մեջ ուղարկեք մեր լեռների ծաղիկները: Ջերմ ողջույն բոլորին: Մնամ ձեր որդի Օնիկ»[2]:

Մեկ այլ նամակով, որը մայոր Մինասյանը գրել է 1944 թ. հուլիսի 7–ին Կանդալաշկյան ուղղությունից ավագ եղբորը Անդրանիկին, գրված է. «Սիրելի Անդրանիկ; Հեռավոր հյուսիսից քեզ եղբայրական ջերմ բարևներ եմ հաղորդում: Նամակս գրում եմ այն ժամանակ, երբ մեր ռազմաճակատը ձեր ռազմաճակատի օրինակով տանում է փառապանծ հաղթանակներ[3]: Վերջապես մեր մասին կխոսի ամբողջ երկիրը: Այդ հաղթանակները ուրախացնում և ոգևորում են մեզ: Ես անձամբ ինձ ավելի ուժեղացած եմ զգում, երբ սրընթաց առաջ ենք շարժվում ճանապարհին հաղթահարելով ամեն տեսակ խոչընդոտ:

Ռազմական գործողությունների թատերաբեմը բոլորովին տարբերվում է ձեր հարավում տեղի ունեցած գործողությունների թատերաբեմից: Այստեղ ավելի շատ նման է Հայաստանի լեռների ու անտառներին... բայց տարօրինակը նա է, որ այստեղ արդեն երկրորդ ամիսն է, որ չկա գիշեր: Օրվա 24 ժամը լուսավոր է և միշտ լուսավորում է արևը... Անդրանիկ ջան! Ես գտնվում եմ իմ զորամասում և ինչ հիանալի եմ զգում: Ուժերիս ներածին չափ ձգտում եմ արդարացնել այն վստահությունը, որը դրված է իմ վրա: Կասկած չկա, որ Հիտլերի ճորտ ֆիններ շուտով կապիտուլյացիայի կենթարկվեն: Գրիր թանկագինս, շուտ–շուտ: Քեզ

[1] *Նշեմ, որ Օնիկը լավ ձայն ուներ, որը նա ժառանգել էր հորից, որը հիանալի պարում և երգում էր, մասնակցել էր շրջանային և հանրապետական օլիմպիադաների, շահել մրցանակներ: Հոր ասպրմածարար շնորհքը ժառանգել էին նաև նրա մյուս զավակները Անդրանիկը, աղջիկը՝ Բարուշկան և կրտսեր որդին՝ Պարգևը, որը վարպետորեն թառ էր նվագում և երգում, նաև հմուտ ձիասար էր:*

[2] *«Բանբեր Հայաստանի արխիվների», 1978, թիվ 3, էջ 20-21:*

[3] *Խոսքը վերաբերում է Կարելյան ռազմաճակատի 1944 թ. հունիսի 21-ի սկսած հարձակմանը, որի հետևանքով նույն թվականի սեպտեմբերի 4 ին ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Ֆինլանդիան դուրս եկավ պատերազմից:*

ցանկանում եմ երջանկություն և հաջողություն»[1]:

Բացի մայորի զինվորական կոչում ստանալուց մարտերում ցուցաբերած խիզախության և մարտական առաջադրանքները գերազանց կատարելու համար 208–րդ առանձին զենիթային հրետանային դիվիզիոնի հրամանատարի քաղաքական զծով տեղակալ մայոր Օնիկ Մինասյանը Կարելյան ռազմաճակատի 19–րդ բանակի հրամանատար, գեներալ լեյտենանտ Վ.Զ. Ռոմանովսկու 1945 թ. մայիսի 16–ի թիվ 013/Հ հրամանով պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[2]: Մայոր Մինասյանի պարգևատրման թերթիկում դիվիզիոնի հրամանատար մայոր Կարպենկոն և 19–րդ բանակի քաղբաժնի պետ գնդապետ Պոմորցևը 1944 թ. նոյեմբերի 10–ին նշել են. «Շնորհիվ ընկ.Մինասյանի համառ աշխատանքի, դիվիզիոնը Հայրենական մեծ պատերազմի ողջ ժամանակշրջանում գերազանց կերպով է կատարել իր առջև դրված մարտական առաջադրանքները և իր մարտական հաշվում ունի թշնամու խփած 18 ինքնաթիռ: Դրա մեջ իր արժանի ավանդն ունի նաև մայոր Մինասյանը: 19–րդ բանակի 1944 թ. սեպտեմբերյան հարձակվողական գործողության ժամանակ, ընկ. Մինասյանը մշտապես հայտնվել է այնտեղ, որտեղ դիվիզիոնի մարտկոցները հայտնվել են դժվարին պայմաններում և իր անձնական օրինակով, ոգևորել զենիթայիններին: Նա անձամբ մասնակցել է նաև մարտկոցների տեղակայման համար հատկացված կրակային դիրքերի նախօրոք ականազերծման խիստ վտանգավոր աշխատանքին, ղեկավարել սակրավորների գործողությունը: Շնորհիվ մայոր Մինասյանի անդուլ աշխատանքի և հմուտ ղեկավարության՝ դիվիզիոնի մարտկոցները գերազանց կարողացան կատարել իրենց առաջադրված մարտական խնդիրները և չունեցան անձնակազմի և տեխնիկայի ոչ մի կորուստ:

Հետևություն, սեպտեմբերյան գործողության ժամանակ բա-

---

[1] *«Բանբեր Հայաստանի արխիվների», 1978. թիվ 3. էջ 21:*
[2] *ՌԴ ՊՆԿԱ. ֆ. 33. գ. 690306. գ. 3559. թ. 95:*

ցառիկ լավ ղեկավարության մարտկոցների կրակային դիրքերի նախօրոք ականազերծման անձնազոհ աշխատանքի համար, մայոր Մինասյանն արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[1]:

* * *

Այժմ տեսնենք, թե ինչպես դասավորվեց մայոր Մինասյանի ավագ եղբոր Անդրանիկի ռազմաճակատային ճակատագիրը: 1942 թ. մարտի սկզբներին սակրային վաշտի քաղղեկ Անդրանիկ Մինասյանը իր գումարտակի կազմում Մարշանսկից տեղափոխվում է Վորոնեժի մարզի Զադոնսկի շրջան՝ Բրյանսկի ռազմաճակատ և մասնակցում պաշտպանական ծանր մարտերին: 1942 թ. մայիսի 12–ին եղբորը գրած նամակում Անդրանիկը նշում է. «Օնիկ ջան, ես գտնվում եմ սակրային գումարտակում և այժմ աշխատում եմ որպես վաշտի քաղղեկ... Աշխատում ենք Բրյանսկի ռազմաճակատում, մոտիկ ենք Վորոնեժին: Մեր աշխատանքի գլխավոր բնույթը ամրությունների կառուցումն է: Իմ ընկերները, նամանավանդ հրամանատարական կազմը ճարտարապետներ են և տեխնիկներ: Պետք է ասել, որ այս գումարտակում տեխնիկական գիտության ասպարեզում շատ բան սովորեցի, շատ դեպքում ոչ թե քաղաքական ղեկավարության եմ սպասարկում այլև տեխնիկական: Չնայած ժամկետի սուղ պայմաններին, վաշտը միշտ գտնվում է առաջին շարքերում: Կառավարական շքանշանակիրների թիվը կամաց–կամաց վաշտում ավելանում է: Իմ լավագույն աշխատանքի կազմակերպման համար բանակի թերթում իմ մասին գրել են, նույնիսկ վերջին ժամանակ նկարել են թերթի տալու համար քաղինֆորմացիայի ժամին: Ամեն ինչով մենք ապահով ենք, ամսեկան ստանում եմ 750 ռուբլի աշխատավարձ, որը հիմնականում ուղարկում եմ տուն: Պարգևը (Անդրանիկի կրտսեր եղ-

[1] *Նույն տեղում:*

բայրը – Կ.Հ.) և Ամասիան (փեսան՝ Բարուշկայի ամուսինը – Կ.Հ.) զորակոչվել են բանակ: Ուղարկում եմ Պարգևի հասցեն. Северо-Осетинский – АССР, г. Орджоникидзе, полевая почта № 110, литер В, Агаджанян П.Ф.: Ամասիայի հասցեն դեռ հայտնի չէ (Ամասիան այդ ժամանակ գտնվում էր Կոտայքի շրջանի Բալահովիտ գյուղում տեղաբաշխված նոր կազմավորվող Հայկական 89–րդ հրաձգային դիվիզիայի 390–րդ հրաձգային գնդի 1–ին հրաձգային գումարտակի 1–ին հրաձգային վաշտի կազմում – Կ.Հ.): Չգիտեմ նաև հորեղբայր Շմավոնի հասցեն, որը նույնպես զորակոչվել է բանակ: Եթե նրա հասցեն գիտես, անպայման ուղարկի ինձ...»:

1942 թ. սեպտեմբերի կեսերին քաղղեկ Անդրանիկ Մինասյանի ստորաբաժանումը տեղափոխվեց Մոսկվայի մարզի Նախաբինոյի շրջան՝ վերակազմավորվելու նպատակով: Այդ մասին Անդրանիկը նամակով մանրամասն հայտնում է եղբորը. «Օնիկ ջան, սեպտեմբերի 15–ին դուրս եկանք մեր հին վայրերից և ոտքով անցանք 125 կմ ճանապարհ՝ մինչև նշանակված կացարանը: Պետք է ասեմ, որ մենք այդ տարածությունը կտրեցինք երկու օրվա ընթացքում: Այնուհետև գնացքով տեղափոխվեցինք Մոսկվային մոտիկ, որտեղ սկսվեց մեր զորամասի վերակազմավորման աշխատանքները: Առաջվա նման աշխատում եմ որպես վաշտի քաղղեկ, բայց մեր նոր վաշտը անվանում են հատուկ վաշտ: Մեր տեղափոխման գլխավոր նպատակը այն է, որպեսզի վերապատրաստվենք: Պետք է ասել, որ այս տեխնիկան ինչ այժմ սովորում ենք, դա հատուկ տեխնիկա է գիտության մեջ և առաջին անգամն է ինչ գործադրվում է մեր պայմաններում: Իմ ընկերները բոլորովին նորեկներ են, որոնց հետ առաջին իսկ օրից սերտ համերաշխություն կնքեցինք: Տղաները կարծես վաղուց ինձ հետ եղբայրացել են: Մի խոսքով կյանքը ավելին փոփոխվեց: Ինձ համար ինչ սովորում ենք նորություն է, տղաները այդ խնդրում ինձ մեծ օգնություն են ցուցաբերում: Իմ աշխատանքի բովանդակությունը վերին աստիճանի պատասխանատու է... Այս շրջանում տպավորիչ օրերից մեկը դա սեպտեմբերի 27 և 28–ին էր: Վերջապես

ինձ հաջողվեց լինել Մոսկվայում, երկու օրվա էքսկուրսիայի ընթացքում շատ վայրերում եղա, մեծ տպավորություն գործեց Լենինի պետական թանգարանը, ավարի թանգարանը, Կարմիր բանակի տունը, մետրոն, Կարմիր հրապարակը, Կրեմլը, Լենինի դամբարանը և այլ վայրեր: Տպավորիչ էր նաև Իվան Գրոզնու ժամանակ կառուցած եկեղեցին, չնայած պատմությունից հայտնի էր նրա մասին, սակայն իմ սեփական աչքերով չէի տեսել: Մեծ զոհունակության արժանի է նրա կառուցող ճարտարապետը: Մոսկվայում հաջողվեց դիտել Պեպո կինոնկարը, այնտեղ դիտեցի տաղանդավոր դեմքերին, Ավետ Ավետիսյանին, Հրաչյա Ներսիսյանին և ուրիշներին: Ցուցադրեցին նաև համերգ, որտեղ երգեցին հին ռուսական երգեր, նույնիսկ ազգայնական պարերից մի շարք համարներ: Մեծ տպավորությամբ վերադարձա իմ վայրը: Այժմ ամեն օր շարունակվում է մեր ուսումնական պարապմունքները, թե որքան ժամանակ դեռ հայտնի չէ... Չնայած խիստ զբաղված եմ այնուամենայնիվ կաշխատեմ հաճախակի նամակ գրել: Բարևիր քո մարտական ընկերներին: Համբույրներով Անդրանիկ»:

Զորամասի վերակազմավորման աշխատանքները ավարտվեցին 1942 թ. հոկտեմբերի 23–ին, որից հետո այն ուղարկվեց Ստալինգրադյան ռազմաճակատ, որտեղ 1942 թ. հուլիսի 17–ից տեղի էր ունենում Հայրենական մեծ պատերազմը ամենախոշոր և վճռական նշանակություն ունեցող ճակատամարտը, որն ավարտվում է 1943 թ. փետրվարի 2–ին գերմանաֆաշիստական զրքերի ռազմավարական խոշոր խմբավորումների շրջապատումով ու լրիվ ջախջախումով: Հակառակորդը Ստալինգրադյան ճակատամարտում կորցրեց ավելի քան 1,5 միլիոն մարդ սպանված, վիրավոր և անհայտ կորած, որը կազմում էր խորհրդագերմանական ճակատում մարտնչող զորքերի ¼ մասը: Ստալինգրադյան ճակատամարտը վճռական ավանդ ներդրեց արմատական բեկում մտցնելու ինչպես Հայրենական մեծ պատերազմի, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում: Ստալինգրադյան

ճակատամարտի հետևանքով խորհրդային զինված ուժերը հակառակորդից խլեցին ռազմավարական նախաձեռնությունը և այն իրենց ձեռքում պահեցին մինչև պատերազմի հաղթական ավարտը: Գերմանաֆաշիստական զորքերի պարտությունը Ստալինգրադյան ճակատամարտում ցնցեց ողջ ֆաշիստական Գերմանիայի հիմքերը, խարխլեց նրա նկատմամբ դաշնակից երկրների վստահությունը, նպաստեց ֆաշիստական Գերմանիայի կողմից բռնազավթված երկրներում դիմադրության շարժման աշխուժացմանը: Գերմանիայի դաշնակից Ճապոնիան ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել Խորհրդային Միության նկատմամբ ակտիվ գործողությունների դիմելու պլաններից, իսկ Թուրքիան, որը Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր կուտակել 26 սպառազեն դիվիզիա և Խորհրդային Միության վրա հարձակվելու օր էր նշանակել 1942 թ. նոյեմբերի 23–ը, ստիպված էր հրաժարվել իր ագրեսիվ պլաններից և բռնել, այսպես կոչված «չեզոքության» քաղաքականության դիրք:

1942 թ. նոյեմբերի 7–ին վերակազմավորված և նոր տեխնիկայով համալրված 44–րդ առանձին ինժեներական բրիգադան, որի կազմի մեջ էր մտնում 217–րդ ինժեներափակոցային զումարտակը, որտեղ ծառայում էր քաղղեկ Անդրանիկ Մինասյանը, հասավ նշանակված վայր և հարավարևմտյան ռազմաճակատի 8–րդ հեծյալ կորպուսի առաջավոր գծում սկսեց կատարել նախապատրաստական մարտական պատասխանատու աշխատանքներ, որոնք ավարտվեցին նոյեմբերի 19–ին: Ինչպես հայտնի է 1942 թ. նոյեմբերի 19–ին սկսվում է Ստալինգրադյան ճակատամարտի երկրորդ՝ հարձակողական–հաղթական շրջանը: Այդ օրը հուժկու հրետանային նախապատրաստությունից հետո հարձակման են անցնում Հարավարևմտյան և Դոնի, իսկ մեկ օր անց նաև Ստալինգրադյան ռազմաճակատի զորքերը: Նոյեմբերի 23–ին Հարավարևմտյան և Ստալինգրադյան ռազմաճակատի զորքերը հաղթական մարտերով ընդառաջ գնալով Կալաչի և Սովետսկի

շրջաններում հանդիպում են իրար և հակառակորդի 330–հազարանոց բանակը վերցնում շրջափակման մեջ: Այնուհետև 44–րդ առանձին ինժեներական բրիգադան նույն թվականի դեկտեմբերի 1–ից հատուկ նշանակության առաջադրանքներ էր կատարում 21–րդ հեծյալ դիվիզիայի մարտական գործողությունների զոտում, ականազերծման միջոցով ճանապարհի բացում հեծյալների արշավի համար: 1943 թ.փետրվարի 14-ին բրիգադը արդեն հասել էր Ռոստովի մարզի Կրասնովկա քաղաք: Այդ շրջանում եղբորը՝ Օնիկին ուղարկած նամակում (26 հունվարի 1942 թ.) Անդրանիկը գրում է. «Օնիկ ջան, մենք գտնվում ենք ամենապատասխանատու ռազմաճակատում: Երկար ժամանակ մինչև այսօր և ներկայումս մշտապես գտնվում էինք և կատարում ամենապատասխանատու աշխատանք: Պետք է մատնանշել, որ հսկայական թափով առաջ էինք շարժվել, բավականաչափ դեպի հարավ: Ինչպես սովետական ինֆորմբյուրոն է հայտնում ամեն օր տասնյակ բնակավայրեր ենք ազատում, սարսափելի գազանություններ են տեղի ունեցել հիտլերյան բանակի կողմից, հատկապես Ստալինգրադի ազգաբնակչության հետ, որոնց ցրել են ամբողջ Դոնի հարթավայրում: Հետաքրքիր դեպքերի շատ ենք հանդիպում և ինչպես դու ես գրում անկասկած և հուսով եմ, որ պատերազմից հետո կհանդիպենք, որտեղ կպատմեմ իմ անցած ուղու պատմությունը... Տնից ուղարկել են Պրազնի և Շմավոն հորեղբոր հասցեները Պարզնի հասցեն. Полевая почта ст. 1915 почтовый ящик 110, литер “В”, 85 гвардейский стрелковый полк, 3-й стрелковый баталён, 7-я стрелковая рота. Շմավոնի հասցեն. 505 полевая почта, 249 армейский полк... Մեզ հրամանատարական կոչումներ են տվել, համաձայն իմ տված քննության ինձ շնորհել են ավագ լեյտենանտի կոչում, բանակի զինվորական մասում ես արժանի պատիվ եմ վայելում...բարևիր քո մարտական ընկերներին: Ջերմագին համբյուրներով քո եղբայր Անդրանիկ»: 1943 թ. ապրիլի 25-ի նամակում Անդրանիկը Օնիկին հայտնում է նաև տեղեկություն Վահան Գրի-

գորյանի մասին, որը մարտնչում էր Բելոռուսական պարտիզանների շարքերում:

Այնուհետև ավագ լեյտենանտ Անդրանիկ Մինասյանը որպես 217-րդ ինժեներափակոցային գումարտակի 3-րդ վաշտի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ Հարավարևմտյան ռազմաճակատի[1] 44-րդառանձին ինժեներական բրիգադի կազմում ակտիվորեն մասնակցել է Ուկրաինան գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման մարտական գործողություններին, նրա զորամասը զգալիորեն նպաստել է 1943 թ. փետրվարի 9-ին Խարկովի մարզի Վոլչանսկ, 14-ին՝ Վորոշիլովգրադ, 17-ին՝ Սլավյանսկ, հոկտեմբերի 14-ին՝ Զապոռոժյե, 25-ին՝ Դնեպրոպետրովսկ, 1944 թ. ապրիլի 10-ին Օդեսա քաղաքների ազատագրման գործողություններին: Ուկրաինայի ազատագրման մարտերում մարտական առաջադրանքները հաջողությամբ կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած քաջության համար ավագ լեյտենանտ Անդրանիկ Մինասյանը պարգևատրվում է «Արիության համար» մեդալով, «Կարմիր աստղի» և «Կարմիր դրոշի» շքանշաններով: «Արիության համար» մեդալին ավագ լեյտենանտ Անդրանիկ Մինասյանը արժանացել էր 44-րդ առանձին ինժեներական բրիգադի հրամանատար գնդապետ Չեսկլիսի 1943 թ. մայիսի 17-ի թիվ 012/Հ հրամանով՝ հակառակորդի ականանետային-գնդացրային ուժեղ կրակի տակ Սևերսկի Դոնեց գետի վրա կամրջի վերանորոգման համարանհրաժեշտ շինանյութ տեղափոխելու գործը գերազանց կազմակերպելու համար:Նրա ղեկավարությամբ 217 ինժեներափակոցային գումարտակի սակրային վաշտի մարտիկները, չնայած հակառակորդի բոլոր տեսակի զենքերի տեղատարափ կրակին, ժամանակին կատարեցին մարտական առաջադրանքը[2]:

---

[1] *1943 թ. հոկտեմբերի 20-ից Հարավարևմտյան ռազմաճակատը վերափոխվեց Երրորդ ուկրաինական ռազմաճակատի:*
[2] *ՌԴ ՊՆԿԱ, Ֆ. 33. ց. 682526. գ. 1643, թ. 279:*

Բացի «Արիության համար» մեդալից Անդրանիկ Մինասյանին շնորհվեց նաև կապիտանի զինվորական կոչում և առաջ քաշվեց 217-րդ հրաձգային զումարտակի կուսակցական կազմակերպիչի պատասխանատու պաշտոնում:

Երկրորդ մարտական պարգևին՝ Կարմիր աստղի շքանշանին կապիտան Անդրանիկ Մինասյանն արժանացավ նույն բրիգադի հրամանատարի 1943 թ. օգոստոսի 3-ի թիվ021/Հ հրամանով Վորոշիլովգրադի մարզի Բելայա Գորա ավանի մոտ Սևերսկի Դոնեց գետի վրայով անցարան զցելու ժամանակ ցուցաբերած խիզախության համար:Նրա պարգևատրման թերթիկում զումարտակի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Ռունովը 1943 թ. հունիսի 23-ին գրել է. «Անվախ կուսակցական կազմակերպիչը Բելայա Գորա ավանի մոտ Սևերսկի Դոնեց գետի վրայով անցարան զցելու ժամանակ անձնական օրինակով զումարտակի անձնակազմի մեջ տոկունություն սերմանեց և նրանց մղեց մարտական առաջադրանքը գերազանց կատարելու: Հակառակորդի տեղատարափի կրակի տակ նա բոլոր մարտիկների հետ համահավասար, անհրաժեշտ շինանյութ էր հասցնում գետափ: Հակառակորդը սակրավորների աշխատանքին սկսեց խանգարել գնդացրային կրակով: Տեսնելով այդ, զինվելով ձեռքի գնդացրով կապիտան Մինասյանը հարմար դիրքից դիպուկ կրակով լռեցրեց թշնամուն՝ հնարավորություն տալով յուրայիններին արագ ավարտել աշխատանքը: Անցարանի կառուցման ամբողջ ընթացքում կապիտան Մինասյանը մշտապես հայտնվում էր ամենավտանգավոր տեղամասերում և անձնական օրինակով ոգևորում սակրավորներին: Միաժամանակ նա խեղդվելուց փրկեց 4 վիրավոր մարտիկի և մեկ կրտսեր հրամանատարի: Արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[1]:

Երրորդ մարտական պարգևին՝ Կարմիր դրոշի շքանշանի կապիտան Անդրանիկ Մինասյանն արժանացել է Ուկրաինա-

[1] ՌԴ ՊՆԿԱՀ. ֆ. 33. գ. 682526, գ. 1527, թ. 204:

յի Զապորոժյե քաղաքից հարավ՝ Բալաբինո գյուղի մոտ 1943 թ. նոյեմբերի 25-26–ին Դնեպրի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության և տոկունության համար՝ Երրորդ Ուկրաինական ռազմաճակատի 6–րդ բանակի՝ (որի կազմում կռվում էր խիզախ հայորդու զորամասը) հրամանատար գեներալ–լեյտենանտ Ի.Տ. Շլոմինի 1943 թ. դեկտեմբերի 1–ի թիվ 0131/Հ հրամանով[1]:Բրիգադի հրամանատար մայոր Կոլոսկովը 1943 թ. նոյեմբերի 27–ին կապիտան Մինասյանի պարգևատրման թերթիկում նշել է. «Կապիտան Մինասյանը Դնեպրը գետանցելու համար դեսանտ նախապատրաստելու ժամանակ կատարեց հսկայական նշանակության քաղաքական աշխատանք բրիգադի կուսակցական և կոմերիտական մարտիկների շրջանում, որը մեծ չափով նպաստեց մարտական առաջադրանքը հերոսաբար կատարելուն: Այն փաստը, որ 60–րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 2350 հոգուց բաղկացած սպառազեն դեսանտը հրետանային մեկ մարտկոցի հետ հակառակորդի բոլոր տեսակի զենքերի տեղատարափ կրակի տակ կարողացավ հաղթահարել Դնեպրը և հենակետ գրավել նրա աջ ափին, մեծ չափով պայմանավորված էր կապիտան Մինասյանի կատարած արդյունավետ աշխատանքով, կոմունիստների և կոմրիտականների ցուցաբերած հերոսությամբ: 1943 թ. նոյեմբերի 26–ի վաղ առավոտյան կապիտան Մինասյանը իր գումարտակի սակրավորների հետ առաջինը դուրս եկավ Դնեպրի աջ ափ և նավակամուրջի ափ դուրս գալու տեղում սկսեցին նավամատույց և ճանապարհ կառուցել դեսանտայինների ու մարտական տեխնիկայի համար: Կապիտան Մինասյանը մինչև գոտկատեղը սառը ջրի մեջ, իր եռանդուն գործունեությամբ օրինակ էր հանդիսանում սակրավորների համար, ոգևորում նրանց ժամանակին կատարելու մարտական առաջադրանքը: Դժվարին պայմաններում ցուցաբերած խիզախության և մարտական առաջադրանքը գերազանց կատարելու համար կապիտան Անդրանիկ

[1] *Նույն գլուխում, ց. 686044, գ. 854, թ. 204:*

Ֆյոդորի Մինասյանն արժանի է Խորհրդային Միության հերոսի կոչման»[1]: Բրիգադի հրամանատարի ներկայացրած պարգևին իր համաձայնությունը տվեց նաև 60–րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի հրամանատար, գվարդիայի գեներալ–մայոր Արկանովը: Սակայն 6–րդ բանակի հրամանատար, գեներալ–լեյտենանտ Ի.Տ. Շլյոմինը հաշվի չառնելով կապիտան Մինասյանի անմիջական հրամանատարների կարծիքը, նրան պարգևատրեց Կարմիր դրոշի շքանշանով:

Երրորդ պարգևատրման մասին կապիտան Մինասյանը 1943 թ. դեկտեմբերի 8–ին գրում է եղբորը՝ Օնիկին. «Թանկագին Օնիկ: Այսօր ես իմացա ինձ Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին: Երևի շուտով կստանամ պարգևը: Մեր մոտ եկավ «Правда» թերթի թղթակիցը և իմ մասին տեղեկություններ հավաքեց հոդվածի համար: Ինչպես տեսնում ես մեր ռազմաճակատում հաջող գործողությունները փոխարինում են միմյանց: Քո եղբայրը գտնվում է մշտապես այդ գործողությունների առաջին շարքերում և նրա գործը գնահատվում է հրամանատարության կողմից: Այժմ մենք կատարում ենք չափազանց պատասխանատու մարտական առաջադրանք և կարծում եմ այն նույնպես հաջողությամբ կավարտվի: Գիշեր–ցերեկ համարյա չեմ քնում, գումարտակիս ողջ անձնակազմին մոբիլիզացնում եմ կատարելու պատասխանատու առաջադրանք: Չեմ պարծենում, իմ կատարած աշխատանքը հայտնի է դարձել բոլորին և գնահատվել հրամանատարության կողմից: Ես անձամբ ակտիվորեն անմիջական աշխատանք եմ տանում զինվորների և սպաների շրջանում, բոլորը սիրով են ինձ ընդունում և վերաբերում: Որտեղ ամենածանր աշխատանքների տեղամասն է հրամանատարությունը ինձ ուղարկում է այնտեղ և ամեն ինչ ավարտվում է հաջողությամբ: Սպասում ենք պարգևների ստացմանը: Ես լավ եմ ինձ զգում, օրերն անցնում են աննկատ: Խոստացել էին ինձ արձակուրդ տալ, բայց իմ անմիջա-

[1] Նույն տեղում:

կան հրամանատարը դեմ է, ասում է միայն հաղթանակից հետո և միասին կլինենք քո հայրենիքում... Օնիկ ջան հաճախակի նամակ գրի, հատկապես գրի քո առողջության մասին: Առայժմ այսքանը: Բարևներ հաղորդիր քո մարտական բոլոր ընկերներին: Համբուրում եմ ամուր, քո Անդրանիկ»:

1943 թ. դեկտեմբերի 24–ին եղբորը՝ Օնիկին ուղարկած նամակում Անդրանիկը նշում է. «Այսօր ես հաջողությամբ հանձնեցի մարտական պատրաստության ստուգարքները: Նամակս գրում եմ այն պահին, երբ սովետական ինֆորմբյուրոն հաղորդագրություն տարածեց ռադիոյով բելոռուսական Գորոդոկ քաղաքը ազատագրելու մասին:Փառք գեներալ Բաղրամյանին, որը գործում է արծվի նման: Հյուսիսում ձեր տարած հաղթանակները մեզ ոգեշնչում են նոր սխրանքների: Համբուրում եմ քո եղբայր Անդրանիկ»[1]:

1944 թ. հունվարի 22–ին Օնիկին գրած նամակում կապիտան Մինասյանը հայտնում էր, որ հունվարի 21–ին հանդիսավոր պայմաններում ստացավ Կարմիր դրոշի շքանշանը, որը ավելի է ոգևորում իրեն նորանոր սխրանքներ կատարելու համար. «Մենք պատրաստվում ենք կատարելու մարտական ավելի պատասխանատու գործողություն: Ես համոզված եմ, որ այդ առաջադրանքը ևս կկատարենք հաջողությամբ, քանի որ բոլորս էլ դարձել ենք մեր գործի վարպետներ և ինչպես հայտնի ասացվածքն է ասում «գործը վարպետից է վախենում»: Ես հավատում եմ, որ հաջողությամբ կկատարենք նաև առաջադրված մարտական խնդիրը»:

1944 թ. ձմռանը և գարնանը կապիտան Ա.Ֆ. Մինասյանը Երրորդ Ուկրաինական ռազմաճակատի 6–րդ բանակի 44–րդ առանձին ինժեներական բրիգադի 217–րդ ինժեներափակոցային գումարտակի կազմում ակտիվորեն մասնակցեց փետրվարի 8–ին Նիկոպոլի, ապրիլի 10–ին Օդեսայի, 12–ին՝ Տիրասպոլի

---

[1] *Գորոդոկ քաղաքը ազատագրվել է 1943 թ. դեկտեմբերի 24-ին բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանի ղեկավարած Առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի կողմից:*

ազատագրման մարտերին և իր զորամասի հետ շարժվեց դեպի արևմուտք Ռումինիայի ուղղությամբ: 1944 թ. օգոստոսի 4–ի մարտում նա ծանր վիրավորվեց և բուժման նպատակով տեղափոխվեց Օդեսայի կենտրոնական հոսպիտալ: Այդ մասին նա Օնիկին գրած նամակում հայտնում է, որ ինքը վիրավորված է աջ ձեռքից, որն ամբողջովին գտնված է գիպսի մեջ և ինքը նամակը գրում է ձախ ձեռքով և գտնվում է Օդեսայում:Սեպտեմբերի 4–ի գրած նամակով կապիտան Ա.Ֆ. Մինասյանը եղբորը հայտնում է, որ երկու օր առաջ հանել է գիպսը և շարունակում է բուժվել Օդեսայում և շատ է ձգտում մեկնել ռազմաճակատ և միանալ իր զորամասին: Սեպտեմբերի 15–ի գրած նամակով Անդրանիկը հայտնում է եղբորը, որ արդեն դուրս են գրել հոսպիտալից և մեկնում է միանալու իր զորամասին, որն արդեն մարտնչում էր Ռումինիայում: Սեպտեմբերի 24–ին կապիտան Մինասյանը միացավ իր զորամասին, իսկ երեք օր հետո նրա կազմում մտավ Բուլղարիա: Մինչ այդ 1944 թ. սեպտեմբերի 9–ին Բուլղարիայում Սեպտեմբերյան ժողովրդական զինված ապստամբության հետևանքով տապալվել էր միապետական կարգերը և հաստատվել ժողովրդա–դեմոկրատական իշխանություն:Նույն օրը Բուլղարիան պատերազմ հայտարարեց ֆաշիստական Գերմանիային: Մինչ այդ նա համարվում էր Գերմանիայի դաշնակից, բայց ոչ մի զինվոր չէր ուղարկել Խորհրդային Միության դեմ: Որպես ֆաշիստական Գերմնիայի դաշնակից Բուլղարիան Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մարտնչել է Հարավսլավիայի դեմ: Առանց մի որևե արտակարգ պատահարի կապիտան Ա.Ֆ. Մինասյանի զորամասը Բուլղարիայի տարածքով անցավ ավելի քան 400 կմ և հոկտեմբերի սկզբներին մտավ Հարավսլավիա: Հոկտեմբերի 8–ին 44–րդ առանձին ինժեներական բրիգադը մարտերով ազատագրեց Զայեչար քաղաքը, ապա Երրոդ Ուկրաինական ռազմաճակատի 4–րդ գվարդիական մեքենայացված կորպուսի կազմում արշավեց դեպի Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադ, որն ազա-

տագրվեց հոկտեմբերի 20–ին: Երբ 1945 թ. հունիսի 9–ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հիմնադրվեց «Բելգրադի ազատագրման համար» մեդալը, ապա կապիտան Ա.Ֆ. Մինասյանը առաջինների թվում պարգևատրվեց այդ մեդալով: Բելգրադի ազատագրման մարտերի մասին Անդրանիկը 1944 թ. հոկտեմբերի 30–ին Օնիկին գրած նամակում հայտնում է. «Սիրելի Օնիկ: Այժմ ես գտնվում եմ Բելգրադում: Ինձ բախտ վիճակվեց իմ մարտական ընկերների հետ գրոհել և ազատագրել այդ քաղաքը գերմանական զավթիչներից: Քաղաքի ազատագրման առաջին իսկ օրը պատմության մեջ կմտնի որպես ֆաշիզմի դեմ մղվող պայքարում ժողովուրդների մարտական եղբայրության վառ խորհրդանիշ: Այժմ ես ավելի մոտիկից եմ ծանոթանում այս քաղաքի հետ: Ժողովուրդը մեզ դիմավորեց ցնծությամբ: Երբ մենք քայլում ենք փողոցով, չորս կողմից մեզ վրա ծաղիկներ են թափում, հյուրասիրում մրգերով և այլն: Այստեղի ժողովուրդը հիրվի հերոս է: Ես հիշում եմ. փողոցային մարտերը, երբ տեղի բնակչությունը բոլոր ուժերով օգնում էր մեզ դուրս մղել տանիքներում և նկուղներում թաքնված գերմանացիներին, հաճախ նաև վտանգավոր մարտերում կռիվ բռնել նրանց հետ: Երբ ես բելգրադցիներին ասում էի, որ հարկավոր է թաքնվել, վտանգավոր է, նրանք պատասխանում էին, թե ինչու մենք չենք թաքնվում: Ես առում էի, որ մենք զինվորներ ենք, նրանք մեզ ասում էին, որ իրենք էլ զինվորներ են: Պետք է նշեմ, որ գերմանացի զավթիչները զազանաբար են վարվել հարավսլավական ժողովրդի հետ: Երբ մենք գերմանացի գերի էինք վերցնում, նրանք խնդրում էին, որ գերիներին տանք իրենց՝ դատաստան տեսնելու համար: Սա ավելի հասկանալի է դարձնում, թե ինչ ծանր պայմաններում են ապրել հարավսլավացիները գերմանական ֆաշիստների լծի տակ:

Բելգրադի ազատագրման օրը հրավառություն տրվեց: Ես ղեկավարում էի սալյուտ տվողներին: Մի քանիրոպեից հետո ինձ մոտեցավ խանդավառ բելգրադցիների մի խումբ և համբույրների

տարափ տեղացին իմ վրա: Այնուհետև ինձ գրկելով սկսեցին թոցնել վերև ուռա կանչելով և փառք ռուսներին կոչերով: Նրանք մեզ հետ շատ լավ էին վերաբերվում, մեզ համարելով իրենց ազատարարները...»: Այնուհետև կապիտան Անդրանիկ Մինասյանի ուղին Բելգրադից Դանուբի երկայնքով ձգվեց դեպի հյուսիս Նովի Սադ, Սոմբոր ուղղությամբ: Նոյեմբերի 23-ին կապիտան Ա.Ֆ. Մինասյանն իր զորամասի հետ միասին անցավ Հունգարիայի սահմանը: Հիշեցնենք, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիստական Հունգարիան հանդիսանում էր ֆաշիստական Գերմանիայի դաշնակիցը և կռվում էր Խորհրդային Միության դեմ: Հունգարական Մոխաչ քաղաքի մոտ հակառակորդի տեղատարափ կրակի տակ կապիտան Ա.Ֆ. Մինասյանի սակրավորները անցարան կառուցեցին Դանուբի վրա և նպաստեցին նոյեմբերի 26-ին Մոխաչի գրավման համար: Մարտերով շարժվելով առաջ 1944 թ. նոյեմբերի 30-ին գրավեցին Սեկսարդ, իսկ դեկտեմբերի 2-ին Պակշ, դեկտեմբերի 23-ին Սեկեշֆեխերվար քաղաքները ու մարտերով առաջացան Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի ուղղությամբ: 1945 թ. փետրվարի 13-ին համառ մարտերից հետո Երրորդ և Երկրորդ Ուկրաինական ռազմաճակատների զորքերը գրավեցին Բուդապեշտը: Երբ 1945 թ. հունիսի 9-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հիմնադրվեց «Բուդապեշտի գրավման համար» մեդալը կապիտան Ա.Ֆ.Մինասյանը առաջինների թվում արժանացավ այդ պարգևին: Բուդապեշտի գրավման մարտերի մասին Անդրանիկը իր եղբոր Օնիկին 1945 թ. փետրվարի 16-ին գրած նամակում նշում է. «Մենք կռվում ենք ամուր և միշտ գտնվում եմ ռազմաճակատի առաջին գծում: Երեք օր առաջ մենք գրավեցինք Բուդապեշտը: Գերագույն գլխավոր հրամանատար Ի.Վ. Ստալինի հրամանում նշվում է նաև մեր ռազմաճակատի անունը և շնորհակալություն է հայտնվում Հունգարիայի մայրաքաղաքի գրավման ժամանակ աչքի ընկած զորամասերին: Ես արդեն հինգերորդ անգամ արժա-

նանում եմ գերագույն հրամանատարի շնորհակալագրին»:

Կապիտան Ա.Ֆ. Մինասյանը Բուդապեշտի գրավման մարտերին մասնակցում էր Երրորդ ուկրաինական ռազմաճակատի 4-րդ գվարդիական բանակի առաջապահում գործող 44-րդ հատուկ նշանակման առանձին ինժեներային բրիգադի 217-րդ ինժեներական արգելափակիչ գումարտակի կազմում, որպես գումարտակի կուսակցական կազմակերպիչ: Բրիգադի անձնակազմը Բուդապեշտյան հարձակողական գործողության ժամանակ (29հոկտեմբերի 1944 – 13 փետրվարի 1945 թ.) ականազերծում էր ճանապարհները, վերանորոգում կամուրջները, անցարանները կառուցում ջրային արգելքների վրա, անվտանգ ուղիներ բացում տանկերի, հրետանու և հետևակի համար: Տեղանքի բարդ պայմաններում, հակառակորդի տեղատարափ կրակի տակ, կապիտան Ա.Ֆ. Մինասյանը անձնական օրինակով ոգևորում էր սակրավորներին, համախմբում գումարտակի կոմունիստներին, կոմերիտականներին, անկուսակցականներին՝ հաղթահարելու դժվարությունները և պատվով կատարելու մարտական առաջադրանքները: Նա իր հարուստ մարտական փորձը սիրով հաղորդում էր բոլորին: Բուդապեշտյան գործողության հաղթական ավարտից հետո, կապիտան Ա.Ֆ.Մինասյանը իր զորամասի կազմում ակտիվորեն մասնակցում է Կապուվար քաղաքի գրավման մարտերին՝ 1945 թ. մարտի 29-ին, ապա՝ Շոպրոն քաղաքի գրավմանը՝ ապրիլի 1-ին: Հաջորդ օրը՝ ապրիլի 2-ին կապիտան Ա.Ֆ. Մինասյանը իր զորամասի հետ արդեն գտնվում էր ավստրիական հողում և մարտնչում Ավստրիան գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման համար:Նույն ամսի 13-ին Երրորդ Ուկրաինական ռազմաճակատի 4-րդ գվարդիական բանակի կազմում, իր զորամասի հետ, կապիտան Ա.Ֆ. Մինասյանը մասնակցում է Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի ազատագրման մարտերին, արժանանում Գերագույն գլխավոր հրամանատար Ի.Վ. Ստալինի 6-րդ շնորհակալությանը, ապա՝ «Վիեննայի գրավման համար» մեդալին:

Հաղթանակի օրը՝ 1945 թ. մայիսի 9-ը, կապիտան Ա.Ֆ. Մինասյանը դիմավորել է Վիեննայում: Նույն օրը՝ նա նամակ է գրել եղբորը՝ Օնիկին, որտեղ նշում է. «Թանկագին Օնիկ: Շնորհավորում եմ քեզ Հաղթանակի օրվա, ամբողջ ազատասեր մարդկության ցնծության օրվա առթիվ: Երկար սպասված այս բաղձալի օրը դիմավորեցինք հոյակապ, որքան ուրախություն ինչքան արցունքներ եղան այդ օրը: Գտնվելով օտար երկրում, տեղի բնակչությունը ցնծությամբ է շնորհավորում մեզ: Ինչպես եմ ուզում այս պահին լինել քեզ հետ, ինչպես եմ ուզում քեզ համբուրել ամուր, ամուր:

Այո, ամեն ինչ լռեց ռազմաճակատում, ասես թե անցած օրերը երազ լինեին, այժմ այստեղ մեզ թեթևացած ենք զգում և երաժշտության տակ, մեծ ուրախությամբ մարտական ընկերներով նշում ենք Հաղթանակի օրը: Կարծում եմ շուտով կհանդիպենք, երկար եմ երազել այդ օրվան: Բարձրացնելով բաժակը, խմում եմ մեր Հաղթանակի և քո առողջության համար, երազում եմ որքան կարելի է շուտ հանդիպել քեզ հետ»[1]:

---

[1] *Նամակը ամբողջությամբ զետեղել եմ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1978 թ. 3-րդ համարում, էջ 25:*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Կարելյան ռազմաճակատում, որտեղ մարտնչում էր մայոր Օ.Ֆ. Մինասյանը, մարտերը ավարտվեցին 1944 թ. աշնանը, երբ ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Ֆինլանդիան դուրս եկավ պատերազմից: Դրանից հետո մայոր Օ.Ֆ. Մինասյանը հնարավորություն ստացավ նոր՝ 1945 թ. դիմավորելուց հետո արձակուրդ ստանալ և մեկնել հայրենիք: Ահա թե ինչպես է նա նկարագրում իր ճանապարհորդությունը դեպի Բաքու, Կապան, Շիկահող և Երևան եղբորը՝ Անդրանիկին գրած 1945 թ. մարտի 25-ի նամակում:

«Իմ ազիզ Անդրանիկ ջան! Արձակուրդից վերադարձա և ահա մի շաբաթ է նորից գտնվում եմ իմ հին ծառայության տեղը: Ներկայումս մերոնք գտնվում են Մոսկվա քաղաքում: Հայտնի չէ, թե ինչքան ժամանակ ենք այստեղ լինելու, սակայն ես առայժմ բախտավոր եմ իմ տեղից ու դրությունից: Մոսկվայից լավ քաղաք ոչ մի տեղ չի կարելի գտնել: Ստացել եմ մի հրաշալի սենյակ ամեն մի հարմարությունով: Ցերեկը լինում եմ աշխատանքի տեղը, իսկ երեկոները հաճախում եմ կուսակցական ակտիվի դպրոց: Ուղիղ երկու ամիս է քեզնից նամակ չեմ ստանում, անհանգստությունից սիրտս քիչ է մնում թե ճաքի: Գիտեմ սիրելիս դու շատ զբաղված ես, սակայն ինձ ուրիշ բան չի հարկավոր, միայն գրի մի քնաի խոսք քո առողջության մասին, սիրտս ցավում է քեզ համար, ազիզ ջան, դու այդտեղ հեռու ռազմադաշտերում տանջվում ես ու չարչարվում, իսկ ես ման եմ գալիս հիասքանչ Մետրոյի դրախտի մեջ: Իմ ճանապարհորդության մասին գրում եմ քեզ մայրենի լեզվով... ինչպես ասում են, մեղրի քաղցրությունը մարդ շուտ է մոռանում, հաստա հայրենիքի ու մայրենի լեզվի քաղցրությունը երբեք չի մոռացվում: Մեր Զանգեզուրի լեզուն դրախտի բլբուլի լեզվից էլ անուշ է, ան-

մահական պտուղն էլ նրա համը չունի, Եդեմի ծաղիկն ու խունկն էլ նրա հոտը չունի: Գիտեմ քո սիրտը էլ ավելի է կարոտել չորս տարվա պատերազմի հրդեհները անցնելուց հետո: Ափսոսում եմ, որ ես համարյա թե մոռացել եմ մայրենի լեզուն, սակայն մի ամբողջական ամիս լինելով մեր հարազատների շրջապատում որոշ չափով հիշողության մեջ վերականգնեցրի անցյալը...

1945 թ. հունվարի 4-ին ճանապարհվեցի Կանդալակշա քաղաքից մինչև Վոլոգդա մեր նախկին ռազմաճակատից Կարմիր աստղի շքանշանի և "За оборону Заполяря" մեդալ ստանալու համար: Սակայն նրանք այնտեղից ճանապարհվել էին դեպի Արևելյան Պրուսիա և ես ստիպված եղա գնալ մինչև Մոսկվա, որտեղ հաջողվեց ստանալ արձակուրդ Ղափան գնալու համար...

Հունվարի 20-ին երեկոյան ժամը 5-ին հասա Բաքու: Մինչև Սավադ դայունց տուն հասնելը ռադիոն շատ ուժեղ ձայնով հաղորդում էր երաժշտություն: Ինձ թվում էր, թե ես գտնվում եմ երազի մեջ, թառի ու քամանչի թախծոտ ու մեղմ ձայները ամենապինդ սիրտը տակն ու վրա է անում: Ուղիղ 30 րոպե ճամպրուկը ձեռքիս կանգնեցի կայարանի մոտ միայն ռադիո լսելու պատճառով: Ինչքան եղավ իմ զարմանքը, երբ մտա Սավադ դայունց տունը (հայրիկը նրանց տունը անվանում է «պոուշնու տակը», քանի որ մեր գյուղացիները Բաքու գալուց առաջին հերթին այնտեղ էին կանգ առնում, որովհետև տունը գտնվում էր Բաքվի երկաթուղային կայարանի մոտ), աստեղ ամբողջ տունը լիքն էին մեր գյուղացիներով (Համբարձումը, Աղաբեկը, հնձվոր Արմենակը և այլն): Սոփյան բիբին, Սավադի կինը, կանգնած էր դռան մոտ... Վունի, Անդրանիկը եկալ ա... ասաց ու փաթաթվեց կոլովս... ահա այստեղ էլ սկսվեց անվերջ համբույրները... Ամեն օր այնքան էին համբուրում, որ ես ստիպված էի սրբիչն ու սապոնը միշտ պահել գրպանումս...Չգիտեմ ինչու շատերը ինձ թյուրիմացաբար անվանում էին քո անունով...

Միթե մենք իրար շատ նման ենք... իմացա, որ Լյուբան[1] երեխաների հետ գտնվում է Բինաղադիում, այդ պատճառով էլ ուզում էի գնալ Ամունց[2] տուն...Սակայն Սավաղը այս երեկո ինձ բաց չթողեց... Դու մի ասի քաղաքում ապրող մեր գյուղացիները այդ օրը հավաքվել էին քեֆի, չեմ հիշում Թղուլուց, թե Ղրղղեցուց Աղաբեկի տանը նրա աղջկա 8 տարին լրանալու կապակցությամբ և ինձ զոռով քարշ տվին տարան այդ քեֆը, որը տևեց մինչև գիշերվա ժամը 4... Քեֆի թամադան մեր Բալասան միրաղն էր, այստեղ էինԲաբայան Արամն ու Արևհատը: Այսպես իմ առաջին զալու և մինչև ճանապարհվելու օրը ամեն օր եղա քեֆի կամ հարսանիքի մեջ: Չգիտեմ ինչու միշտ ամենաառաջին հերթին խմում էին իմ քո կենացը... Դե մեր տեղի սովորությունն էլ այնպես է, որ ամեն մի բաժակի վրա պիտի ամբողջ մի ժամ ճառ ասեն, այնուհետև երգեն, պարեն, մի խոսքով զինին կամ արաղը գլխիդ «աղու», անեն հետո՝ սկսեն խմել... Դե ես այնպես եմ ռուսացել, որ լավ է գնամ "в атаку", քան թե սեղանի վրա խոսեք...

Բալա ջան, ումբուրթ էրգան նի, մեր ամենաազիզ ղոնաղը դու ես... միայն դա եմ լավ հիշում և բաժակների շմփշմփոցը:

Քեֆից հետո փողոցում Սավաղն ու Արամը իրար հետ կռվեցին... էլ շուն շան տղա, էլ քաչալ շուն չմնաց, որ իրար ասեին... Սավաղն ուզում էր, որ ես գնամ իրենց տուն, իսկ Արամը թևիցս բռնած բաց չէր թողնում... Շատ վիճելուց հետո հարցրին իմ կարծիքը, թե ես ում եմ շատ հարգում և որտեղ եմ ուզում գիշերել: Վերջը գլուխդ ինչ ցավացնեմ ամբողջ մի ամսվա ընթացքում ինձ քաշ էին տալիս մի տնից մյուսի տունը... Առավոտը ժամը 11-ին, հունվարի 21-ին ես, Սավաղը, Սոֆյանը, Արամը, Արևհատը իրենց բոլոր երեխաներով ճանապարհվեցին դեպի Բուլբուլի[3]: Ստեփան Ռազին կայարանում կանգ առանք որպեսզի հաքուրին[4] հետներս

1 Լյուբան՝ Օնիկի հորեղբայր Շնավոնի կինն էր:
2 Ամին՝ Օնիկի մյուս հորեղբայր Բազրատն էր:
3 Բաբլի շրջաններից մեկը:
4 Հաքուրը Բազրատի թոռը Գոհարն էր, որը նույնպես ընտանիքով ապրում էր

տանենք: Հաքուրը և նրա տղա Շավարշը մի այնպիսի օյիններ հանեցին, որ ես մնացի զարմացած: Շավարշը աշխատում էր հացի գործարանում, այդ պատճառով էլ նրանք շատ լավ են ապրում... Այստեղ չափից դուրս արաղ խմեցինք, Սավադն ու Արամը բոլորովին հարբեցին, մեզ բաց չթողեցին մինչև ուշ երեկո: Հավաքվել էին բոլոր հարևանները... Այսպես մի 30 հոգի, բոլորն էլ խմած, նվագելով, երգելով ու պարելով ոտքով գնացինք դեպի Ամունց տուն: Բուլբուլի սարով անցնելիս այնպիսի մի հարայ հրոց էին գցել, որ տրամվայից իջնողները բոլորը մեզ էին նայում: Դա նմանեցնում էր մի ինչ որ հարսանիքի: Այստեղ այնքան ցեխ էր, որ մենք դժվարությամբ էինք շարժվում: Չնայած դրան Սավադը ոչ միայն պար էր գալիս, այլ կլպոնձի (գլուխկոնձի – Կ.Հ.) տալով ծիծաղից թուլացնում էր բոլորիս... Ռամանինսկի պասաղկայում[1] էլ մարդ չմնաց, որ դուրս չգար փողոց: Հանգստի օր էր, այդ պատճառով էլ բոլորը տանն էին...Այսպես Ամուն, Մամային (Բագրատի կնոջ Անուշին – Կ.Հ.) և երեխաներին ես տեսա Բաքվում լինելուս երկրորդ օրը երեկոյան: Մաման շատ լաց եղավ: Երեխաները այնպես են մեծացել, որ բոլորովին չես ճանաչի: Ամին նույնպես ուրախությունից լաց եղավ... «Օնիկ, մի՞ թե դու ես, աչքերիս չեմ հավատում»: Սավադն ու Արամը Ամուն փուրաշկան (գլխարկը – Կ.Հ.) և սկսեցին քաշ քաշ անել, որպեսի պատոոտեն: Դա իբրև թե հին սովորություն է: Մի քիչ զրուցելուց հետո նորից սկսվեց քեֆը, որ տևեց մինչև գիշերվա ժամը 2-ը: Ես շատ էի հոգնել, նամանավանդ Մուրմանսկից մինչև Բաքու երկար ճանապարհորդությունից հետո: Որոշեցինք, որ առավոտը ես պիտի ճանապարհվեմ Ղափան, այդ պատճառով էլ Սոկրատ ապերը ստիպեց, որ գնանք իրենց տուն: Նրանք ապրում են նույն թաղամասում... Արուսյակ մորքուրը մի զույգ տղա է բերել, այդ պատճառով էլ նորից սկսվեց քեֆը մինչև գիշերվա ժամը 4-ը...

Բաքվում:
1 Խոսքը վերաբերում է Ռամանինսկի բանվորական ավանին, որտեղ ապրում էր Բագրատ Մինասյանը:

Հաջորդ օրը շատ մեծ դալմաղալով մի կերպ բաց ընկա Բաքվից, համարյա փախա»... Հայրիկը, մայրիկը մազնիսի պես ինձ քաշում էին դեպի գյուղ... Կայարաններում այնպիսի դեպքեր էին հանդիպում, որ ուղղակի մազերս բիզ բիզ էին կանգնում... Շատ հազվագյուտ մարդ պիտի գնա, որպեսզի ճամպրուկը կամ գրպանը չմաքրեն գողերը: Իմ բախտից, որ միշտ հաջողվում էր որպես սպա գնալ առանձին կուպեյում: Լավաշ-մածուն-լավաշ մածուն ուրիշ ոչ մի բան չես լսում... եթե տնից հետս ուտելիք չվերցնեի, օրերով պետք է սոված մնայի... քանի որ կայարաններից մեկում գրպաններիցս 2000 ռուբլի թոցրեցին: Իհարկե, այդ մասին, բացի քեզնից, ոչ ոք չգիտի:

Երևի իմ ճակատագիրն էր սկսվեցին սարսափելի ցրտերը, նամանավանդ Մինջևան կայարանում, որտեղ տեղի է ունենում "пересадка" և ամբողջ մի օր պետք է սպասել Ղափանի գնացքին... Կայարանում շատ ցուրտ է, մութ և շատ խայտառակ կեղտոտ: Մի անկյունում լսեցի հայ կանանց ձայներ, մոտեցա և ասացի, քույրիկ խնդրում եմ ճամպրուկիս նայեք, ես կայարանի պետի մոտ մի քիչ գործ ունեմ»...«Խնդրեմ, խնդրեմ,-ասաց նրանցից մեկը... Կայարանի պետը ինձ խոսք տվեց առավոտյան ժամը 6-ին ապրանքատար վագոնով ճանապարհել Ղափան... Երբ վերադարձա ճամպրուկիս մոտ այդ կինը ինձ շատ նայելուց հետո բացականչեց. «Վունի, էս մեր Օնիզն ա» ու փաթաթվեց վզովս... Ես ուղղակի մնացի ապշած... Դու մի ասի, դա Թումանանց Մանյան է, որը նույն գնացքով եկել էր Մոզդոկից ու այսպես մենք միասին, ապրանքատար գնացքով հունվարի 23-ին ժամը 6-ին ճանապարհվեցինք Ղափան: Ղափանի կայարանում նա ինձ շատ ստիպեց գնանք իր եղբոր Թումանենց Սեղրակի տունը, որը գտնվում է կայարանի մոտ: Անհնար էր մերժել, նամանավանդ սաստիկ մրսել էինք: Մինչև այդ իրենց փոքրիկ տղային ուղարկում են Բարուշկայից (Օնիկի քրոջից – Կ.Հ.) մաղարիչ վերցնելու: Լավ փլովից ու տաք թեյից հետո մեկնեցինք դեպի քաղաք: Քաղաքը համարյա սկսում է կայարանից: Այնքան

նոր շենքեր են կառուցել: Զինվորականներ համարյա թե չկան, այդ պատճառով էր անցնելուց բոլորը նայում են, նամանավանդ այստեղ շատերը ինձ ճանաչում են: Բարևներով ու համբույրներով մի կերպ հասա մինչև քաղաքի կենտրոնը... Բարուշկան և մեր Անուշավանը թևերը լայն բաց արած վազում էին դեպի ինձ... Լուրը արդեն տարածվել էր և ամբողջ փողոցը լցված էին բարեկամներով, ծանոթներով ու ընկերներով: Հացի խանութի առաջ հերթ կանգնած տասնյակ կանայք նույնպես հավաքվել էին մեր շուրջը: Կարծես թե մի ինչ որ ցուցահանդես լիներ: Ծանոթ, անծանոթ միևնույն է, ով որ հանդիպում է գրկում է ու համբուրում: «Բոյիթ մեռնիմ, ջանիթ մեռնիմ» լսվում էր չորս կողմից: «Բալա ջան բա էդ անիծյալ կռիվը երբ է պրծնելու: Ամեն տեղից միայն այս հարցն էի լսում և տալիս էի միայն մի պատասխան. «Մի շաբաթից հետո»: «Վույ քու լուզվիթ մատաղ նիմ, կլխավդ (գլխովդ – Կ.Հ.) շոռ տամ, յանի պրծնելու յա (վերջանալու է – Կ.Հ.)»: Չես կարող երևակայել, թե ինչպիսի մեծ դժվարություններ է քաշում ժողովուրդը պատերազմի օրերին: Ամեն մեկը կարոտել է իր որդուն, ամուսնուն, եղբորը կամ հորը և մի զինվորական տեսնելուց հազար ու մի հարց ու փորձ են անում, կարծես թե նրանց մոտից ես եկել:

Բարուշկան ապրում է քաղաքի կենտրոնում գտնվող հյուրանոցի համարներից մեկում: Երբ ներս մտա փոքրիկ Կլիմենտը[1] փաթաթվեց վզովս և սկսեց շատ ուժգին թափով համբուրել. «Օնիկ քեռի, բա ինձ համար ուսադիրներ չես բերել»: Դա է եղել նրա ամենաառաջին հարցը: Չես կարող երևակայել, թե ինչքան գեղեցիկ, ինչքան խելոք և ինչքան զուլում տղա է Կլիմենտը... Ես ամենից շատ հիմա նրան եմ կարոտում: Իմ գալու օրը Ամասիան (Օնիկի փեսան, Բարուշկայի ամուսինը – Կ.Հ.) գտնվում էր մեր գյուղում՝ Շիկահողում, հեռախոսով երբ հայտնում են, նա անմիջապես ձիու վրա սլանում է դեպի Ղափան, նույն այդ օրը մայրի-

1 Կլիմենտը, այժմ այս գողերի հեղինակը, այն ժամանակ 4 տարեկան 9 ամսեկան էր:

կը առավոտվանից ոտքով ճանապարհվել էր Ղափան: Նա հաճախ է գալիս Բարուշկայի մետ և այդ օրը բոլորովին չգիտեր իմ գալու մասին: Մինչև Ղափանի գետը հասնելը (խոսքը Ողջի գետի վտակ Գեղանուշ գետի մասին է – Կ.Հ.), այստեղ երբ հայտնում են, թե տղաղ բանակից եկել է, ուշքից գնում է: Լավ է պատահմամբ գրաստները գալիս էին գյուղից, վերցնում բերում են: Ես վաղուց պառկել քնած էի քաղցր քնով, երբ մեկը ինձ շատ պինդ գրկեց և սկսեց հեկեկալ: Աչքերս բացեցի, մայրիկն էր: Ամբողջ մի ժամ չկարողացա Մայրիկին հանգստացնել:

...Թող մոր աչքերից արտասունքի տեղ
Հուր շանթեր տեղան թշնամու գլխին,
Մոր սերն անհուն է, վրեժը՝ ահեղ,
Ես հավատում եմ մոր հաղթանակին

Ասա ինձ, սիրելիս, ինչ կա քաղցր Մայրիկից աշխարհի երեսին: Մինչև անգամ ռուս մեծ ժողովուրդը միշտ երգում է.

Жена найдет себе другого
А Мать, сыночка, никогда.

Հայաստանում շատ և նոր հրաշալի երգեր են երգում մոր մասին. Զանգեզուրցի աշուղ Աշոտը հիմա ամբողջ Հայաստանում համարյա թե Ջիվանի է դարձել: Փոքրիկ սենյակում կանգնելու տեղ չկար: Ամեն մեկն ուզում էր խոսել, հարցնել: Նամանավանդ մեր գյուղի 50%–ը և ամբողջ Մազրա գյուղը գտնվում է Ղափանում: Հանկարծ հյուրանոցի միջանցքում լսեցինք մի ոչխարի բոբոց: Դուրս եկա տեսնեմ Ամասիան մի ոչխար է բերել և մորթում...Սկսվեցին մեծ քեֆերը, երգերն ու պարերը, որոնք շարունակվեցին մինչև ուշ գիշեր:

Երկու օր մնացինք Ղափանում: Հայրիկը գնացել էր Շիշկերտ գյուղ կար անելու (Հիշեցնենք, որ Օնիկի հայրը նաև կար ու ձևի վարպետ էր, ուներ գերմանական ոտքի «Զինգեր» մեքենա: Փեդրո պապիկը հաճախակի իր կարի մեքենան ջորու վրա դրած մեկնում էր մոտակա գյուղերը և կար անում – Կ.Հ.): Սպասում էինք նրա

Շիկահող վերադառնալուն: Հաջորդ օրը մեզ հյուր կանչեց Վերդի դայունց Անդրանիկը: Իմ բախտից էր, թե ինչ Ղափանը լիքն էր լավ քաղցր գինիներով (գինին հիմնականում Ղափան էր բերվում Մեղրու Շվանիձոր գյուղից – Կ.Հ.): Ամեն սեղանի վրա նստում էին 20-30 հյուրեր: Ճիշտ ասած ես չէի երազում այդպիսի հանդիպում: Մայրիկը մի օր առաջ գնաց գյուղ: Հունվարի 25–ին ես և Ամասիան ձիերի վրա ճանապարհվեցինք դեպի գյուղ: Ճանապարհին մեկ–մեկ հանդիպում էինք մեր գյուղացիներին: Ճակատեն գյուղի մոտ հանդիպեցինք մեր գյուղի կոլտնտեսության նախկին նախագահ Գերասիմին: Նա նույնպես լաց եղավ ուրախությունից և հայտնեց, որ ամբողջ գյուղը սպասում է ձեզ: Ճակատենը համարյա թե քարուքանդ է եղել: Անտառում սկսեցինք Մոշահավ որսալ (սև գույնի թռչուն է, միսը շատ համով, որ սիրում է միշտ մոշի թփերի վրա թռչկոտել – Կ.Հ.): Ինձ հետ վերցրել էի ատրճանակս և բավականին փամփուշտներ: Կոնասա անտառում Ամասիայի հետ մի քանի անգամ սայլուտ տվեցինք: Ահա և մեր գյուղը: Տները աչքերիս կարծես թե փոքրացել էին: Այգիներն ու սարերը ծածկված են ձյունով, սակայն ամառվա պես փայլում է արևը: Պահեստի առաջ կանգնել են մի խումբ երեխաներ: Շատերին չեմ ճանաչում: Ինչքան են փոխվել, ինչքան են մեծացել, չկա այնպիսի մի տուն, որ կտուրների վրա կանգնած չլիներ 10-15 հոգի... Ահա և մեր տունը: Նույն չինարի (սոսի – Կ.Հ.) ծառերը, նույն դարվազան (դարպասը – Կ.Հ.), հին քարե ու անճոռնի փալաքյանը (աստիճանը – Կ.Հ.): Մեր տունը, մաղազան (մառանը – Կ.Հ.), սրահը, այնքան են լցվել կանանցով, երեխաներով, որ կանգնելու տեղ չկա, շատերը լաց են լինում: Դռան շեմքում կանգնած էր Ծաղկավարդը (Անդրանիկի կինը – Կ.Հ.), Ծեծա բիբին (Դեղձանիկ հորաքույրը – Կ.Հ.), հայրիկը... նորից սկսվեցին անվերջ համբույրները: Հայրիկը ինչքան է ծերացել, մազերը բոլորովին սպիտակել են: Հայրիկը ամուր գրկեց ինձ ու բարձր ձայնով կանչեց. «Անդրանիկ, Օնիկ, Պարգև[1]», սկսվեց կանանց ծկլթոցը...

1 Պարգևը՝ Մինասյանների կրտսեր եղբայրն էր, որը 10-րդ դասարանն ավարտելուց

Արշակ ամին, կոլխոզի նախագահը մի մեծ մահակ վերցրեց և սկսեց երեխաներին դուրս քշել, իսկ գյուղխորհրի նախագահ Գետեյոնը սկսեց գոռգոռալ կանանց վրա, որ լաց չլինեն. «Ա դանջդ, սասդ կտրե, հինչս դարաչու նման ճղճղում: Ուրախանալ ա հարկավոր իսկ սրանք դիտմամբ տխրեցնում են»...

Համարյա բոլոր գյուղացիները ինձ տեսնելու համար հերթով մտնում էին տուն ու դուրս գալիս: Ամասիան խանութից մի բոչկա (տակառ – Կ.Հ.) գինի բերեց, իսկ որսորդները անտառից մի վայրի խոզ էին բերել: Նորից սկսվեց տուր ու դմփոցը: Շամիրը լավ թառ է նվագում: Սեղանի չորս կողմը նստել են մեր բարեկամները, հարազատները, գյուղի ղեկավարները: Ամասիան թամադան է: Բոլորը առաջին հերթին հարցնում են քո մասին. «Բա ինչու Անդրանիկը չեկավ... Սպասելով աչքներս ջուր դառավ... Փեղրով աչքդ լուս կենա, Սոֆյան աչքդ լուս կենա... Առաջին բաժակը խմենք Անդրանիկի, Օնիկի և Պարգևի կենացը...»: Քեֆը շարունակվեց մինչև գիշերվա ժամը հինգը... Ամասիայի հետ զարթնեցինք ժամը 12–ին, արդեն արևը բավականին բարձրացել էր: Մերոնց գլուխները խառն էր: Թարմ լավաշի և կուրկուտի (հարիսայի – Կ.Հ.) հոտը հիշեցնում է մեր խաղաղ ու հանգիստ մանկությունը: Ես դիտում եմ մեր գրադարանը: Ոչ ոք գրքերին ձեռք չի տվել: Պարգևի թառը կախված է պատից, այնպես ինչպես նա թողել է: Պատեֆոնը մինչև իմ գալը դեռ ոչ մի անգամ բաց չեն արել: Ես դիտում եմ նկարները, քո նամակները:Նորից հավաքվում են հյուրերը, քեֆը շարունակվում է: Մեր Գետյոն դայուն ուղարկեցին Ճակատենից գինի բերելու: Արշակ ամին և Գետեյոնը գնացին կոլխոզի ամենաչաղ ոչխարը ջոկելու և մորթելու: Այդ բոլորը կատարվում է Ամասիայի ղեկավարությամբ: Պատրաստվում են զանազան տեսակի կե-

---

հետո, որպես կոմերիտական կամավոր մեկնել էր ռազմաճակատ. մարտնչել Հյուսիս կովկասյան ռազմաճակատի 18-րդ բանակի 85-րդ գվարդիական գնդի շարքերում. աջի ընկել Նովոռոսիյսկի համար մղված մարտերում, հերոսաբար զոհվել 1943 թ. սեպտեմբերին՝ դեսանտային գործողության ժամանակ: Պարգևը ծնվել էր 1923 թվականին:

բակուրներ, կարծես թե հարսանիքի պատրաստություն են տեսնում: Ամասիան որոշել է այսօր ինձ հարբեցնել: Քո և Բարուշկայի հարսանիքին ես չեմ մասնակցել, այդ պատճառով էլ ամենի տեղը հանել: Հայրիկը խնդրում է ինձ, որ նամակ գրեմ Լևոն[1] դայու վրա (նա Սրաշեն գյուղի կոլխոզի նախագահն է) որպեսզի գա նույնպես քեֆին մասնակցի: Ես նամակը գրում եմ և տալիս Լևոն դայու տղային Սերյոժային, որը ձիու վրա գնում է Սրաշեն[2] իսկույն հետ վերադառնում և Հայրիկից ու Մայրիկից մշտլեղ է ուզում (մաղարիչ – Կ.Հ.). «Եկալ ա, եկալ ա»: Այ տղա ինչ ա պատահել, ով ա եկել, Անդրանիկը թե Պարգևը: Սրտատրոփ սպասում ենք նրա ամեն մի բառին: «Չեմ ասի, մշտլղ տվեք, որ ասեմ...»: Օնիկի նշանածը եկալ ա: Մի գեղեցիկ ռուս աղջիկ ա, հենա մեր տանը, Սրաշեն: Երեկոյան պապայիս հետ գալու են»: Ես կարծում եմ, թե Սերյոժան հանաք է անում, բայց դու մի ասի մեծ քյալագի (փորձանք – Կ.Հ.) մեջ եմ ընկել և որպեսզի այդ պատմությունը գրել, հարկավոր է մի քանի հատ գիրք... Հիշում ես: Մոսկվայից քեզ վրա նամակ էի գրել, որտեղ ուղարկեցի «Алочка–ից привет:»Ալևտինային հետ ծանոթացել եմ մի տարի առաջ, Կանդալակշա քաղաքի մոտ: Ճիշտն ասած նա ինձ շատ դուր եկավ իր գեղեցկությամբ և համեստությամբ: Աշխատում էր զինվորական ցենզուրայում (գրաքննությունում – Կ.Հ.): Ինձ տեսնելուց ուղակի զժվում էր ուրախությունից: Որբ աղջիկ է, ունի միայն մի քույր, որը սովորում է Լենինգրադում, իսկ Մոսկվայում ունի հեռու ազգական: Ինքը ծնվել է Ուրալում, բայց վերջին ժամանակներս սովորում էր Մոսկվայում:

Մոսկվայում նա ինձ ճանապարհ դրեց դեպի գյուղ և որոշեցի հետ դառնալուց նրա հետ հանդիպել... Իմ ճանապարհվելուց մի քանի օր հետո Ալային ուղարկում են Բաքու զինվորական ցենզուրայի գծով աշխատելու: Նա իմանում էր որ ես գտնվում եմ գյուղում, այդ պատճառով Բաքվում կանգ չի առնում, ճանապարհվում

1 Լևոն Սրեփանյանը Շիկահողում Մինասյանների հարևանն է:
2 Սրաշեն գյուղը գտնվում է Շիկահողից 6 կմ հեռավորության վրա:

է ուղիղ Մինջևան: Մինջևանում չի սպասում Ղափանի գնացքին, ոտքով գալիս է մինչև Փիրչևան (Զանգիլան – Կ.Հ.), որտեղ հարց ու փորձ անելով գալիս է ընկնում թուրքի գյուղերը: Երևակայիր անծանոթ վայրերում, մեն-մենակ, անտառների ու լեռների միջով գալիս է հասնում մինչև Ռազդարա գյուղը, որտեղ ասում են, որ այս կողմերում «Шикагог» գյուղ չկա, չէ որ աղրբեջանցիները մեր գյուղին «Шхавуз» են ասում: Այստեղ խեղճը տանջվելով ու չարչարվելով գալիս հասնում է մինչև Սրաշեն գյուղը: Ոչ ոք ռուսերեն չգիտի, նրա հետ խոսում են ձեռքերով և ոտքերով: Աղբյուրի մոտ Լևոնի աղջիկ Սիրանուշը հանդիպում է Ալլային և նրան տանում իրենց տուն: Լևոն դային լսելով իմ անունը, հասկանում է ինչումն է խնդիրը: Հենց այդ ժամանակ Սերյոժան գալիս է իմ նամակով նրանց մոտ: Լևոնը անմիջապես մեծ պատրաստություն է տեսնում և մի քանի խուրջին (գունավոր թելերից գործած երկտեղանի ուղեպարկ – Կ.Հ.) կոնյակով լցված ձիերի վրա, ինքը, Թամաշը (կինը – Կ.Հ.), մեր Հովակիմ միրաղը, իր կինը, մի քանի ջահելներ և Ալլան գալիս են դեպի մեր գյուղը... Մինչ այդ, ես, Արշակ ամին, Ամասյան, Ծաղկավարդը, Ամասիայի քույր՝ Անտիկան, մեր Անուշավանը և մի քանի ջահելներ, ձիերի վրա գնում ենք նրանց ընդառաջ և հանդիպում մեր գյուղի մատույցներում: Ինչպես պատմում են, նմանեցնում է քո հարսանիքին: Ամբողջ գյուղը արդեն լսել էր այդ մասին, նամանավանդ դպրոցի բոլոր աշակերտները վազվզում էին դեպի գետը՝ մեզ դիմավորելու: Ես ինձ շատ անհարմար էի զգում, նամանավանդ Ալլայի անսպասելի գալը ուղղակի ինձ շշմեցրեց: Դժվար է պատմել, թե ինչպես էի ես ինձ զգում այդ ռոպեներին: Չորս կողմից լսում էի ռո՛ւս, ռո՛ւս: Մեր տան դիմաց այդ խեղճ աղջկան այնքան պաչպչեցին, որ նա քիչ էր մնում «караул» կանչի... «Արա Փեդրո դայու փափախը բերեք ճղոտինք (պատառոտենք – Կ.Հ.)»: Հենց փողոցում սկսեցին թառ ու բյամանչա նվագել ու պար գալ: Լևոնը ներկայացավ հայրիկին ինչպես աներ, իսկ Թամաշը ինչպես զոքանչ (тещa): Իմիջիայլոց, Լևոնը շատ հրաշա-

լի պարում է: Այսպես մենք պատրաստվեցինք քեֆի, բայց դուրս եկավ մեծ հարսանիք: Մեր սովորությունները Ալևտինայի համար բոլորովին նոր էր ու զարմանալի: Հայրիկը ռուսերեն երգեց «птичка летает»: Շատ ծիծաղացրեց իր մազալներով (անեկդոտներով – Կ.Հ.): Ես ստիպված էի բոլորի խոսակցությունները թարգմանել Ալլայի համար ռուսերեն: Երեկոն անցավ շատ ուրախ, գինու և կոնյակի ազդեցության տակ բոլորը երգում ու պարում էին: Աստեղ թամադան Լևոն դային էր, նա ստիպում է Արշակին, որ մի երգ ասի: Վերջինս հրաժարվում է, ասելով, որ ինքը երգել չգիտի: Լևոնը ստիպում է, որ երգել չես կարողանում, մի անգամ զոռա...: Ծիծաղի և դհոլի դղրդյունը տարածվում էր գյուղի խավար ու մութ փողոցներում... Բոլորը երազում էին տեսնել իրենց հարազատներին այսպիսի բախտավորության մեջ... դեռ շատ կշարունակվեր քեֆը, բայց երբ հատուկ սկսեցին խմել Պարգևի կենացը, Մայրիկը ուշաթափվեց... Գիշերվա խավարի մեջ ամեն ինչ լռեց... Հյուրերը մեկ–մեկ սկսեցին ցրվել... Ժամը արդեն 4–ն էր... Մայրիկին մի կերպ ուշքի բերինք...Հաջորդ օրը հարսանիքը շարունակվեց Լևոն դայու տանը: Ես ուղակի զարմանում էի, թե ինչու ինձ այդպիսի մեծ լավություններ են անում: Լևոնն ու Արշակը համարյա թե իրար հետ մրցում էին լավագույնն անելու համար: Ալլան հրաշալի ձայն ունի և լավ երգում է (իմիջայլոց, նա Մոսկվայի կինոստուդիայում մի ժամանակ սովորում էր): Այստեղ մի քանի երգեր կատարեց: Բոլորը ապշած նայում էին... Թամաշը մի մեծ մեշոկ ճղուպուր (պոպոկ – Կ.Հ.) թափեց սեղանի վրա: Ուրախությունը շարունակվեց մինչև ուշ գիշեր: Հաջորդ օրը թեկուզ ձյուն էր գալիս, բայց գնացինք գյուղի բաղերը (այգիները – Կ.Հ.) ման գալու: Ապա գնացինք Ամասիայի մայրիկի Նազանի բիբու տունը: Նա մի քանի հատ խոզի գոճիներ էր մորթել տվել: Այստեղ մի լավ քեֆ արեցինք: Արաղ, գինի, կոնյակ, թթի ղեղա (դոշաբ – Կ.Հ.), էլ բան չմնաց, որ չխմեինք: Բոլոր քեֆերի ժամանակ Ծաղկավարդը նստում էր մի կողքիս, իսկ Ալլան՝ մյուս: Ինչքան ափսոս, որ դու մեզ հետ չկա-

յիր: Բայց չկար այնպիսի մի սեղան, որ քո անունը չտային, Արշակը նույնպես հատուկ հյուր կանչեց ինձ, հայրիկին, Ամասիային, Ծաղկավարդին և նրա քույրերին, որոնք ելել էին Ծավից հատուկ ինձ տեսնելու...

Արշակի տղան լավ թառ է նվագում: Առհասարակ մեր կողմերում թառը շատ է տարածված: Գյուղում մնացի ընդամենը 7 օր: Գյուղացիները հացի, կողմից շատ մեծ նեղություն են քաշում: Միայն հատ ու կենտ ընտանիքներ, այն էլ ղեկավարներն են լավ ապրում: Այդ պատճառով էլ փողոցով անցնելիս ամեն մեկը գալիս էր ինձ գանգատվում իր դրությունից, նամանավանդ բանակայինների ընտանիքները: Մեկին այլուր է հարկավոր, մյուսին՝ փայտ, մի երրորդին՝ հագուստ և այլն: Շատ են գանգատվում Արշակից (կոլտնտեսության նախագահից – Կ.Հ.), Գետեյոնից (գյուղսովետի նախագահից – Կ.Հ.) այդ պատճառով էլ ստիպված էի շատ ժամանակ կորցնել նրանց գանգատները լսելու վրա: Պահեստի առաջ հավաքվել էին մի խումբ կանայք... Անցնելուց ինձ կանգնեցրին և շրջապատեցին: Մի քանիսին ուղղակի հնարավոր չէր նայել, կմախքի էին նմանվում... Վարդազարի մայրը՝ Սիրանուշը, սկսեց լաց լինելով գանգատվել, թե տղան գտնվում է բանակում, գոսպիտալ է ընկել, մի ոտքը կտրել են... իսկ գյուղում իր վրա մեծ հարկեր են դրել: «Դե դու աշխարհ տեսած մայոր մարդ ես, ասա տեսնենք օրենքով են այդ հարկերը դրել իմ վրա, թե անօրինական... Ես գնացի գյուղխորհուրդ Գետեյոնի մոտ խնդիրը պարզելու: Նա կանչեց Սիրանուշին և սկսեց գոռգոռալ. «Ա դանջղ (հայերեն՝ քած – Կ.Հ.) ով է քեզ վրա նալոգ (հարկ – Կ.Հ.) կապել, ինչ ես պրովակացիայով զբաղվում»: Պարզվեց, որ այդ խեղճ կնոջ վրա նալոգ դրել էին «սխալմամբ»: Շատերը իմ միջնորդությունից հետո ստացան այլուր... Այդ պատճառով ամեն մեկը գալիս էր պատմում իր ցավն ու դարդը: Մեր գյուղից առ այսօր 48 երիտասարդներից ոչ մի տեղեկություն չկա ռազմաճակատից: Ես չէի կարողանում տանել նրանց հարազատների լացն ու կոծը: Պատերազմը շատ վատ

ազդեցություն է թողել գյուղացիների վրա, քար ու քանդ է արել շատերի ընտանիքը: Բանակից միայն մի քանի հոգի են վերադարձել, այն էլ առանց ոտ ու ձեռքի... Իմ ողջ և առողջ վերադառնալը առաջին դեպքն է ամբողջ գյուղի համար: Մի անգամ հայրիկի հետ գնացինք գյուղի մյուս թաղը Շողակաթին տեսնելու համար (Հարություն ամին մահացել է): Ամեն տան առաջ անցնելուց կանգնեցնում են, հազար ու հարց ու փորձ անում: Երկար նայում են զինվորական հագուստին, կիտելին, պագոններին... տասնյակ անգամ պաչպչում, լաց են լինում, այսպես շարունակ: Ես միշտ ժպտում էի, սիրտ տալիս նրանց, արտաքինով ինձ ուրախ ձևացնում, սակայն ներքուստ սիրտս մղկտում էր տանջանքից: Համեմատած մնացածների հետ, մերոնք լավ են ապրում: Նամանավանդ քո և իմ ուղարկած ատեստատը (ես արդեն նշել եմ, որ Անդրանիկը և Օնիկը, որպես ապաներ պարբերաբար իրենց աշխատավարձը ուղարկել են ծնողներին – Կ.Հ.) մեծ օգնություն է ցույց տալիս: Այնուամենայնիվ հայրիկը շատ է չարչարվում, քանի որ սովոր չէ ռանչպարությանը: Պետք է ասեմ, որ Ամասիան շատ մեծ օգնություն է ցույց տալիս մեր ընտանիքին: Ռազմաճակատում վիրավորվելուց հետո վերադառնալով Ղափան նրան նշանակել են կոմերիտական շրջկոմի առաջին քարտուղար: Մեծ պատիվ ունի ամբողջ շրջանում: Իմ գալուց ամբողջ 12 օր ինձնից չէր հեռանում: Այդպիսի ծանր պայմաններում նա մեծ քեֆեր և մինչև անգամ հարսանիք կազմակերպեց: Իմ կարծիքով հազարներ ծախսեց: Ամեն ինչ անում էր, որ ես գոհ մնամ: Ես ինձ շատ անհարմար էի զգում, որ դատարկ գրպանով էի եկել գյուղ...:

Մի օր շատ հրաշալի արև եղավ, այնքան տաք, որ ամբողջ ձյունը հալչեց, բոլոր ճանապարհները լցվեցին ցեխ ու ջրով: Ես, Հայրիկը, Մայրիկը, Ալլան, Ծաղկավարդը, Ամասիան եկանք Ղափան, որտեղ ամբողջ ընտանիքով մնացինք 5 օր: Իհարկե, գյուղի հետ համեմատած Ղափանում կյանքը ավելի հետաքրքիր էր անցնում, նամանավանդ երեկոները միշտ թատրոն կամ կինո

Աջից ձախ՝ Անդրանիկ և Օնիկ Մինասյան եղբայրները

Բելոռուսիա, ք. Բրեստ – Լիտովսկ, 23.05.1941 թ., երկրորդ շարքում ձախից չորրորդը՝ քաղղեկի տեղակալ Անդրանիկ Մինասյանը

Աջից առաջինը՝ կապիտան Անդրանիկ Մինասյանը, 1944 թ., Ռումինիա

Քաղղեկի տեղակալ
Անդրանիկ Մինասյանը,
22.05.1941 թ., ք. Բրեստ-Լիտովսկ

Կապիտան Անդրանիկ Մինասյանը,
9.05.1945 թ.,
ք. Վիեննա (Ավստրիա)

Աջից՝ կապիտան
Անդրանիկ Մինասյան,
27.05.1945 թ., ք. Վիեննա

Մայոր Անդրանիկ Մինասյանն
աշխատանքի պահին,
1948 թ. ք. Էջմիածին

Մայոր Անդրանիկ Մինասյանի ընտանիքը, կինը՝ Ծաղկավարդը, տղան՝
Ռաֆֆին, աղջիկները՝ Ռիման և Ռոզալիան, 1949 թ. ք. Էջմիածին

Զինվոր Օնիկ Մինասյանը,
1938 թ., ք. Պոլոցկ (Բելոռուսիա)

Կրտսեր քաղղեկ Օնիկ Մինասյանը,
15.03.1940 թ. ք. Սորտավալա
(Կարելիա, Պետրոզավոդակի մարզ, ՌԴ)

Մայոր Օնիկ Մինասյանը,
9.05.1945 թ., ք. Մոսկվա

Փոխգնդապետ Օնիկ Մինասյանը,
23.02.1955 թ., Գերմանիա

Օնիկ Մինասյանը համագյուղացիների հետ, Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի բացման օրը, 15.10.1967 թ., գ. Շիկահող

Օնիկ Մինասյանի հետպատերազմյան լուսանկարները

Ձախից աջ՝ Անդրանիկ, Փեդրով և Օնիկ Մինասյանները, կանգնածներ՝ Ամասիա և Կլիմենտ Հարությունյանները, 1958 թ., ք. Երևան

Առաջին շարքում ձախից աջ՝ Մինասյան եղբայրների մայր Սոֆիան, փեսա Ամասիան, աղջիկը ՝ Բարուշկան, կանգնած են ձախից աջ՝ Ծաղկավարդը (Անդրանիկի կինը) և Անտիկան(Ամասիայի քույրը): Սոֆիայի գրկում՝ Լավրենտը, Ամասիայի գրկում՝ Կլիմենտը (Ամասիայի և Բարուշկայի երեխաները), 26.07.1942 թ., ք. Երևան

Ամասիան և Բարուշկան,
1938 թ., ք. Կապան

Պարգև Մինասյան – Աղաջանյանը՝
Ծաղկավարդի և Անտիկայի հետ,
1939 թ., ք. Կապան

Առաջին շարքում ձախից աջ՝ Փեդրով և Բագրատ Մինասյանները, երկրորդ շարքում ձախից աջ՝ Անդրանիկ Մինասյան, Սիրանույշը (Բագրատի կինը) և Ծաղկավարդը, 1938 թ. ք. Բաքու

Աջից՝ մայոր Շմավոն Մինասյանը, 6.06.1945 թ., ք. Պրագա (Չեխոսլովակիա)

Շմավոն Մինասյանը կնոջ՝ Լյուբով Իսակովնայի հետ, 1940 թ., ք. Բաքու

Շմավոն Մ'ինասյանը որդիների՝ Ռոլանդի և Ռուբենի հետ, 1940 թ., ք. Բաքու

Գնդապետ Ռուբեն Շմավոնի Մինասյանը ընտանիքի հետ՝ Հայրենական մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հուշարձանի բացման օրը, 15.10.1967 թ., գ. Շիկահող

Հուշարձանի բացման օրը ելույթով հանդես է գալիս գնդապետ Ռուբեն Մինասյանը, 15.10.1967 թ., գ. Շիկահող

Ռոլանդ Շմավոնի Մինասյանը (ձախից), Օնիկ Մինասյանը, 9.05.1977 թ., գ. Շիկահող

Ռոլանդը կնոջ՝ Ալլայի հետ

Աջից ձախ երրորդը՝ Կարեն, Ռոլանդ, Ռուբեն, Օնիկ Մինասյաններ, 15.10.1967 թ., գ. Շիկահող

Կրտսեր քաղղեկ
Ամասիա Հարությունյան,
3.07.1942, ք. Երևան

Ամասիա Հարությունյանը ռազմաճակատ մեկնելուց առաջ՝ կնոջ և որդիների հետ,
26.07.1942 թ., ք. Կապան

Ամասիա Հարությունյան, Բարուշկա Մինասյան-Հարությունյան, 9.05.1987 թ., ք. Կապան

Ամասիա Հարությունյան,
9.05.1987 թ., ք. Կապան

Ամասիա Հարությունյանը զեկուցումով հանդես է գալիս Հայրենական մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակին նվիրված հուշարձանի բացման օրը, 15.10.1967 թ., գ. Շիկահող

Ամասիա Հարությունյանը ծնողների գերեզմանի մոտ, 26.12.1967 թ., գ. Շիկահող

ՀՀ վետերանների միավորման նախագահ գեներալ-մայոր Ռաֆիկ Կարապետյանի հետ, 14.05.2005 թ., ք. Երևան

Ամասիա Հարությունյանը գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանի և որդու՝ Կլիմենտ Հարությունյանի հետ, 3.01.2005 թ., ք. Երևան

Ամասիա Հարությունյանը կնոջ, աղջկա՝ Սվետլանայի (ձախից առաջինը), հարսի՝ Եվգենիայի և թոռնուհիների հետ, Կապան

Աջից ձախ՝ Կլիմենտ և Ամասիա Հարություններ, Օնիկ Մինասյան, Կամո Հարությունյան, Ռոլանդ Մինասյան և փոքրիկ Անդրանիկը, 9.05.1977 թ., գ. Շիկահող

Ամասիա Հարությունյանը որդու՝ Կլիմենտի հարսի՝ Եվգենիայի, աղջկա՝
Անահիտի և թոռնիկների՝ Տիգրանի, Ռուդիկի ու Շուշանի հետ,
4.01.2003 թ., ք. Երևան

Կլիմենտ Հարությունյանը կնոջ՝ Եվգենիա Մինասյանի հետ,
1.05.2005 թ., ք. Երևան

Կլիմենտը տղայի ՝ Անդրանիկի, աղջիկների՝ Հասմիկի (աջից առաջինը) և Անահիտի հետ, 3.05.2010 թ., ք. Երևան

Կլիմենտը փեսաների՝ Դավթի և Սարգսի ու տղայի՝ Անդրանկի հետ՝ ծննդյան 70-ամյակի օրը, 1.05.2010 թ., ք. Երևան, ռեստորան «Փարվաննա»

Թոռնիկների հետ, 2.01.2018 թ., ք. Նոր-Հաճն

Անդրանիկը տղայի՝ Ամասիկի հետ պապիկի և տատիկի գերեզմանի մոտ, 27.07.2013 թ., գ. Շիկահող

Կլիմենտը քույրերի՝
Սվետլանայի (աջից) և Անահիտի հետ,
12.04. 2009 թ., ք. Երևան

Ռուդիկ թոռնիկը (ձախից
երկրորդը) բանակից
զորացրվելու օրը,
19.01.2020 թ., ք. Երևան

Աջից ձախ՝ Լարիսա Համազասպի Բաբաջանյան, Արամ Վազգենի Մանուկյան (Լյովա), Գևորգ Անդրեյի Վարդանյան (լեգենդար անլեգալ հետախույզ, Խորհրդային Միության հերոս), Կլիմենտ Հարությունյան, Հրանտ Ռուբենի Պողոսյան, Գեորգի Անդրեևիչ Կումանյով (ակադեմիկոս), 13.11.2010 թ., ք. Մոսկվա

Փեդրով Մինասյանը (կենտրոնում), Չալունց Սմբատը (ձախից) և Աղագյուլանց Բագրատը, 20.07.1967 թ., գ. Շիկահող

Փեդրով Մինասյան (ձախից երկրորդը՝ կանգնած), Աշոտ Իվանի Մինասյան (աջից առաջինը՝ կանգնած), ներքևի շարքում ձախից աջ՝ Գեդեոն Խաչատրյան, Ամասիա Հարությունյան, Աշոտ Արզումանյան, 1967 թ., գ. Շիկահող

Պարգև Անդրանիկի Մինասյան (աջից), Կլիմենտ Հարությունյան,
15.07.2009 թ., ք. Մոսկվա

Աջից ձախ՝ Պարգևը, Կլիմենտը և Ջինան (Պարգևի կինը),
2.04.2015 թ., ք. Վոլժսկի (Վոլգոգրադի մարզ)

Աջից ձախ՝ Պարգևը, Կլիմենտը, Ռազմիկը (Պարգևի տղան) և Ջինան,
2.04.2015 թ., ք. Վոլժսկի

Պարգև Անդրանիկի Մինասյանի ընտանիքը,
15.11.2021 թ., ք. Վոլժսկի

51-րդ գվարդիական (նախկին Հայկական 76-րդ) հրաձգային դիվիզիայի անվան փողոցում, 2.04.2015 թ., ք. Վոլգոգրադ

Աջից ձախ՝ Պարգևը, Կլիմենտը և Անդրանիկ Ռաֆֆիի Մինասյանը, 2.04.2015 թ., ք. Վոլժսկի

Ռաֆֆի Անդրանիկի Մինասյանի և Տոմայի հարսանիքի օրը,
3.01.1977 թ., ք. Երևան

Փոխգնդապետ
Աշոտ Ռաֆֆի Մինասյան

Աշոտի ընտանիքը,
14.11.2021 թ., ք. Երևան

Աշոտը՝ կնոջ Քրիստինայի և աղջկա Էլիզաբեթի հետ, 14.11.2021 թ., ք. Երևան

Էլիզաբեթն ու Ռաֆայելը, 14.11.2021 թ., ք. Երևան

Արմեն Օնիկի Մինասյանը կնոջ՝ Լիանայի և որդիների՝ Տիգրանի ու Կարենի հետ, 16.11.2021 թ., ք. Երևան

Աջից ձախ՝ Արմենը, Լիանան, Անուշը և Անդրանիկ Օնիկի Մինասյանը, 16.11.2021 թ., ք. Երևան

Ռիմա Անդրանիկի Մինասյանը (կենտրոնում) Ռոլանդ Շմավոնի Մինասյանի կնոջ՝ Ալլայի (աջից) և նրանց աղջկա՝ Լուսինեի հետ

Ռիման ընտանիքի հետ,
17.11.2021 թ., ք. Երևան

Ռոզալիա Անդրանիկի Մինասյանը աղջիկների՝ Իռենի և Կարինեի հետ,
8.03.2020 թ. ք. Երևան

Անդրանիկ Մինասյանի և նրա կնոջ՝ Ծաղկավարդի գերեզմանի մոտ,
6.07.2014թ., ք. Երևան, Շահումյան 1 գերեզմանոց

Օնիկ Մինասյանի և նրա կնոջ՝ Ռիմայի գերեզմանը,
6.07.2014 թ., ք. Երևան, Շահումյան 1 գերեզմանոց

Մամիկոն Ավետիսյան

Մամիկոն Ավետիսյանի ռազմաճակատից ուղարկած նամակը կնոջը՝ Օվսաննային

Մամիկոն Ավետիսյանի որդին՝ Հովիկը Սևաստոպոլի Սապուն Գարայի Փառքի թանգարանում, որտեղ պահվում են հոր ռազմաճակատային նամակները, 7.04.2019 թ.

Հովիկը մորաքրոջ տղայի Պարգևի հետ Սևաստոպոլի փառքի թանգարանում, 25.09.2020 թ.

Նիկոլայ Ավետիսյան

Եղբայրական գերեզմանոց Կրասնորադրի երկրամասի Աբինսկի շրջանի Էրիվանսկի խուտորում, որտեղ թաղվել է Նիկոլայ Ավետիսյանը

Նիկոլայ Ավետիսյանի գերեզմանը



Կարմիրբանակային Նիկոլայ Ավետիսյանի թաղման հաշվառման քարտը

Ռազմաճակատային բացիկներ, որոնց միջոցով նամակներ են ուղարկել Մինասյան եղբայրները

Родные Мои!

В день Сталинской конституции шлю Вам из далекого севера свой горячий пламенный привет. Я жив здоров. скучаю по Вас.

Пишите.

Целую Аня.

5 декабря 1943 г.

Смерть немецким оккупантам!

ВОИНСКОЕ

Куда Армянская ССР
горад Кафан.
Село Шикагох

Кому Минасян
Федор.

Адрес отправителя: Полевая почта 38606 "к."
(Запишите номер полевой почты)

Минасян. О. Ф.
(Фамилия, имя и отчество)

Цена 10 коп.

ПОЛЕВАЯ ПОЧТА СССР
-81243

ВСТРЕЧА

Рис. худ. Баюскина

Смерть немецким захватчикам!

ВОИНСКОЕ

Куда Полевая почта 2405

Кому Минасову А П

Адрес отправителя: Полевая почта, 38606

(Указать номер полевой почты)

Минасян Оник

(Фамилия, имя и отчество)

Цена 10 коп.

Название художественного фон. СССР по заказу ВЯПП

Г 24.544

СНАЙПЕР

БЬЮ ВРАГА БЕЗ ПРОМАХА.

Смерть немецким захватчикам!

ВОИНСКОЕ

бесплатное

Куда Полевая почта 38606

Кому Минасяну Онику

Адрес отправителя: ПОЛЕВАЯ ПОЧТА 24051 Минасян А.П.

(Указать № полевой почты)

Г 15.3.44. 3-я тип. «Красный пролетарий», Москва. Заказ № [illegible]

МЫ ВЕДЕМ ВОЙНУ СПРАВЕДЛИВУЮ!

Смерть немецким оккупантам!

ВОИНСКОЕ

Куда Полевая почта 38606 к

Кому Минасяну Онику

Адрес отправителя: п/п 24051 к Полевая почта, Львынасов А.П.

(Фамилия, имя и отчество)

Цена 6 коп.

Победа над лютым врагом близка!
Чтоб светлые дни настали,
Вперед! — говорит нам родная страна.
Вперед! — приказал нам Сталин!

Смерть немецким захватчикам!

ВОИНСКОЕ бесплатное

Куда Полевая почта 38606

Кому Минасяну Оник

Адрес отправителя: Полевая почта 67644 Минасян А.А.

(Фамилия, имя и отчество)

МОСКВА-СССР 2 13 VIII 1943

СПАСИБО, РОДНАЯ!

Смерть немецким захватчикам!

ВОИНСКОЕ

Куда Полевая почта 24051

Кому Минасову А П

Адрес отправителя: Полевая почта, 38606

(Указать номер полевой почты)

Минасян Оник

(Фамилия, имя и отчество)

Цена 6 коп.

За Нашу Советскую Родину

Связисты Красной Армии! Помните, что хорошая связь являются важнейшим условием управления боем. Всемерно улучшайте дело связи в Красной Армии, обеспечивайте успех ее боевых операций!

Да здравствуют советские связисты!

ВОИНСКОЕ

Куда Полевая почта 38606

Кому Минасову

Оник

Адрес отправителя: Полевая почта, г. Одесса

(указать номер полевой почты)

Полевая почта № 14290

(фамилия, имя, отчество)

ОДЕССА ПОЧТАМТ

Г12.5.44. „Советский График" Верхнеуральск, по заказу УВПП. Худ. А. Ермолаев.

Цена 6 к

„Пусть [illegible] мужественная образ [illegible] предков — Александра [illegible] Донского, Кузьмы Минина, [illegible] Пожарского, Александра [illegible] Михаила Кутузова!".

Смерть немецким о[illegible]лятам!

Цена без марки 8 коп.

Куда Полевая почта 38606 К.

Кому Мичасян Оник

Адрес отправителя Полевая почта 24051 м Мичасян Б.Ф.

Изд. художеств.-архитектурно-оформительского комбината по заказу московской конторы Главбумсбыта

[illegible]43 г. тип. таганского треста. зак. 135.

Салют Москвы доблестной Красной Армии!

Смерть немецким захватчикам!

ВОИНСКОЕ

Куда Армянская ССР Казанский Район Село Шикагог

Кому Мичасяну Федору

Обратный адрес: Полевая почта 38606

(указать номер полевой почты)

Мичасян Оник Ф.

(Фамилия, имя и отчество)

„Советский График" по заказу УВПП. Рис. А. Ермолаева

Г-15.2.44. № 106 Цена 10 коп.

էինք գնում: Մի երեկո շատ մեծ հետաքրքրությամբ դիտեցի «Մեծ հարսանիք» ներկայացումը: Եթե հիշում եմ մի կարճահասակ դերասան Բազո կա, այնպես մազալու (հրաշալի – Կ.Հ.) էր խաղում, որ ամբողջ երեկո ծիծաղելուց փորս քիչ մնաց պատռվեր: Իսկ դերասան Մարտունին բանտարկված էր: Երբ նա բանակում էր, կինը ման էր գալիս ռեժիսորի հետ: Մարտունին բանակից գալիս է արձակուրդ և իմանալով այդ մասին, սպանում է ռեժիսորին...

Մեր հայրիկի աշակերտ Անդրանիկը Փարսադանյան (Անդրանիկը կար ու ձև էր սովորել Փեդրո պապիկի մոտ – Կ.Հ.), նույնպես եղբոր պես տղա է: Նա ապրում է Ղափանում, ունի երկհարկանի սեփական տուն: Մի երեկո մեզ հյուր կանչեց և մեծ պատիվ տվեց: Հետո տարավ նկարչատուն և միասին նկարվեցինք: Մի քանի անգամ շուկայից չամիչ, թուզ խնձոր և այլ նվերներ բերեց: Մազրեցի մեր Ամի Գարեգին Մինասյանը նույնպես հյուր կանչեց:

Մեր Մինասյան Տիգրանը[1] ամբողջ ընտանիքով ապրում է Ղափանում, նա էլ նույնպես մի երեկո մեզ հյուր կանչեց: Մեր քեռու տղա Վոլոդյան նույնպես ամբողջ ընտանիքով ապրում է Ղափանում, մենք հյուր եղանք նրանց մոտ: Ամասիայի ընկերները, հարևանները, իմ հին ծանոթ ընկերները, բոլորը, բոլորը ուզում էին, որ ես իրենց մոտ լինեմ... Սակայն ժամանակն անցնում էր... Ես շտապում էի, ուշքս միտքս գտնվում էր այնտեղ՝ ռազմաճակատում: Փետրվարի 3–ին Ամասիան կանչեց շրջանի բոլոր ղեկավարներին: Այստեղ էր Ղոնյանը (Վաչագանցի) կուսակցության շրջկոմի 2–րդ քարտուղարը, շրջգործկոմի նախագահը, զինկոմը, շրջկոմի բոլոր աշխատողները: Սենյակը փոքր էր... Բայց զինին և ուտելիքները չափից դուրս շատ... Ես պետք է հաջորդ օրը ճանապարհվեի... Ինչքան երգեր, ինչքան կենացներ ես լսեցի այդ գիշեր: Ժամը արդեն գիշերվա հինգն էր: Ես դուրս եկա պատշգամբ ու

1 Մինասյան Տիգրանը մասնակցել էր Կովկասի ճակատամարտին, վիրավորվել և վերադարձել Ղափան: Երկար տարիներ աշխատել է Ղափանի շրջանի առցապ բաժնում որպես բաժնի վարիչի տեղակալ, ապա՝ վարիչ: 1970 թ. նոյեմբերի 21–ին նա ամուսնացավ նրա ավագ դպրոց Եվգենիայի հետ:

դիտում էի փոքրիկ քաղաքի գեղեցիկ լույսերը: Երկար ժամանակ քունս չէր տանում, մտածում էի քո մասին, որտեղ է հիմա նա... Առավոտը քեզնից նամակ կար: Ինչպիսի ուրախություն էր այդ փոքրիկ թղթի կտորը, ոգևորում է ու պայծառացնում անհանգիստ սիրտը:

Մեր Ղազարյան Գարեգինը (նա Օնիկի մորաքրոջ աղջկա Արփենիկի ամուսինն էր, աշխատում էր Երևանի կարամելի գործարանում, որպես պահեստապետ – Կ.Հ.) և Մինասյան Աշոտը (Օնիկի Բագրատ հորեղբոր կնոջ՝ Անուշի քրոջ՝ Մինայի որդին էր, աշխատում էր ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի մատակարարման բաժնի վարիչ, հետագայում կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Խաղողագործության և գինեգործության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն – Կ.Հ.): Երևանում լսել էին իմ գալու մասին: Գարեգինից ստացանք 5 հեռագիր, որտեղ ուղակի հրամայում էր, որ ես անպայման գնամ Երևանով: Մի քանի անգամ խոսեցի հեռախոսով: Վերջապես որոշեցի հետ գնալ Երևանով, նամանավանդ ես մեր մայրաքաղաքը բոլորովին չէի տեսել... Մերոնք ճանապարհի մեծ պատրաստություն տեսան: Ճամպրուկս ուղակի տրաքում (պայթում – Կ.Հ.) էր ամեն տեսակի քաղցրավենիքով, Մայրիկի ձեռքով պատրաստված յուղի զաթաներ, հալվա, մեղր, մի քանի խաշած հավ, չիր ու ճղուպուր (պոպոկ – Կ.Հ.) և այլն և այլն...

Փետրվարի 4–ին ճանապարհվելուց մի քանի ժամ առաջ Բաքվից ռադիոյով մի այնպիսի հաղորդում եղավ, որ բոլորը նստած լաց էին լինում... կարծես ռադիոնիմանում էր, որ ես նորից բաժանվում եմ ծնողներից ու հարազատներիցս... Ճանապարհվելու վերջին ժամն է: Բոլոր բարեկամները, հարևանները հավաքվել են տանը կանգնելու տեղ չկար: Հյուրանոցի միջանցքը նույնպես լցված էին մարդկանցով: Ալևտինան երգում է, որպեսզի Մայրիկը չտխրի... Մեր Մայկոնը այստեղ էր, հայերեն ասում է. «Վունի, վունի, հալա սրան տես է, համանչում ալ չի: Թազա (նոր – Կ.Հ.) հարսը

պատրոնի (կեսարի – Կ.Հ.) մոտ երգ ա ասում»... Շատ ծիծաղեցինք Մայկոնի այդ խոսքերի վրա: 1945 թվին այդպիսի հետամնացություն: Փարսադանանց Սուրենը պատմում էր իր և Գարեգինի (Ղազարյան – Կ.Հ.) սխրագործություններից... Մենք անվերջ ծիծաղում էինք: Ամասիան ավտոմեքենա էր վերցրել: Մայրիկը գրկել է ու ինձ չի թողնում: Բոլորը չորս կողմից սիրտ են տալիս, սակայն մայրական սրտի կարոտը դժվար է զսպել: Մայրիկը ուշքից գնաց: Ես ուղակի չգիտեի ինչ անել այդ անհարմար դրության մեջ: Սակայն ինչ արած, պետք է ճանապարհվեինք: Կայարանում շատ սպասեցինք: Բայց այդ օրը վթարի պատճառով գնացքը չեկավ: Մենք ստիպված գիշերվա ժամը 2–ին նորից հետ եկանք հյուրանոց: Նորից սկսվեց տուր ու դմփոցը, քեֆը շարունակվում է: Մայրիկն այնքան ուրախացավ, որ կարծես թե հենց նոր եմ եկել բանակից...

Հաջորդ օրը գնացքը եկավ ժամանակին: Այս անգամ ինձ ուրախությամբ ճանապարհ դրին դեպի Երևան... Ալևտինան գնաց Բաքու, որովհետև նա շատ էր ուշացել և պետք է ներկայանար իր աշխատանքի վայրը... Ես և մեր հայրիկի աշակերտ Անդրանիկը միասին ճանապարհվեցինք Մինջևանից Ջուլֆայի գծով դեպի Երևան: Ամբողջ ճանապարհին խմեցինք ու երգեցինք: Փետրվարի 6–ին հասա Երևան: Գարեգինը երկրորդ օրն է մեքենայով գալիս գնացքին է դիմավորում: Նրանք շատ վաղուց են պատրաստվել ինձ դիմավորելու... Իշխանը, Գարեգինի ընկերները, հարևանները, 15 հոգի եկել էին կայարան ինձ դիմավորելու: Բոլորը խոսում են հայերեն լեզվով: Ինձ շատ դուր եկավ Երևանը, նամանավանդ Ստալինյան պողոտան...

Նոր, մեծ, գեղեցիկ և հրաշալի կարմիր շենքերը, ծառերը, աշխուժ հայկական դեմքերը, գեղեցիկ սևաչյա աղջիկները, մաքուր օդը և անմահական ջուրը... Ամեն ինչ դուրեկան է, մոտիկ ու հարազատ: Մեքենան սլանում է քաղաքի փողոցներով: Մենք արդեն Գարեգինի տանն ենք Տերյան փողոց շենք 129, բնակարան 49: Լավ մեծ ու լու-

սավոր սենյակ է: Մի ամբողջ օրկեստր (նվագախումբ – Կ.Հ.) թառ, քամանչա, դուդուկ, դհոլ... նվագողները նստած մեզ էին սպասում: Իսկույն սկսվեց քեֆը: Թամադա է ընտրվում Մինասյան Աշոտը: Ոչ մի հարուստ հարսանիքում այսպիսի սեղան չէր կարելի գտնել, գինին քաղցր է մեղրի պես... նամանավանդ հայկական կոնյակը: Ես արդեն մի քանի բաժակից հետո սկսեցի աղաչել, որ ինձ չխմեցնեն, սակայն ընկել էի դրախտի մեջ և անհնար էր հրաժարվել: Այսպես քեֆը շարունակվեց մինչև լույս: Մեր մորաքույրը[1] եկել է Շվանիձորից և շատ գինի ու թուզ էր բերել: Ոսկի տղա է Գարեգինը, չկա մի մարդ, որ նրան չսիրի: Երևակայիր, սեղանի շուրջը նստած էին 40–ից ավելի մարդ: Գարեգինը մեծ ընդունակություն ունի անվերջ ծիծաղացնելու: Առանց նրա քեֆը չի կարող զարդարվի: Շատ ընդունակ տղա է, և՛ նվագում է, և՛ երգում և պարում: Ամեն մի խոսքից հետո, չի կարող պատահի, որ բոլորը չծիծաղեն... Մի խոսքով բախտավոր է նա, ով որ ամեն օր լսում է նրա քաղցր ու անուշ ձայնը: Հաջորդ օրը Գարեգինը Հայֆիլհարմոնիայից թառ նվագողներ հրավիրեց, որոնք զարդարեցին քեֆի շարունակությունը: Երրորդ և չորրորդ օրը անցկացրեցինք Աշոտ Մինասյանի տանը:Նա Հայաստանի գիտությունների ակադեմիայի օրսի (մատակարարման բաժնի) տնօրենն է, իսկ մեր Արփիկը (Գարեգինի կինը – Կ.Հ.) աշխատում է նրա մոտ խանութի վարիչ: Այդ պատճառով էլ սեղանի վրա կարելի էր գտնել ամեն ինչ: Աշոտի կինը՝ Մարգոն, Լենինականից է (այժմ՝ Գյումրի – Կ.Հ.), շատ հյուրասեր և կուլտուրական կին է: Այստեղ է Սաթիկը, Իվան Միրաղը (Աշոտ Մինասյանի հայրը – Կ.Հ.), իսկ Մինա բիբին (Աշոտ Մինասյանի մայրը – Կ.Հ.) գտնվում էր Բաքվում: Ինձ շատ մեծ պատիվ և հյուրասիրություն արին: Նրանք ապրում են քաղաքի ամենակենտրոնական մասում (Ղուկաս Ղուկասյան փողոց – Կ.Հ.): Ավետիք Իսահակյանը նրանց հարևանն էր, ամեն ժամանակ լվաց-

---

1 Խոսքը Օնիկի մոր Սոֆիայի քրոջ՝ Ազիզզյոլի մասին է, որը ամուսնացել և ապրում էր Մեղրու շրջանի Շվանիձոր գյուղում: Գարեգին Ղազարյանը ամուսնացած էր նրա աղջկա՝ Արփենիկի հետ:

վելիս կարելի էր տեսնել նրան:

Աշոտը շատ էր փոխվել, նամանավանդ իմ հանդեպ: Ես ուղղակի զարմացա: Ամեն օր Գարեգինի հետ կռվում էր, որ ես պետք է իրենց մոտ մնամ, հյուրասիրում էր ամենաընտիր գինիներով, պապիրոսներով, տանում էր քաղաքը ման ածում: Մազրեցի Արտեմը և Լուսիկը նույնպես գտնվում են Երևանում: Լսելով իմ գալու մասին հատուկ կանչում են աշուղ Մարտիրոսին և մեր գյուղացի երգչուհի Վարդուշին: Նրանց տանն էլ մի մեծ քեֆ եղավ: Արտեմն ու Լուսիկը շատ նեղացան, որ նրանց մոտ եղա միայն մի երեկո: Սակայն այդ երեկոն երբեք չի մոռացվի նամանավանդ աշուղ Մարտիրոսի թառի նվագը...Հաջորդ օրը գնացինք Երևանից 3 կիլոմետրի վրա գտնվող Սեբաստիա կոլխոզը, որտեղ գտնվում էր մեր մազրեցի Ռուբեն ամին, որոնց մոտ գինին և արաղը լիքն է բոչկաներով (տակառներով – Կ.Հ.), չորս կողմը խաղողի այգիներ են: Հազար ափսոս, որ ամառը չեմ ընկել այստեղ: Այնուամենայնիվ, այս օրերն էլ երբեք կյանքում չի մոռացվի: Այս կոլխոզում է մեր մազրեցի Իսաչի ամուն կինը՝ Վարսենիկը, նրանց տանն էլ մի լավ քեֆ արինք: Պատահմամբ փողոցում մի կին ինձ կանգնեցրեց և հարցրեց. «ներեցեք, դուք բարեկամ չեք Անդրանիկ Մինասյանին»: Իմանալով, որ ես ով եմ, ուղակի չէր իմանում ինչ անի: Ես և Իշխանը շատ էինք խմել, բայց նա զոռով քաշ տվեց տարավ իրենց տուն. «Որ Անդրանիկը իմանա, թե ես քեզ տեսել եմ և չեմ հյուրասիրել, ավելի լավ է մեռնեմ...»: Այդ կնոջ անունն է Նազանի: Ծավում, երբ դու աշխատում էիր, նա այնտեղ գյուղխորհրդի նախագահն էր: Հիմա նա գտնվում է Սեբաստիայում, նրա ամուսինը այստեղ կոլխոզի նախագահն է...Քաղցր մուրաբա, թուզ, չամիչ, չորացրած խաղող, ամեն ինչ թափեց սեղանի վրա: Իշխանը բոլորովին հարբեց և իրեն համարյա թե կորցրեց: Մինչև առավոտ զոռզոռում էր և թույլ չէր տալիս քնենք: Ես անվերջ ծիծաղելուց հալու ու մաշ էի եղել... Առավոտյան Նազանին ինձ 10 լիտր արաղ տվեց բանակ տանելու համար: Ես ուզում էի հարցնել, ինչքան պիտի վճարեմ,

շատ նեղացավ և ասում էր Անդրանիկի խաթրի համար մեր ամբողջ կոլխոզը քո գլխին մատաղ լինի: Ջանիդ մեռնիմ, միշտ եկեք, աչքիս վրա տեղ ունեք... Մինչև անգամ մեքենա կանչել տվեց և մեզ ճանապարհ դրեց մինչև Երևան...

Մելքոնյան Գարեգինը (Քոլուց) կառուչուկի գործարանումինժեներ է և պարտ–բյուրոյի քարտուղար: Լսելով իմ գալու մասին շատ մեծ պատրաստություն տեսավ և կանչեց իրենց տուն: Նրա կինն էլ Լենինականցի է, աշխատում է գիտությունների ակադեմիայում, գիտությունների թեկնածու է: Երևակայիր ինչպիսի քաղաքավարի ընդունելություն եղավ նրանց տանը... Գնացինք օպերա և տեսանք «Կարապի լիճը»...Քեֆերից այնպես էի հոգնել, որ քունս տանում էր. Սակայն դա դեռ սկիզբն էր: Ինձ մի օրվա ընթացքում քաշ էին տալիս մի քանի տեղ: Այնպես որ հնարավորություն չկար թատրոն կամ կինո գնալու: Գարեգինի հարևանուհին Շողիկը, աշխատում է Երևանի պետական համալսարանում, մեծ քեֆ կազմակերպեց: Ես ուղակի մնացել էի ապշած անծանոթ մարդիկ այդպիսի հյուրասիրություն: Երբեք չի կարելի մոռանալ խաղողի թփով պատրաստված տոլման և չամիչով պատրաստված փլովը... Քեֆից հետո գնացինք Հայֆիլհարմոնիա՝ համերգ լսելու...

Հաջորդ օրը Իշխանը մեզ հրավիրեց իրենց տուն՝ քեֆի: Քեֆից հետո գնացինք «Անուշ» օպերան տեսնելու: Այստեղ էին Աշոտ Մինասյանը իր ամբողջ ընտանիքով, ես, Ղազարյան Գարեգինը, Արփիկը, Արտեմը, Լուսիկը, Գարեգին Մելքումյանը, նրա կինը՝ Վերգուշը և այլն: Մի խոսքով մի մեծ խումբ՝ նստեցի ամենաառաջին շարքում: Շատ մոտիկից տեսա և լսեցի Շարա Տալյանին և Հայկանուշ Դանիելյանի ձայնը, երբեք չի կարելի մոռանալ... Թումանյանի այս պոեմը Արմեն Տիգրանյանը վերածել է իսկական գլուխգործոցի, որը բեմադրվում է մեծ հաջողությամբ: Հայկական ծանոթ մոտիվները, նամանավանդ երաժշտությունը շատ քաղցր է ու դուրեկան:

...Ու թա՛րմ, ցողապատ լեռների լանջում,

Սո՛ւս, ականջ արա, հովիվն է կանչում...
–Աղջի՛կ, անաստված, նստիր վրանում,
Ինչ ես դուրս գալիս, խելամաղ անում,
Աշուղ ես շինել, չեմ հանգստանում,
Խաղեր կապելով, չոլեր չափելով,
Ոչխարս անտեր, ընկել եմ հանդեր:
Ամա՛ն էրեցիր սիրտս քու սիրով,
Ոտս կապեցիր թել–թել մազերով
Էլ չեմ դիմանա, կփախցնեմ զոռով,
Այ սարի աղջիկ, այ սիրուն աղջիկ,
Այ դու կարմրաթուշ, թուխմազ Անուշ:
Քու հերն ու մերը, թե որ ինձ չտան,
Արին կթափեմ ես գետի նման,
Սարերը կընգնեմ կորչեմ անգյուման,
Այ սև աչքերով, այ ծով աչքերով,
Ունքերդ կամար, աղջիկ քեզ համար...

Օպերայից հետո փողոցում շատ հետաքրքիր տեսարան եղավ, Ղազարյան Գարեգինը բռնեց մի թևիցս, Աշոտ Մինասյանը մյուս թևիցս, Մելքոնյան Գարեգինը շինելիցս, իսկ Արտեմն ու Լուսիկը մի կողմից և ամբողջ մի քսան որպե սկսեցին վիճել: վերջապես որոշեցինք բոլորս հավաքվել Ղազարյան Գարեգինի տանը, նամանավանդ, որ Շվանիձորից եկած մորքուրը շատ գինի էր բերել և հատուկ պատրաստություն էին տեսել... նորից սկսվեց կեր ու խումը, ծիծաղն ու պարը: Ինձ ամեն մի կենացի վրա ստիպում էին պար գալ... Աղջիկները երգում էին զանգեզուրցի աշուղ Աշոտի նոր հնարած երգը...

– Նորից յար ջան, հիշեցի ես սև ունքերդ,
Ո՞նց մոռանամ, քանի որ կա տանջող սերդ,
Բաժակիս մեջ միշտ տեսնում եմ վառ պատկերդ,
Ո՞նց մոռանամ, քանի որ կա տանջող սերդ:
Հեյրանդ եմ ես, իմ կյանքում քեզնով տարված,

Ջահել եմ ես, ինձ մի խփիր սիրո հարված,
Դու ծաղկավառ Զանգեզուրի բարի ծնունդ,
Հազար տեսակ վարդերից ես առել սնունդ:
Դու զգույշ կաց, որ քեզ չառնի անսեր մարդը,
Սերից հեռու ինչ կիմանա՝ ինչ է զարդը,
Ես երգում եմ՝ դալար մնա կոկոն վարդը,
Սերից հեռու ինչ կիմանա՝ ինչ է զարդը:
Հեյրանդ եմ ես իմ կյանքում քեզնով տարված,
Ջահել եմ ես, ինձ մի խփիր սիրո հարված,
Դու ծաղկավառ Զանգեզուրի բարի ծնունդ,
Հազար տեսակ վարդերից ես առել սնունդ...

Գարեգինի և Աշոտի ընկերները նույնպես հյուր կանչեցին: Ամեն տեղ լինում էր թառ, քյամանչա կամ դուդուկ... Առհասարակ Երևանի պես ուրախ քաղաք ոչ մի տեղ ես դեռ չեմ տեսել... Շուկան լիքն է ամեն ինչով, սակայն շատ թանկ է: Ես մի 15 հատ պլաստինկա (պատեֆոնի ձայնասկավառակ – Կ.Հ.) գնեցի լավ հայկական ժողովրդական երգերով...

Ճանապարհվելուց մի օր առաջ Մելքոնյան Գարեգինը ինձ տարավ Արարատ գինու գործարանի պադվալները (նկուղները – Կ.Հ.) տեսնելու: Ահա այստեղ ես տեսա իսկական Հայաստանը: Մեծ տակառներով պահվում է գինի՝ մի քանի հարյուր տարիներով... Ամեն մի տակառի մեջ մինչև 500 դույլ գինի է լցված: Հենց ներս մտնելուց դարպասի վրա մեծ տառերով գրված է. ***«Գինու մեջ է ճշմարտությունը»:***

Այստեղի պրոֆեսորը (գլխավոր մասնագետը – Կ.Հ.) Մելքոնյան Գարեգինի աներն է... Ինչպես դուրս եկանք այդ գինու աշխարհից, չեմ հիշում, քանի որ չափից դուրս խմել էինք... Տեղին է հիշել Մաքսիմ Գորկու խոսքերը «Ավելի հեշտ է բարձրանալ Արարատի գագաթը, քան թե դուրս գալ «Արարատի» նկուղներից» (Այդ խոսքերը Մ. Գորկին ասել է 1928 թ. Հայաստան այցելելուց հետո, երբ նրան էքսկուրսիա են տարել «Արարատ» գինու գործարան – Կ.Հ.):

Վերջին օրը գնացինք էքսկուրսիա Հայաստանի պատմության թանգարան, Հայպետհրատի տպարանը, տեքստիլ գործարան, Կարմիր բանակի տունը և այլն և այլն... Ճանապարհելու օրը 3 մեքենա էին կանգնել Գարեգինի տան դիմաց: Գարեգինը, Աշոտը և Մելքոնյան Գարեգինը, ամեն մեկը ցանկանում էր իր մեքենայով ճանապարհվեմ մինչև կայարան: Մի ամբողջ ճամպրուկ լցրեցին ընտիր գինու և Արարատի էքսպորտ կոնյակի շշերով, թուզ, չամիչ, թզի մուրաբա, զանազան քաղցրավենիքներ, ընտիր պապիրոսներ, մի 30 հատ նոր հայկական գրքեր բանակ տանելու համար, բացի ճանապարհի պաշարից: Բոլորը եկել էին կայարան: Շատ էին ստիպում, որ մի 10 օր էլ մնամ, սակայն ժամանակը արդեն լրացել էր և ես ստիպված եղա բաժանվել այդ բարի ու թանկագին բարեկամներից: Ինձ հետ մինչև Մինջևան եկավ Թավադու[1]փոքր եղբայր Վարշամը, որը սովորում է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում և մի քանի օրվա արձակուրդ էր գնում գյուղ: Իսկ մինչև Բաքու հետս եկավ Իշխանը: Ճանապարհը անցկացրինք շատ ուրախ: Մեզ հետ միշտ ուղեկցում էր Արաքս գետը: Մյուս ափին երևում է Իրանը, որտեղ հաճախ գնում էին ուղտերի քարավանները: Հարավային պայծառ արևը փայլում էր և վագոնի մեջ համարյա տաք էր: Նամանավանդ կոնյակը տաքացնում էր ներսից և ստիպում մեզ երգել, երգել ու անվերջ երգել:

– Ես գնում եմ լաց չլինես,
Քնած տեղդ թաց չլինես,
Ինչքան անջիգար լինես,
Ուրիշին սիրած չլինես...

Մնաս բարով

Մնաս բարով սևաչ աղջիկ,

---

1 Խոսքը Անդրանիկի և Օնիկի համագյուղացի Թավադի Արշակի Բաղդասարյանի մասին է, որը զոհվել է Բրեստի կայազորի հերոսական պաշտպանության ժամանակ: Նրա անունը փորագրված է Բրեստի հերոս պաշտպանների հիշատակին կառուցված հուշարձանի վրա:

Սրտիս մոտիկ բարեկամ,
Դե մոտ արի, սեղմեմ ձեռքդ,
Հրաժեշտի համբույր տամ:
Թողնում եմ քեզ այս արտերում,
Այս դաշտերում ապրելու,
Գնում եմ ես ռազմաճակատ՝
Նենգ ոսոխին ջարդելու:
Դու մեր սերը վառ կպահես,
Որպես շողերն արևի,
Ուրախ գրեր միշտ կգրես,
Որ իմ սիրտը չտխրի,
Ես քո սերը իմ սրտի մեջ,
Տանեմ պիտի կռվի դաշտ,
Եվ կռվի մեջ պիտի լինեմ,
Անպարտելի ու անհաշտ:

Կարծես թե Արաքսն էլ է երգում մեզ հետ Թումանյանի «Բարձր սարերը»...

Ինչքա՜ն թովիչ, ինչքա՜ն դյութիչ են մեր հայրենի լեռները, մինչև անգամ այդ չոր ու ցամաք քարերը, ամեն մի կաթիլ հայրենի ջուրը մարդու սիրտը լցնում է անսահման սիրով ու կարոտով:

Բաքվում վաղուց էին ինձ սպասում և բոլորովին հույսերը կտրել էին, կարծում էին, թե ես առանց իրենց տեսնելու գնացել եմ բանակ: Նամանավանդ Ալնտինան ամեն օր լաց է լինում, քանի որ Երևանում չէի կարծում, թե այդպես պիտի ուշանամ: Իշխանը իր հետ մեծ բաչոնկա (տակառիկ – Կ.Հ.) գինի էր վերցրել: Ամբողջ ճանապարհին խմեցինք, սակայն դեռ կեսը մնում էր, Բաքվում կանգ առանք Իշխանի աներոջ տանը: Այնտեղ է Քնարիկը՝ Իշխանի կինը, եթե հիշում ես գյուղում Սևիլի դերն էր խաղում... Նորից սկսվեց քեֆը մինչև ուշ երեկո:

Այնուհետև ես և Իշխանը գնացինք Ամունց (հորեղբայր Բագրատի – Կ.Հ.) տուն: Նորից հավաքվեցին հաքուրը (Գոհարը՝

Փեդրովի, Բագրատի և Շմավոնի քույրը – Կ.Հ.), Սոկրատ ապեր-ը իրենց բոլոր ճտերով... Իմիջայլոց, Սոկրատ ապոր աղջիկները այնքան են մեծացել, որ տեսնելուց կզարմանաս: Մասնակցեցինք Մարուսիայի նշանդրեքին: Ալևտինան ապրում է Ամունց տանը... Ես չէի ասի, որ նա մնա այնտեղ, քանի որ խեղճ Ամին իր ընտանիքով ապրում են շատ և շատ վատ դրության մեջ, քանի որ բացի հացից ոչինչ չեն ստանում և շատ օրեր անց են կացնում կիսաքաղցր: Ռաիսան (Բագրատի և Անուշի աղջիկը – Կ.Հ.) մեծ աղջիկ է դարձել, սակայն խեղճ աղջկան ուսումից զրկել են և նշանակել հացի խանութի վաճառողի աշակերտ՝ դժվար պայմաններից ելնելով...

Մեր Բալասան միրաղը և Սաթենիկ հաքուրը, երկուսն էլ միասին, ստացել են "За оборону Кавказа" մեդալը: Եկան ինձ, Ամուն և Ալևտինային տարան իրենց տուն հյուրասիրության: Փոքրիկ Ժասմենը շատ գեղեցիկ և խելոք աղջիկ է, լավ երգեր և ոտանավորներ է ասում... Այստեղ առաջին անգամ տեսա Լյուբային (Լյուբան Օնիկի հորեղբոր Շմավոնի կինն է, որը երկու երեխաների հետ ապրում էր Բաքվում: Ամուսինը այդ ժամանակ գտնվում էր ռազմաճակատում: Նրա մասին կպատմենք առանձին – Կ.Հ.): Հաջորդ օրը գնացինք Դորայենց տուն (Դորան Լյուբայի քույրն է, ազգությամբ Շամլուղի հույներից են – Կ.Հ.), որտեղ տեսա Լյուբայի երեխաներին Ռոբիկին և Ռոլանին, որոնք աննկարագրելի կերպով մեծացել են: Ռոբիկը չափից դուրս նման է հորը՝ Շմավոն ապորը... Այուհետև գնացինք Բաքվի հայկական թատրոն ներկայացում դիտելու: Ինձ շատ դուր եկավ «Երկու հանդիպում» պիեսը: Հաջորդ օրը եղանք Ախունդովի անվան օպերայի շենքում, որտեղ մեծ հետաքրքրությամբ դիտեցինք «Շախ Իսմայիլը»: Բաքվում հաճախեցի նաև կինո, որտեղ կրկին դիտեցի «Չորսի սիրտը» ֆիլմը: Դրանից հետո մի քանի անգամ դարձյալ եղա Հայկական թատրոնում... Ճանապարհվելուց մեկ օր առաջ տեղի ունեցավ Շավարշուհու հարսանիքը (Շավարշուհին Օնիկի Գոհար հորաքրոջ աղջիկն

է – Կ.Հ.): Փեսայի՝ Հայկի աչքի մեկը քոռ է, սակայն լավ տղա է: Քաղաքի ամենահարուստ վարսավիրներից մեկն է և Բաքվում լավ բնակարան ունի... Առաջին կենացը խմեցին մեր հերոսական Կարմիր բանակի կենացը և որպես նրա ներկայացուցիչ՝ իմ կենացը: Թամադան Արամ Բաբայանն էր... Հատուկ հրավիրել էին թառ, քյամանչա և թմբուկ նվագողներ: Հարսանիքին մասնակցում էին համարյա թե Բաքվում բնակվող մեր գյուղացիների մեծ մասը: Ժամանակը չի ներում հարսանիքի մասին մանրամասն գրել: Շատ պարեցինք, երգեցինք, մինչև լույս քեֆ արեցինք... Հաջորդ օրը ամբողջ քաղաքը ոտիս տակ տվի, թեկուզ սաստիկ ցուրտ էր, ման եկա ծովի ափին: Գրախանութից հայկական նոր գրքեր գնեցի: Հաջորդ օրը երկաթուղային կայարանից գնացքով ճանապարհվեցի Մոսկվա: Ինձ ճանապարհելու համար կայարան էին եկել մի քանի տասնյակ հարազատներ, գյուղացիներ և ընկերներ, որոնցից շատերը լաց էին լինում: Ամենից շատ լաց էր լինում Ալենտինան, քիչ էր մնում, որ գժվի, թեկուզ ռուս է, բայց սիրտը հայ աղջկա պես է...

Մարտի 4–ին հասա Մոսկվա... Կայարանում իջնելուց պատահաբար հանդիպեցի մեր փոստատարին, որի հետ եկա հասա տեղ: Հաջորդ օրը եղա "MXAT" թատրոնում: Նայեցի «Վերջին օրերը» Պուշկինի մահվան մասին գրված պիեսան: Ինչքան գեղեցիկ և հիանալի քաղաք է Մոսկվան: Ամեն ինչի կողմից լավ է, սակայն մի կողմից վատ է... Մեզ ներկայումս չեն հաշվում ինչպես ֆրոնտավիկ, քանի որ ժամանակավորապես ընկել ենք ռեզերվի մեջ: Այդ պատճառով իմ նորման, թե սննդի և թե աշխատավարձի կողմից իջեցրել են: Սննդի համար վճարում ենք ինքներս, բացի դա տալիս ենք նալոգ (հարկ – Կ.Հ.) զինվորական և երեխա չունենալու առթիվ... Մի խոսքով թատրոն կամ կինո գնալու համար, լինում է ժամանակ, որ ստիպված ես լինում հրաժարվել կամ զրկվել փող չունենալու պատճառով... Այդ, իհարկե, կարող է ծիծաղելի թվալ, սակայն մերոնցից շատերը այդ պատճառով չեն ուզում այստեղ

մնալ... Հուսով եմ, որ շուտով մենք այստեղից կտեղափոխվենք, սակայն իմ կարծիքով դեռ ամենաքիչը 2 ամիս այստեղ կլինենք: Գրիր ինչպես ցանկանում ես կամ տան հասցեով, կամ դաշտային փոստիս հասցեով: Միևնույն է, ինչպես գրես, քո նամակները ինձ կհասնեն:

Ամուր գրկում ու համբուրում եմ քեզ: Մնամ քո Օնիկ:

22 մարտի 1945 թ.

Հասցեն՝ г. Москва, Звенигородский район, платформа Перехушково, поселок Юдина, дом 7, Минасйан Оник Федрович»:

Մայոր Օ.Ֆ. Մինասյանը Մոսկվայում ստացել էր հարմարանոցակ իր բոլոր հարմարություններով: Ցերեկը աշխատում էր իր զորամասում, իսկ երեկոները հաճախում կուսակցական ակտիվի դպրոցը: 1945 թ. մայիսմեկյան շքերթին մայոր Օ.Ֆ. Մինասյանը մասնակցել է իր զորամասի հետ, Հաղթանակի օրը՝ մայիսի 9–ը դիմավորել Կարմիր հրապարակում, դրանից հետո նրա զորամասը փոխադրվում է Մոսկվայի մարզի Ալաբինոյի շրջան, որտեղ նաև տրվում է նոր բնակարան: Արդեն նրա հետ էր ապրում կինը՝ Ալևտինան, որը ծննդաբերել, աղջիկ էր ունեցել՝ անունը Գալյա 1945 թ. հունիսի 24–ին մայոր Օ.Ֆ. Մինասյանը Մոսկվայի Կարմիր հրապարակում մասնակցում է Հաղթանակի զորահանդեսին: 1945 թ. հունիսի 28–ին եղբորը՝ Անդրանիկին գրած նամակում հայտնում է. «Հունիսի 24–ին ես Մոսկվայի Կարմիր հրապարակում իմ զորամասի հետ մասնակցեցի Հաղթանակի զորահանդեսին: Այդ օրը երբեք չեմ մոռանա իմ կյանքում»:

1945 թ. օգոստոսի 29–ի նամակում մայոր Օնիկ Մինասյանը գրում է եղբորը. «Անդրանիկ ջան սեպտեմբերի 5–ին Մոսկվայից ճանապարհվում եմ դեպի գյուղ: Արձակուրդ ստացել եմ մի ամսով, չհաշված ճանապարհը: Քեզ վրա հնարավոր չէ հեռագիր տալ, եթե նամակս ստանաս, աշխատիր հաջողացնել նույնպես գալ Ղաւիան: Շատ մեծ ուրախություն կլինի մեր հարազատների և հատկապես ինձ և քեզ համար, եթե միասին լինենք իրենց մոտ:

Ինչ գնով լինի աշխատիր անպայման գալ, նամանավանդ հիմա նարկոմի (ժողկոմի – Կ.Հ.) կողմից հրաման կա և հույս ունեմ, որ քեզ բաց կթողնեն:

Մինչև սեպտեմբերի վերջը կլինեմ գյուղում: Ամեն օր սպասելու եմ քո գալուն: Իմացիր, որ սեպտեմբեր ամիսը ամենալավ ամիսն է արձակուրդի համար... Տանը համարյա թե ամեն օր սպասում եմ իմ ու քո գալուն: Երկար նամակ չեմ գրում այն հույսով, որ քեզ հետ շուտով կհանդիպեմ: Ինչքան շուտ ճանապարհվես, այնքան էլ լավ կլինի: Սիրտս շատ է կարոտել... Սպասում եմ քեզ հեռագրիր Ղափան: Մնամ ջերմ համբույրներով քո Օնիկ: 29 օգոստոսի 1945 թ.»:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԻՆԱՍՅԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ՈՒ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Իրենց գրած նամակներում հաճախակի Օնիկը և Անդրանիկը նշել են նաև ռազմաճակատում մարտնչող իրենց հարազատների մասին: Ինչպես արդեն նշել ենք, նրանք շատ էին վշտացած կրտսեր եղբոր՝ Պարգևի զոհվելու լուրը լսելով: Ես արդեն նշել եմ, որ Պարգևը 10–րդ դասարանը ավարտելուց հետո, որպես կոմերիտական, կամավոր դիմել էր ռազմաճակատ մեկնելու խնդրանքով: Ղափանի շրջանային զինկոմ մայոր Սուրեն Գասպարյանը հաշվի առնելով ֆիզիկապես ուժեղ և ճարպիկ երիտասարդի դիմումը՝ հարգել էր այն: Պարգևը կրում էր Աղաջանյան ազգանունը ոչ թե եղբայրների Մինասյան ազգանունը: Այդ Փեղրո պապիկի հոր՝ Աղաջանի անունով էր: Ինչպես արդեն նշել ենք, Պարգևը մարտնչել է Հյուսիս–Կովկասյան ռազմաճակատի 18–րդ բանակի 85–րդ գվարդիական հրաձգային գնդի շարքերում, 1943 թ. սեպտեմբերին մասնակցել Նովորոսիյսկ–Թամանյան գործողությանը, մարտերից մեկում ծանր վիրավորվել երկու ոտքերից: Վիրավոր զինվորներին տեղափոխող նավը, որտեղ գտնվում էր կարմիրբանակային Պարգև Աղաջանյանը, ծովում ռմբակոծվել է հակառակորդի ինքնաթիռի կողմից և ջրասույզ արվել: Նավում եղած մի քանի հարյուր վիրավորների թվում, զոհվել է նաև Պարգև Աղաջանյանը: Դժբախտաբար չի պահպանվել ռազմաճակատից ծնողներին ուղարկած նրա նամակները, որոնք իրենց արժանի տեղը կգրավեին այս գրքում:

Ինչ վերաբերում է եղբայրների նամակներում շատ հիշատակվող նրանց քրոջ՝ Բարուշկայի ամուսնու Ամասիայի մասին, մենք արդեն որոշ չափով տեղեկություններ ենք տվել նրա մասին:

Նշենք, որ Ամասիա Ռուբենի Հարությունյանը պատերազմի նախօրյակին աշխատում էր հայրենի Շիկահող գյուղի միջնակարգ դպրոցում, որպես տնօրեն: 1942 թ. ձմռանը նա մեկնել է բանակ և ծառայել Երևանում կազմավորվող Հայկական 89–րդ հրաձգային դիվիզիայի 390–րդ հրաձգային գնդի 3–րդ գումարտակի 1–ին հրաձգային վաշտի շարքերում, որպես քաղղեկի տեղակալ: 1942 թ. հուլիսի 17–ին Երևանի Լենինի (այժմ՝ Հանրապետության) հրապարակում, նա դիվիզիայի ողջ անձնակազմի հետ մասնակցեց հանդիսավոր պայմաններում մարտական դրոշներ ստանալու արարողությանը: Դիվիզիայի և նրա գնդերի հրամանատարներին դրոշներ հանձնեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապյանը: Ընդունելով դրոշները հայկական դիվիզիայի անձնակազմը, այդ թվում նաև քաղղեկի տեղակալ Ամասիա Հարությունյանը, մեկ մարդու պես երդվեց փառքով օծել դրանք զալիք մարտերում, մինչև արյան վերջին կաթիլը մարտնչել գերմանական զավթիչների դեմ և նրանց դուրս շպրտել հայրենի հողից: Դրանից հետո Ամասիա Հարությունյանը կարճ ժամանակով արձակուրդ ստացավ Ղափան մեկնելու, որտեղ հուլիսի 26–ին լուսանկարվեց ընտանիքի հետ: Այդ լուսանկարը տպագրվում է մեր գրքում: Նույն թվականի օգոստոսի 8-11–ը դիվիզիայի զորամասերը երկաթուղով տեղափոխվում են Գրոզնի քաղաքի շրջան և Անդրկովկասյան ռազմաճակատի Հյուսիսային զորախմբի 9–րդ բանակի կազմում սեպտեմբերի 18–ից մարտնչում գերմանաֆաշիստական զորքերի դեմ Թերեք գետի աջ ափին՝ Բենո–Յուրտ–Թերեք–Բալաշով տեղամասում: Այստեղ դիվիզիայի զորամասերը մինչև սեպտեմբերի 26–ը պաշտպանական համառ մարտերում հետ էին մղում հակառակորդի տանկերի ուղեկցությամբ ընթացող հետևակի գրոհները, միաժամանակ պատրաստվելով հարձակման: Սեպտեմբերի 26–ին հրետանային 20 րոպե տևած նախապատրաստությունից հետո դիվիզիայի զորամասերը, աջակցող ուժերի հետ միասին, անցնում են հար-

ձակման նպատակ ունենալով ազատագրել Թերեք, Թերսկոյե և Պրեդմոստնի ավանները: Չնայած չորս օր տևած կատաղի մարտերում դիվիզիայի զորամասերին չհաջողվեց ազատագրել այդ ավանները, բայց և այնպես փակվեց թշնամու ճանապարհը դեպի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող նավթարդյունաբերության խոշոր կենտրոնը՝ Գրոզնի քաղաք: Այդ մարտերում դիվիզիան կրեց ծանր կորուստներ և սեպտեմբերի 30–ին դուրս բերվեց 9–րդ բանակի ռեզերվ, որտեղ համալրվեց նոր ուժերով: Հոկտեմբերի 21–ից դիվիզիան կրկին մարտերի մեջ էր Մալգոբեկի շրջանում, որը տևեց ավելի քան 2,5 ամիս: Այդ մարտերում հակառակորդը կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ կրեց: Միայն 390–րդ գնդի տեղամասում նա կորցրեց 11 տանկ: Մարտերում ցուցաբերած քաջության համար քաղղեկի տեղակալ Ամասիա Հարությունյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով: Հեգատա մարտերից մեկում նա ծանր վիրավորվեց ուսից և ձեռքից, որի հետևանքով, որպես պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ, զորացրվեց բանակից: Վերադառնալով հայրենի Ղափան, նրան նշանակեցին Ղափանի կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար: Հետագայում նա աշխատեց որպես քաղաքի կոմունալ բաժնի պետ, մսի կոմբինատում մորթման ցեխի վարիչ, միաժամանակ շարունակելով պատերազմի հետևանքով կիսատ թողած ուսումը, հեռակա կարգով սկզբում ավարտեց մանկավարժական ինստիտուտի պատմության, ապա Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետները: Դրանից հետո նա կառուցեց Կապանի տարածաշրջանի խոշորագույն տրիկոտաժի ֆաբրիկան, դարձավ նրա հիմնադիր տնօրենը: Թոշակի անցնելուց հետո մինչև մահը՝ 2006 թ. սեպտեմբերի 3–ը, աշխատել է Կապանի շրջանի պատերազմի վետերանների միությունում:

Մինասյան եղբայրների նամակներում հաճախակի էր հիշատակվում նաև հորեղբոր Շմավոն ապոր անունը: Շմավոն Աղաջա-

նի Մինասյանը ծնվել է 1904 թ.: Կապանի շրջանի Շիկահող գյուղում: Վաղ հասակում նա զրկվել է ծնողներից և մնացել Շիկահողի ենթաշրջանում հմուտ դերձակի համբավ ունեցող ավագ եղբոր Փեդրովի խնամքին: Նախնական կրթությունը նա ստացել է գյուղի դպրոցում, ապա 16 տարեկանից աշխատել Կապանի հանքերում: 1920 թ. Շմավոն Մինասյանն ընդունվել է կոմերիտմիության շարքերը, ակտիվորեն մասնակցել շրջանում տարվող կոմերիտական – հասարակական աշխատանքներին: 1926-1928 թթ. նա ծառայել է Հայկական հրաձգային դիվիզիայի (հետագայում 76–րդ լեռնահրաձգային Կ.Ե. Վորոշիլովի անվան դիվիզիա – Կ.Հ.) հրետանային գնդում, միաժամանակ ակտիվ մասնակցություն ունեցել դիվիզիայի հասարակական–քաղաքական կյանքին, թղթակցել դիվիզիայի քաղբաժնի «Կարմիր զինվոր» թերթին: Այդ շրջանում, 1927 թվականի հունիսին Շմավոն Մինասյանը ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը: Բանակից զորացրվելուց հետո նա մեկնել է Բաքու, իր միջնեկ եղբոր՝ 1918 թ. կոմկուսի անդամ, Բաքվի կոմունայի զինված ջոկատներից մեկի (Սաբունչիի շրջան) հրամանատար Բագրատ Աղաջանի Մինասյանի մոտ և աշխատանքի անցել Ազնեֆտի բնագավառում: Աշխատանքի հետ մեկտեղ Շմավոն Մինասյանը սովորում և ավարտում է Բաքվի բանֆակը, ապա՝ էներգետիկ տեխնիկումը: Ուսումնատենչ երիտասարդն այնուհետև սովորել և ավարտել է Անդրկովկասյան Կարմիր պրոֆեսուրան (բարձրագույն կուսակցական դպրոց), ապա կուսակցական պատասխանատու աշխատանք կատարել Ստեփանակերտի շրջանում, Բաքվի քաղկոմում, եղել ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ–լենինիզմի ինստիտուտի Ադրբեջանի մասնաճյուղում որպես ավագ գիտաշխատող, միաժամանակ դասախոսել Բաքվի մի շարք բուհերում և տեխնիկումներում, ստացել բնակարան քաղաքի կենտրոնում՝ Կոմունիստիչեսկայա 5, բնակարան 34 հասցեում, ամուսնացել, ունեցել երկու որդի: Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նա ներկայացավ Բաքվի

Վորոշիլովյան շրջանի զինկոմիսարիատ՝ կամավոր ռազմաճակատ մեկնելու դիմումով: Կարմիր բանակի հակաօդային պաշտպանության բարձրագույն զինվորական դպրոցն ավարտելուց հետո կապիտան Շմավոն Մինասյանը Անդրկովկասյան ռազմաճակատի 249–րդ բանակային զենիթահրետանային գնդի շարքերում մասնակցել է Կովկասի ճակատամարտին: Այնուհետև, 1943 թ. աշնանից նա 69–րդ զենիթային – հրետանային դիվիզիայի 2004–րդ զենիթային–հրաձգային գնդի շարքերում, որպես գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ աչքի ընկել Ղրիմի, ապա Լեհաստանի համար մղված մարտերում:

1944 թ. հուլիսի 28–ից մինչև օգոստոսի 29–ը կապիտան Շ.Ա. Մինասյանը ակտիվորեն մասնակցել է լեհական Սանդոմիր քաղաքի շրջանում, Վիսլա գետի ձախ ափին հենակետի գրավման և պաշտպանության մարտերին և 1–ին Ուկրինական ռազմաճակատի 3–րդ գվարդիական բանակի հրամանատար, գեներալ–գնդապետ Վ.Ն. Գորդովի՝ 1945 թ. մարտի 5–ի թիվ 19 հրամանով պարգևատրվել Հայրենական պատերազմի 2–րդ աստիճանի շքանշանով:

Կապիտան Շ.Ա. Մինասյանի պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար մայոր Երյոմինը 1944 թ. դեկտեմբերի 3–ին նշել է. «Կապիտան Շ.Ա. Մինասյանը նվիրված է հայրենիքը գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրելու գործին և մեծ հեղինակություն է վայելում գնդի ողջ անձնակազմի շրջանում: 1944 թ. հուլիսի 13–ից մինչև սեպտեմբերի 1–ը տեղի ունեցած հարձակողական գործողության ժամանակ նա մեծ դաստիարակչական աշխատանք կատարեց գնդի անձնակազմի հետ, համախմբեց անձնակազմին կատարելու մարտական առաջադրանքը, որը շատ բանով նպաստեց գնդի կողմից մարտական առաջադրանքի ժամանակին և հստակ կատարմանը: 1944 թ. հուլիսի 13–ից մինչև սեպտեմբերի 1–ը գունդը ետ է մղել հակառակորդի 245 օդային հարձակում, ցած գցել 3 «Յունկերս–87» տիպի ինքնաթիռ:

Արևմտյան Բուգ և Վիսլա գետերի անցման ժամանակ կապիտան Շ.Ա. Մինասյանը մշտապես գտնվում էր գնդի մարտկոցներում, անձնական օրինակով ոգևորում հրետանավորներին հստակ կատարելու մարտական առաջադրանքը։Հակառակորդի ինքնաթիռները Արևմտյան Բուգի և Վիսլայի գնդի պաշտպանած տեղամասում չկարողացան ոչ մի ռումբ նետել բանակի զորքերի գետանցման գործողությանը խանգարելու նպատակով։ Կապիտան Շ.Ա. Մինասյանը արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[1]։ Սակայն դիվիզիայի քաղբաժնի պետ մայոր Վոլշենկոն կապիտան Շ.Ա. Մինասյանի պարգևը բարձրացնում է և ներկայացնում Հայրենական պատերազմի 2–րդ աստիճանի շքանշանի։ Այդ առաջարկը պաշտպանում է բանակի քաղբաժնի պետի և հրամանատարի կողմից։ Բացի Հայրենական պատերազմի 2–րդ աստիճանի շքանշանով պարգևատրվելուց Շ.Ա. Մինասյանը ստանում է նաև մայորի զինվորական կոչում։ Այնուհետև մայոր Շ.Ա. Մինասյանը աչքի է ընկնում Լեհաստանի ազատագրման համար մղված մարտերում և 1945 թ. մարտի 5–ին 3–րդ գվարդիական բանակի հրամանատար գեներալ գնդապետ Վ.Ն. Գորդովի թիվ 18 հրամանով պարգևատրվում Կարմիր աստղի շքանշանով[2]։ Մայոր Շ.Ա. Մինասյանի պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար գվարդիայի մայոր Բասինսկին 1945 թ. հունվարի 30–ին նշում է. «Մայոր Շ.Ա. Մինասյանը, հանդիսանալով գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, 1945 թ. հունվարի 12–ից սկսված հարձակողական գործողության ժամանակ, իրեն դրսևորեց որպես համարձակ և նախաձեռնող սպա։ Հակառակորդի ցամաքային զորքերի դեմ մղվող մարտերի ժամանակ, նա մշտապես գտնվում էր գնդի ստորաբաժանումների շարքերում, որտեղ ստեղծվել էր ծանր իրավիճակ և իր անձնական օրինակով ոգևորելով մարտիկներին, նպաստում էր մարտական

---

[1] *Նույն տեղում։*
[2] *Նույն տեղում, թ. 153։*

առաջադրանքի կատարմանը: Գունդը 2 օրվա ընթացքում ոչնչացրեց հակառակորդի 7 զրահամեքենա, շուրջ 40 ավտոմեքենա և մինչև 500 զինվոր ու սպա:

Մայոր Մինասյանը արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[1]:

Լեհաստանի ազատագրումից հետո մայոր Շ.Ա. Մինասյանը իր զորամասի հետ ակտիվ մասնակցություն ունեցավ հակառակորդի Օստրովեցկյան-Օպատովյան խմբավորման ջախջախման գործողությանը, մարտերով առաջ ընթացավ 450-470 կմ և հաղթահարեց Նեյսե գետը: Դրանից հետո մայոր Շ.Ա. Մինասյանը 1945 թ. ապրիլի 16- մայիսի 8-ը մասնակցեց Բեռլինյան հարձակողական գործողությանը, մայիսի 8-ին իր զորամասի հետ մտավ Դրեզդեն: Այնուհետև 1-ին Ուկրաինական ռազմաճակատի 3-րդ գվարդիական բանակի կազմում մայոր Շ.Ա. Մինասյանի զորամասը մասնակցեց Պրագայի գործողությանը և մայիսի 9-ին մտավ Չեխոսլովակիայի մայրքաղաք Պրագա և այնտեղ դիմավորեց Հաղթանակի օրը: Պրագայի ազատագրմանը ակտիվորեն մասնակցելու համար մայոր Շ.Ա. Մինասյանի զորամասը արժանացավ 3-րդ գվարդիական բանակի հրամանատար Վ.Ն. Գորդովի շնորհակալությանը[2]: 2004-րդ զենիթային գնդի անձնակազմը, այդ թվում նաև մայոր Շ.Ա. Մինասյանն արժանացավ «Պրագայի ազատագրման համար» մեդալի:

Պատերազմի հաղթական ավարտից հետո 2004-րդ զենիթային-հրետանային գունդը որոշ ժամանակ Պրագայում մնալուց հետո 1945 թ. հուլիսի 5-ին հայրենիք վերադառնալու հրաման ստացավ: Թվում էր թե ամեն ինչ կարգին է և պատերազմի թոհուբոհով անցած մայոր Շմավոն Մինասյանն անփորձ կվերադառնա տուն, որտեղ արդեն սպասում էին կինը, երկու որդիները և մյուս հարազատները: Բայց ճակատագիրը դաժան գտնվեց նրա նկատմամբ:

---

[1] Նույն տեղում:
[2] ՌԴ ՊՆԿՀ, Ֆ. 2004 րդ. զենիթային-հրետանային գնդի, ց. 485039, գ. 1, թ. 3:

1945 թ. հուլիսի 6–ին մայոր Շ.Ա. Մինասյանը զոհվեց. դարանակալած ոսոխի դավադիր գնդակից՝ Սան գետն անցնելիս: Այդ մասին նրա ընտանիքին հայտնեցին գնդի հրամանատար Նեչաևը, շտաբի պետ Բուրցևը և շարային գծով հրամանատարի տեղակալ Միդելնիկովը իրենց հուլիսի 20–ի նամակում, որտեղ ասված էր. «Հարգարժան Լյուբով Իսակովնա! Մենք ցանկանում ենք Ձեզ հետ կիսել այն վիշտն ու տխրությունը, որը պատահեց մեզ և Ձեր ընտանիքին:Ձեր ամուսինը Շմավոն Աղաջանի Մինասյանը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ և զոհվեց իր պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ... նա մարտնչել է մեր հայրենիքի անկախության համար հերոսաբար և մայր Հայրենիքը նրա ծառայությունը ըստ արժանվույն է գնահատել... Ընկեր Մինասյանը պարգևատրվել էր Հայրենական պատերազմի 2–րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանով, «Կովկասի պաշտպանության համար», «Բեռլինի գրավման համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և «Պրագայի ազատագրման համար» մեդալներով... Մենք դիմում ենք Ձեզ՝ Լյուբով Իսակովնա, երեխաներին դաստիարակել այնպես, ինչպես կդաստիարակեիք Ձեր ամուսնու, Շմավոն Աղաջանովիչի հետ միասին, որպեսզի նրա երեխաները լինեն հոր նման խելացի, աննկուն և դիմացկուն:

Խնդրում ենք Ձեզ, Լյուբով Իսակովնա, մեզ հետ կապ պահպանել, դիմեք մեզ օգնության խնդրանքով, խորհուրդի համար: Ցանկանում ենք Ձեզ և Ձեր ընտանիքին երկար տարիների կյանք...»[1]:

Անցնելով առաջ նշենք, որ Լյուբով Իսակովնան պատվով կատարեց ամուսնու մարտական ընկերների ցանկությունը և իր մայրական պարտքը: Նա կարողացավ իր աշխատանքով խնամել և կրթության տալ երկու որդիներին՝ Ռուբենին ու Ռոլանին:

---

[1] *Նամակի ամբողջ տեքստը տպագրել ենք «Բանբեր Հայաստանի արխիվների», 1978 թ., թիվ 3–ում, էջ 26:*

Ռուբենը գնաց հոր ճանապարհով, դարձավ զինվորական, ավարտեց զինվորական բարձրագույն ուսումնական հաստատություն, երկար տարիներ ծառայեց ԽՍՀՄ զինված ուժերի հակաօդային պաշտպանության համակարգում և թոշակի անցավ գնդապետի կոչումով: Նրա որդի Կարենը նույնպես գնաց իր պապի և հոր հետքերով, ստացավ գնդապետի կոչում, այժմ ապրում է Մոսկվայում:

Շմավոն Մինասյանի կրտսեր որդին՝ Ռոլանը, բանակում ծառայելուց հետո (նա հրետանավոր հետախույզ էր, ծառայել է Մուրմանսկից հյուսիս Նոր երկրում), ավարտեց Բաքվի նավթաքիմիական ինստիտուտը, սովորեց ասպիրանտուրայում, պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն, ստացավ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Որոշ ժամանակ Բաքվում աշխատելուց հետո, նա տեղափոխվեց Երևան և ընտանիք կազմեց...

Անդրանիկ և Օնիկ Մինասյան եղբայրների նամակներում հիշատակվել է նաև Անդրանիկի կնոջ Ծաղկավարդի (ծննդով Կապանի շրջանի Ծավ գյուղից էր) քրոջ Օվսաննայի ամուսնու՝ Մամիկոն Բունիաթի Ավետիսյանի անունը: Անդրանիկը Ծավի դպրոցում նախապատերազմական շրջանում աշխատելու ժամանակ մտերիմ ընկերական հարաբերություններ ուներ Մամիկոնի հետ: Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը Մամիկոն Ավետիսյանը 1941 թ. սեպտեմբերին զորակոչվեց Կարմիր բանակի շարքերը և նույն թվականի նոյեմբերից մինչև 1942 թ. հունիս 345–րդ հրաձգային դիվիզիայի 1167–րդ հրաձգային գնդի շարքերում ակտիվորեն մասնակցեց Սևաստոպոլի հերոսական պաշտպանությանը (այդ մասին փաստաթղթեր են պահպանվել Սևաստոպոլի հերոսական պաշտպանության թանգարանում), ապա 388–րդ հրաձգային դիվիզիայի 773–րդ հրաձգային գնդի շարքերում աչքի ընկել Կովկասի համար մղված ճակատամարտում՝ Մոզդոկի, Նալչիկի, Օրջոնիկիձեի պաշտպանական, ապա Տազանռոգի, Դոնբասի և Սևաստոպոլի ազատագրման մարտերում: Այնուհետև

32–րդ, ապա 10–րդ գվարդիական մեքենայացված բրիգադների շարքերում ակտիվորեն մասնակցել Ուկրաինայի՝ Լվով քաղաքի, ապա Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայի ազատագրմանը, մարտերով հասել մինչև Օդեր գետը: Մարտերում վիրավորվել է 3 անգամ՝ 1941 թ. դեկտեմբերի 18–ին, թեթև՝ Սևաստոպոլում, 1942 թ. հունիսի 3–ին, ծանր՝ Սևաստոպոլում և 1943 թ. հուլիսի 18–ին, թեթև՝ Տագանռոգում (Դոնի Ռոստովի մարզում): Լեհաստանի ազատագրման մարտերում կատարած սխրանքի համար 10–րդ գվարդիան մեքենայացված բրիգադի հակատանկային հրացանակիրների վաշտի ջոկի հրամանատար, գվարդիայի ավագ Մամիկոն Բունիաթի Ավետիսյանը 10–րդ գվարդիայի մեքենայացված բրիգադի հրամանատար գվարդիայի գնդապետ Բուսլյաևի 1945 թ. մարտի 18–ի թիվ 04/Հ հրամանով պարգևատրվում է «Արիության համար» մեդալով[1]: Նրա պարգևատրման թերթիկում վաշտի լեյտենանտ Խորևը 1945 թ. մարտի 10–ին նշել է. «Գվարդիայի ավագ Մամիկոն Բունիաթի Ավետիսյանը Հայրենական մեծ պատերազմին մասնակցում է 1941 թ. սեպտեմբեր – 1945 թ. մարտ ամիսներին, 3 անգամ վիրավորվել, բայց միշտ վերադարձել է շարք: Լեհաստանի ազատագրման մարտերում նրա հակատանկային հրացանակիրների ջոկը գործում էր կազմակերպված և կարգապահ: Մարտերում ցուցաբերած արիությամբ նա օրինակ է հանդիսանում իր մարտիկների համար: Մարտական առաջադրանքները օրինակելի կատարելու և ցուցաբերած խիզախության համար գվարդիայի ավագ Ավետիսյանին ներկայացնում եմ պարգևատրման «Արիության համար» մեդալով»[2]:

Բացի մարտական պարգևից հրամանատարությունը գվարդիայի ավագ Մ.Բ. Ավետիսյանին առաջ է քաշում հակատանկային հրացանակիրների դասակի հրամանատարի օգնականի պաշտոնում: Պարգևատրումից հետո սյունեցի խիզախ մարտիկը շարու-

---

[1] ՌԴ ՊՄԳԱՄ, ֆ. 33, ց. 686196, գ. 1171, թ. 21:
[2] Նույն տեղում:

նակեց մարտնչել իր զորամասի կազմում, հասավ մինչև Օդեր գետի աջ ափ՝ լեհական Վրոցլավ քաղաքի մատույցներ, որտեղ ծանր վիրավորվեց ձախ ոտքից և Կրակովի (Լեհաստան) հոսպիտալում անդամահատեցին այն:

Հայրենական մեծ պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ Մամիկոն Ավետիսյանը զորացրվելուց հետո վերադարձավ հայրենի Ծավ գյուղ և երկար տարիներ աշխատեց այնտեղ որպես տնտեսագետ:

Մամիկոն Ավետիսյանի ավագ որդին՝ Արկադիան, բարձրագույն կրթություն ստանալուց հետո երկար տարիներ աշխատել է Արմավիրի շրջանում, եղել գյուղատնտեսության բնագավառի առաջավոր, այգեգործական տնտեսության հիմնադիր: Մյուս որդին՝ Հովիկ Բունիաթյանը այժմ տեխնիկական գիտությունների դոկտոր է, ապրում և աշխատում է Վոլգոգրադի մարզի Վոլժսկի քաղաքում: Նա «Մեր ընտանիքը» շինարարական կազմակերպության գլխավոր տնօրենն է և զբաղվում է երեխաների համար խաղահրապարակների, բակերում սպորտային խաղադաշտերի և մարզական սարքերի տեղադրման գործով: Հովիկ Մամիկոնովիչը միաժամանակ հանդիսանում է Հայրենական մեծ պատերազմի վետերանների բարեկամը, նրանց ցույց տալիս նյութական օգնություն: Բացի այդ նա հայրենանվեր գործ է կատարել հայրենի Ծավ գյուղում համագյուղացի Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի հուշահամալիրի ստեղծման, Մալգոբեկում Կովկասի պաշտպանության մարտերում հերոսաբար զոհված հայրենակցի՝ Սավադ Մարտիրոսյանի և նրա ընկերների հուշարձանի կարգավորման գործում: Նա իր մորաքրոջ տղայի՝ Պարգևի հետ (Անդրանիկ Մինասյանի կրտսեր որդին, որը նույնպես բնակվում է Վոլժսկի քաղաքում) եղել է Սևաստոպոլում, այցելել քաղաքի հերոսական պաշտպանության թանգարան, որտեղ պահպանվում են Մամիկոն Բունիաթի Ավետիսյանի մասին արժեքավոր վկայություններ: Հովիկը նաև հովանավորել է մեր սույն գրքի տպագրության ծախ-

սերը, որի համար նրան հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Մամիկոն Ավետիսյանի կրտսեր որդին՝ Բաբկենը, Կապանում անվանի շինարարի համբավ ունի, իսկ աղջիկը՝ Համեստը, ապրում և աշխատում է Վոլժսկում:

Հայրենական մեծ պատերազմում է զոհվել Մամիկոն Ավետիսյանի ավագ եղբայր՝ Նիկոլայը (ծնվել է 1907 թ. Կապանի շրջանի Ծավ գյուղում): Նրա ընտանիքը երեսնական թվականների վերջերին Ծավ գյուղից Արմավիր տեղափոխված 22 տնտեսությունների թվում էր:Հայրենական մեծ պատերազմը սկսվելու առաջին տարին նա զորակոչվեց Կարմիր բանակի շարքերը և ծառայեց նորաստեղծ Հայկական 408–րդ հրաձգային դիվիզիայի շարքերում: Մինչև 1942 թ. սեպտեմբերի սկիզբը դիվիզիան պաշտպանում էր Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև ընկած պետական սահմանը՝ Հայաստանի հինավուրց մայրաքաղաքներ՝ Անիի և Դվինի միջև: Միաժամանակ դիվիզիան երթային վաշտեր ու զումարտակներ էր պատրաստում և ուղարկում ռազմաճակատ:

1942 թ. սեպտեմբերի 11-18–ը դիվիզիայի զորամասերը երկաթուղով փոխադրվեցին Փոթի, այնտեղից էլ նավերով Սև ծովի վրայով՝ Տուապսե, որտեղից կատարելով հետիոտն երթային արշավ, ելման դիրքեր գրավեցին Նովոռոսիյսկի շրջանում՝ Ցեմեսի և Ռիբացկի ծովախորշերի ու Կաբարդինկա տեղամասում: Դիվիզիան մտավ Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան զորախմբավորման 47–րդ համազորային բանակի կազմի մեջ: Սեպտեմբերի 25–ից մինչև նոյեմբերի 5–ը Կրասնոդարի երկրամասի Կրիմսկի շրջանի Էրիվանսկի, Կաբարդինկա, Աբինսկ, Ախտիրսկի, Կրասնայա Պոբեդա, Սկաժոննայա բաբա բնակավայրերի շրջանում Հայկական 408–րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը կատաղի մարտերում հերոսաբար պաշտպանում էին իրենց հատկացված բնագիծը՝ թույլ չտալով հակառակորդին հաղթահարել Կովկասյան լեռնաշղթան և ներխուժել Անդրկովկաս: Միայն սեպտեմբերի 25-27–ը տեղի ունեցած մարտերում դիվի-

զիայի զորամասերը գրեթե ամբողջությամբ ոչնչացրին ռումինական 3–րդ լեռնահրաձգային դիվիզիան: Վերջինս մարտում կորցրեց շուրջ 8000 զինվոր ու սպա, 25 հրանոթ, 7 տանկ, 75 գնդացիր, 50 ավտոմեքենա և այլն:

Այդ մարտերին ակտիվորեն մասնակցություն ունեցավ նաև կարմիրբանակային Նիկոլայ Բունիաթի Ավետիսյանը: Ավաղ, նա 1942 թ. հոկտեմբերի 1–ի մարտում զոհվեց քաջի մահով: Խիզախ հայորդու դին հողին հանձնեցին Կրասնոդարի երկրամասի Կրիմսկի շրջանի Կրասնայա Պոբեդա բնակավայրում, իսկ 1943 թ. փետրվարի 20–ին վերահուղարկավորեցին Աբինսկի շրջանի Երիվանսկի բնակավայրի արևմտյան արվարձանում գտնվող մարտերում զոհված զինվորների եղբայրական գերեզմանոցում: Այժմ այնտեղ հուշարձան է կառուցված, որտեղ փորագրված են զոհված զինվորների, այդ թվում նաև կարմիրբանակային Նիկոլայ Բունիաթի Ավետիսյանի անունները: Նիկոլայ Բունիաթի Ավետիսյանի որդիները՝ Արսենն ու Կամոն վառ են պահում իրենց հոր հիշատակը՝ ամեն տարի Հաղթանակի օրը այցելելով նրա շիրիմին:

Անդրանիկ Մինասյանը եղբորը՝ Օնիկին 1943 թ. ապրիլի 25–ին ուղարկած նամակում գրել էր, որ Վահան Գրիգորյանից լուր կա, որ նա գործում է Բելոռուսիայի պարտիզանական ջոկատներից մեկի շարքերում: Վահան Սիմոնի Գրիգորյանը Անդրանիկի նախապատերազմյան շրջանի գործընկերներից էր, որի հետ աշխատել են Շիկահողում: Վահանը Շիկահողում Մինասյանների տան հարևան Լևոն Ստեփանյանի փեսան է, Սիրանուշ աղջկա ամուսինը: Վահան Սիմոնի Գրիգորյանը ծնվել է 1915 թ. Կապանի շրջանի Քաջարան գյուղում (1958 թ. քաղաք): Երբ չեր լրացել Վահանի 5 տարին, զրկվել էր ծնողներից և մեծացել պապի ապա՝ քեռու մոտ: Ուսումնատենչ պատանին այդ ծանր պայմաններում կարողացել էր ավարտել Կապանի թիվ 1–ին միջնակարգ դպրոցը, Գորիսի մանկավարժական տեխնիկումը և 1933 թ. նշանակվել Շիկահող

գյուղի դպրոցի ուսուցիչ: Այնուհետև աշխատել է Կապանի շրջանի Արծվանիկ և Շրվենանց գյուղերի դպրոցներում, որպես ուսուցիչ, իսկ 1936 թ. նշանակվել Շիկահողի դպրոցի տնօրեն, որտեղ աշխատել է մինչև 1939 թ.:

1939 թ. դեկտեմբերի 22–ին Վահան Գրիգորյանը զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և ծառայել Արևմտյան Բելոռուսիայում 2–րդ հրաձգային դիվիզիայի 200–րդ հրաձգային գնդում մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը: Այդ նույն զորամասի կազմում դասակի հրամանատար լեյտենանտ Վ.Ս. Գրիգորյանը մինչև 1941 թ. սեպտեմբեր Բելոռուսիայի տարածքում մասնակցել է գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված ծանր ու արյունահեղ մարտերին, նահանջելով հասել մինչև Մինսկի մարզի Սմոլևիչի շրջան: Այստեղ նա Պելիկ բնակավայրի շրջանում վերադաս հրամանատարությունից հրաման է ստանում իր դասակով մնալ թշնամու թիկունքում և մղել պարտիզանական պայքար: Իր շուրջը համախմբելով շրջապատման մեջ ընկած կարմիրբանակայիններին Վահան Գրիգորյանը ստեղծում է պարտիզանական ջոկատ, որը ստանում է «Կոմունար» անունը, ինքը դառնում ջոկատի հրամանատարը:

Սկզբնական շրջանում ջոկատը իր շարքերում ուներ 48, իսկ 1942 թ. մարտին 170 պարտիզան: Պարտիզանները հիմնականում զբաղվում էին Մինսկ–Մոսկվա երկաթուղու շրջանում երկաթուղային կամուրջների և երկաթգծի պայթեցումներով, զգալի վնաս հասցնում գերմանաֆաշիստական զավթիչների կենդանի ուժին ու տեխնիկային: Այսպես, օրինակ, միայն 1941 թ. նոյեմբերին պայթեցման միջոցով Վահան Գրիգորյանի պարտիզանները խորտակեցին գերմանական զինվորներ տեղափոխող գնացքը, որի հետևանքով զոհվեցին շուրջ 300 մարդ: 1942 թ. մարտից ջոկատը բացի «ռելսային պատերազմ» մղելուց հարվածներ էր հասցնում խճուղային ճանապարհներով երթևեկող ավտոմեքենաների շարասյուներին, կապի միջոցներին և այլն: Այսպես, օրինակ, միայն 1942

թ. հուլիսի 15–ին ոչնչացվեց 50 ավտոմեքենաների շարասյուն, 550 հիտլերական: Պարտիզանները ավար վերցնելով մեծ քանակությամբ զենք և զինամթերք, վերադարձան անտառ:

1942 թ. հուլիսի վերջերին «Կոմունար» ջոկատը միացավ Պալիկում գործող պարտիզանական ջոկատների հետ և ստեղծվեց «Դյադյա Կոլյա» պարտիզանական բրիգադը Կոլյա Լոպատինի ընդհանուր հրամանատարությամբ: Բրիգադի մեջ միավորվել էին 13 պարտիզանական ջոկատներ: Վահան Գրիգորյանը շարունակում էր մնալ «Կոմունար» ջոկատի հրամանատար: Պարտիզանները հատկապես ակտիվ կերպով ներգրավվեցին «ռելսային պատերազմի» մեջ Կուրսկի ճակատամարտի (1943 թ. հուլիսի 6 – օգոստոսի 23) և Բելոռուսական «Բագրատիոն» ռազմավարական գործողության օրերին: Այդ ժամանակաընթացքում պարտիզանները շարքից հանեցին 5 կմ երկաթգիծ, խորտակեցին 27 գնացքակազմ, ոչնչացրեցին ավելի քան 3000 հիտլերական:

1944 թ. հուլիսի 3–ին Մինսկը ազատագրվեց գերմանաֆաշիստական զավթիչներից: Այդ պատմական հաղթանակի գործում զգալի ներդրում էին կատարել Բելոռուսիայի պարտիզանները, որոնց թվում նաև «Կոմունար» ջոկատի հրամանատար Վահան Սիմոնի Գրիգորյանը: Բելոռուսիայի ազատագրումից հետո Վահան Գրիգորյանը 1944-1946 թթ. աշխատել է Մինսկի մարզի Սմոլևիչի շրջանի գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, անմիջական մասնակցություն ունեցել ազատագրված շրջանի տնտեսության վերականգնման աշխատանքներին:

1946 թ. վերջին Վահան Գրիգորյանը վերադառնում է Կապան և շրջկոմի կողմից գործուղվում սովորելու Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմին կից երկամյա կուսակցական դպրոցում, որն ավարտելուց հետո նշանակվում Կապան քաղաքի բաներիտ դպրոցի տնօրեն:1949 թ. Վահան Գրիգորյանն առաջ է քաշվում նշանակվելով ՀԿԿ Կապանի շրջանային կոմիտեի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ: Այդ

շրջանում նա հեռակայելով ավարտում է Երևանի մանկավարժական ինստիտուտը: 1957 թ. Վահան Գրիգորյանը նշանակվում է Կապանի շրջխորհրդի գործկոմի ժողովրդական կրթության բաժնի վարիչ, 1963 թ. Կապանի քաղաքային խորհրդի գործկոմի ժողկրթության բաժնի վարիչ և այդ պաշտոնում աշխատում մինչև 1980 թ. հունվարի 7–ը մինչև մահ:

Ժողովրդական կրթության զարգացման, աճող սերնդի ուսուցանման և դաստիարակության բնագավառում ներդրած զգալի ավանդի համար նա արժանացել էր Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչման, պարգևատրվել «Պատվո նշան» շքանշանով:

Նշենք, որ Վահան Գրիգորյանը մարտական ծառայությունների համար պարգևատրվել էր Հայրենական պատերազմի 1–ին և 2–րդ աստիճանի շքանշաններով, «Հայրենական մեծ պատերազմի պարտիզանին» 1–ին և 2–րդ աստիճանի մեդալներով... Վահան Գրիգորյանը ունեցել է 2 տղա և 1 աղջիկ[1]:

[1] *Կիմենտ Հարությունյան. Սյունիքի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին. Եր., «Զանգակ» հրատ., 2017, էջ 413-415:*

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո 1945 թ. հոկտեմբերին Անդրանիկ և Օնիկ Մինասյանների այնքան բաղձալի հանդիպումը տեղի ունեցավ հայրենի Շիկահող գյուղում:

Դրանից հետո համարյա նույնանման ճակատագիր ունեցան եղբայրները՝ շարունակելով զինվորական ծառայությունը Խորհրդային Միության զինված ուժերի շարքերում:

1948 թ. փետրվարին մայոր կոչում ստացած Անդրանիկ Մինասյանը նշանակում էր ստացել Անդրկովկասյան կարմրադրոշ զինվորական շրջանի 7–րդ գվարդիական բանակի Հայկական 89–րդ Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի 526–րդ հրաձգային գնդի շարքերում, որը տեղաբաշխուածէր Էջմիածին քաղաքում: Մայոր Ա.Ֆ. Մինասյանը գնդի հրամանատարի քաղաքական գծով սեղակալ էր: Նա դիվիզիայում ծառայում է մինչև 1956 թ. ամառ: 1956 թ. ամռանը օրենք է ընդունվում ԽՍՀՄ զինված ուժերի ընդհանուր կրճատման մասին: Երկու տարվա ընթացքում բանակը կրճատվեց 2140000 մարդով: Կրճատման հետևանքով կազմացրվեցին նաև ազգային զորամիավորումները՝ որոնց թվում նաև հայկական դիվիզիան: Դրանից հետո մայոր Անդրանիկ Մինասյանը աշխատեց Խորհրդային Հայաստանի պետական անվտանգության կոմիտեի ակումբում, ապա ՀԽՍՀ պրոֆկրթության վարչությունում, որպես բաժնի վարիչ: Այդ տարիներին նա հեռակա կարգով ավարտել էր մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, բնակարան ստացել Երևանում, ունեցել 4 զավակ՝ 2 տղա և 2 աղջիկ:

Դիվիզիայի հապճեպ կազմացրումը և ռազմաճակատում ստացած վերքերը զգացնել տվեցին, որի հետևանքով նա հանկարծամահ եղավ 1962 թ. դեկտեմբերի 5–ին 48 տարեկան հասակում: Նրա

այրին՝ Ծաղկավարդը ամբողջ ուժերը նվիրեց երեխաների դաստիարակության գործին: Բոլորն էլ՝ Ռաֆֆին, Ռոզալյան, Ռիման և Պարգևը ստացան բարձրագույն կրթություն, ամուսնացան և աշխատանքի անցան հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Ռաֆֆու տղան՝ Աշոտը, այժմ Հայկական զինված ուժերի փոխգնդապետ է և շարունակում է պապի մարտական ավանդույթները, մյուս որդին, որը կրում է պապի անունը՝ ապրում և աշխատում է Վոլգոգրադի մարզի Վոլժսկի քաղաքում: Ռոզալյան ունի երկու աղջիկ՝ Իռեն և Կարինե: Առաջինը Երևանում ճանաչված ատամնաբույժ է, երկրորդը՝ աշխատում է Երևանի Ճարտարապետական համալսարանում որպես տնտեսագետ: Ռիման ունի երկու երեխա՝ Վաչագան և Փիրուզա: Վաչագանը մասնագիտությամբ տնտեսագետ է, Փիրուզան՝ մանկավարժ: Պարգևը ունի մեկ տղա՝ Ռազմիկ անունով, որն ավարտել է բուհ և աշխատում է Վոլժսկում: Պարգևը կնոջ՝ Ջինայի հետ Վոլժսկիում տնօրինում են անշարժ գույքի գործակալություն: Վերջերս նրանք թոռնիկ ունեցան՝ Էդգար անունով:

Անդրանիկի եղբայր՝ Օնիկը ԽՍՀՄ զինված ուժերում ծառայեց մինչև 1958 թ.:1950-1951 թթ. սովորել և ավարտել է Գորկի քաղաքի Մ.Վ. Ֆրունզեի անվան քաղաքական ուսումնարանի քաղաշխատողների վերապատրաստման դասընթացները, իսկ 1957-1959 թթ. Լենինգրադի ապայի տան կից Մարքսիզմ–Լենինիզմի երեկոյան համալսարանը: 1952 թ. հունիսի 18–ին նրան շնորհվել է փոխգնդապետի կոչում:

Պատերազմի հաղթական ավարտից հետո մինչև 1951 թ. նոյեմբեր զինվորական ծառայությունը շարունակվել է Մոսկվայի զինվորական շրջանում, որպես գնդի կուսակցական բյուրոյի քարտուղար:1951 թ. նոյեմբերից 1952 թ. դեկտեմբեր Լենինգրադի զինվորական շրջանում, որպես Խորհրդային բանակի հրետանային գիտահետազոտական պոլիգոնի կուսբյուրոյի քարտուղար:1952 թ. դեկտեմբերից մինչև 1958 թ. հունվար փոխգնդապետ

Օնիկ Մինասյանը զինվորական ծառայությունը շարունակել է Գերմանիայի դեմոկրատական հանրապետությունում տեղաբաշխված խորհրդային զորախմբի կազմում որպես առանձին հրետանային դիվիզիոնի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ:

1958 թ. հունվարի 2–ին փոխգնդապետ Օնիկ Մինասյանը զորացրվել է ԽՍՀՄ զինված ուժերի շարքերից: Դրանից հետո 1958 թ. հոկտեմբերի 15–ից մինչև 1959 թ. հուլիս աշխատել է Լենինգրադում (այժմ՝ Սանկտ–Պետերբուրգ), որպես շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքային բաժանմունքի դասախոսական բյուրոյի բաժնի վարիչ:

Ամուսնալուծվելուց հետո, նա վերադարձել է հայրենիք՝ Երևան և 1960 թ. մարտի 2–ից աշխատանքի անցել ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի նախարարությունում, որպես ուղևորների փոխադրման վարչության ինժեներ: 1961 թ. դեկտեմբերի 1–ին Օնիկ Մինասյանը առաջ է քաշվում նախարարի օգնականի, իսկ 1969 թ. ապրիլի 8–ին՝ նախարարության ղեկավար կադրերի բաժնի վարիչի պաշտոններում:

1986 թ. մարտի 4–ին, որպես 2–րդ կարգի հաշմանդամ, անձնական դիմումի համաձայն, ազատվում է աշխատանքից, անցնում թոշակի (ԽՍՀՄ պաշտպանության նախարարության թոշակառու):

1960 թ. նոյեմբերի 5–ին Օնիկ Մինասյանը ամուսնանում է ֆրանսերենի ուսուցչուհի Հռիփսիմե (Ռիմա) Գարեգինի Գևորգյանի հետ (ծնվել է 15 մարտի 1930 թ.):

1961 թ. նայեմբերի 16–ին ծնվում է ավագ որդին՝ Արմենը, իսկ 1964 թ. օգոստոսի 23–ին՝ կրտսեր որդին՝ Անդրանիկը: Արմենը 1983 թ. ավարտել է Երևաի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետա–շինարարական ֆակուլտետը, աշխատել Շինարարության և ճարտարապետության գիտահետազոտական ինստիտուտում, որպես ինժեներ: Այժմ ֆիզիկայի

և մաթեմատիկայի ուսուցիչ է Երևանի Յավորովի անվան №131 հիմնական դպրոցում: Ամուսնացած է Լիանա Մնացականյանի հետ, ունի երկու տղա՝ Կարեն և Տիգրան անուններով, երկուսն էլ ստացել են բարձրագույն կրթություն, իսկ Տիգրանը տեխնիկական գիտությունների թեկնածու է:

Անդրանիկը 1988 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետը, որպես ինժեներ աշխատել Երևանի միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական ինստիտուտում, որպես ինժեներ: Այժմ աշխատում է: Ամուսնացած է Անուշ Սարգսյանի հետ:

Օնիկ Մինասյանը առաջին կնոջից ունի 2 աղջիկ՝ Լյուբով, ծնվել է 1946 թ. սեպտեմբերի 24–ին և Լյուդմիլա, ծնվել է 1947 թ. դեկտեմբերի 15–ին: Առաջինը ունի բարձրագույն տնտեսագիտական, երկրորդը՝ տեխնիկական կրթություն: Երկուսն էլ այժմ ապրում են Սանկտ–Պետերբուրգում:

Օնիկ Մինասյանը մահացել է Երևանում՝ 1993 թ. ապրիլի 11–ին, թաղված է մայրաքաղաքի Շահումյան 1–ին գերեզմանոցում: Այստեղ են թաղվել նրա ծնողները, եղբայրը՝ Անդրանիկը, նրա կինը՝ Ծաղկավարդը, նրանց որդին՝ Ռաֆֆին, Օնիկի կինը՝ Ռիման:

Օնիկի և Անդրանիկի քույրը՝ Բարուշկան (ծնվել է 1921 թ. փետրվարի 2–ին Շիկահողում) նախապատերազմյան տարիներին ավարտել էր Կապանի բժշկական տեխնիկումը, երկար տարիներ աշխատել քաղաքային պոլիկլինիկայի մանկական բաժանմունքում, որպես բուժքույր: Նա ամուսնացել էր համագյուղացի Ամասիա Ռուբենի Հարությունյանի հետ (նրա մասին ավելի մանրամասն տե՛ս սույն գրքի «Հեղինակի մասին» բաժինը) և ունեցել 4 երեխա՝ 2 տղա և 2 աղջիկ: Տղաներից ավագը՝ Կլիմենտը, այժմ պատմական գիտությունների դոկտոր է, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող (նրա մասին ավելի մանրամասն տե՛ս սույն գրքի «Հեղինակի մասին» բաժինը): Կլիմենտը ամուսնացել էր համաքա-

ղաքացի Եվգենյա Տիգրանի Մինասյանի հետ, որն աշխատում էր Կապանում, որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: Ամուսնանալուց հետո 1970 թ. կնոջը տեղափոխել էր Երևան, որտեղ նա որպես մաթեմատիկայի ուսուցչուհի աշխատանքի էր անցել Վահան Թեքեյանի անվան թիվ 92–րդ միջնակարգ դպրոցում[1]: 1971 թ. օգոստոսի 24–ին ծնվել է նրանց առաջին զավակը, որի անունը Կլիմենտը կոչել է քեռու՝ Անդրանիկի անունով: 1973 թ. սեպտեմբերի 25–ին ծնվել է ավագ դուստրը՝ Հասմիկը, իսկ 1976 թ. մարտի 31–ին՝ Անահիտը: Հետագայում երեք երեխաներն էլ ստացել են բարձրագույն կրթություն, ամուսնացել:

Անդրանիկը ունի 1 տղա, որի անունը դրել է Ամասիա՝ պապիկի անունով: Ամասիկը տնտեսագիտական համալսարանը ավարտելուց հետո, ուսումը շարունակել է մագիստրատուրայում, այժմ՝ ասպիրանտուրայում: Անդրանիկը 1994 թ. ապրում և աշխատում է Սանկտ–Պետերբուրգում:

Հասմիկը ունի 1 տղա և 1 աղջիկ: Տղան՝ Տիգրանը ավարտել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի տնտեսագիտության ֆակուլտետը, գերազանց՝ մագիստրատուրան: Աղջիկը՝ Շուշանը գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: Այժմ ուսումը շարունակում է օրդինատուրայում՝ մանկաբարձություն մասնագիտությամբ: Կլիմենտի կրտսեր աղջիկը՝ Անահիտը (Անկան) ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմահրավագիտության ֆակուլտետը, ունի 2 տղա: Տղաներից ավագը՝ Ռուդիկը Հայկական բանակում ծառայելուց հետո սովորել է Երևանի Ամերիկյան համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում, 6 ամիս ուսումը կատարելագործել Նորվեգիայում: Կրտսեր որդին՝ Էդգարը 2021 թ. ավարտել է ավագ դպրոցի 12–րդ դասարանը և զբաղվում է ծրագրավորմամբ:

---

[1] *2006 թ. նոյեմբերի 27–ի ժամը 9–ին 10 պակաս աշխատանքի գնալիս զոհվում է; ավտովթարների հետևանքով՝ 61 տարեկան հասակում:*

Բարուշկայի և Ամասիայի տղաներից կրտսերը՝ Լավրենտը (ծնվել է 1942 թ. մարտի 17–ին), ավարտել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը, ապա ուսումը շարունակել Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրական ցանցեր և համակարգեր ֆակուլտետում: Ավարտելուց հետո, որպես ինժեներ աշխատել է մայրաքաղաքի էլեկտրացանցեր կազմակերպությունում, ապա վերադարձել հայրենի Կապան աշխատել որպես նորաստեղծ «Էլեկտրոն» գործարանի գլխավոր տեխնոլոգ: Ամուսնացած է համաքաղաքացի Ալլա Քարամյանի հետ, որը կարուձևի հմուտ մասնագետ էր: Ունեն 1 տղա՝ Ռուբեն, որն ավարտելով Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի մշակույթի ֆակուլտետի կինոի բաժինը, ձեռք բերեց կինոօպերատորի մասնագիտություն և աշխատանքի է անցել Կապանում և Քաջարանում: Ավաղ Լավրենտը կյանքից շուտ հեռացավ՝ 2017 թ. հունվարի 31–ին և հուղարկավորվեց Շիկահողում՝ ծնողների գերեզմանոցում:

Բարուշկայի և Ամասիայի ավագ դուտրը՝ Սվետլանան Երևանի պետական համալսարանի Ռոմանո–գերմանական ֆակուլտետում սովորելուց հետո որոշ ժամանակ որպես մանկավարժ աշխատել է մայրաքաղաքում, ապա ամուսնացել բուլղարացու հետ և տեղափոխվել Կազանլիկ (Վարդերի հովիտ) քաղաք:Սվետան ունի 2 աղջիկ՝ Սնեժանա և Անի անուններով: Սնեժանան բուհը ավարտելուց հետո ամուսնացել է ամերիկացու հետ և այժմ ապրում և աշխատում է Բուֆֆալո քաղաքում (ԱՄՆ, Նյու–Յորքի նահանգ): Սվետայի կրտսեր աղջիկը՝ Անին այժմ սովորում և աշխատում է Մեծ Բրիտանիայում:

Բարուշկայի և Ամասիայի կրտսեր աղջիկը՝ Անահիտը, ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի դպրոցական ֆակուլտետի ռուսական բաժինը: Նա 43 տարի աշխատել է Աբովյան քաղաքի թիվ 1–ին,6–րդ և 8–րդ միջնակարգ դպրոցներում, որպես ռուսաց

լեզվի և գրականության ուսուցչուհի, վայելել աշակերտական և մանկավարժական կոլեկտիվների հարգանքն ու սերը: Ավելի քան 43 տարի մատաղ սերնդի դաստիարակության հայրենանվեր գործի նվիրյալը կենսաթոշակի անցնելուց հետո ապրում է Աբովյանում:

Անդրանիկ և Օնիկ Մինասյանների քույր Բարուշկան մահացել է Կապանում՝ 1994 թ. մարտի 26–ին, իսկ Ամասիան՝ 2006 թ. սեպտեմբերի 3–ին: Երկուսն էլ թաղվել են իրենց ծննդավայր, հայրենի Շիկահող գյուղի գերեզմանատանը:

Գրքի վերջում մենք հավելված ենք տվել, որտեղ տեղ են գտել ԽՍՀՄ (այժմ ՌԴ) պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվից մեր կողմից հայտնաբերված փաստաթղթեր, որոնք հանդիսանում են Մինասյան եղբայրների և նրանց հորեղբայր Շմավոն Մինասյանի ռազմաճակատային սխրանքների վկայությունը: Դրանք հիմնականում պարգևատրման թերթիկներ են, որոնք ստեղծվել են պատերազմի տարիներին, մարտական պայմաններում ռուս կամ այլ ազգության պատկանող հրամանատարների կողմից, ուստի ավելորդ մեկնաբանությունների կարիք չեն զգում: Այդպիսի բնութագրերով կարող է հպարտանալ յուրաքանչյուր ոք, ում համար թանկ է Հայրենիքի պատիվը, ում սրտում վառ է պահվում Հայրենական մեծ պատերազմում մարդկության ոխերիմ թշնամի ֆաշիզմի դեմ մարտնչած և զոհված ռազմիկների հիշատակը: Չէ՞ որ այդ հաղթանակի շնորհիվ Հայաստանը փրկվեց նոր ցեղասպանությունից, որը ցանկանում էր իրականացնել ֆաշիստական Գերմանիայի փաստացի դաշնակից Թուրքիան, որը պատերազմի առաջին շրջանում Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր կուտակել մինչև ատամները զինված 26 դիվիզիա: Այդ պատմական հաղթանակում միլիոնավոր խորհրդային զինվորների հետ միասին իրենց արժանի ավանդն էին ներդրել նաև Մինասյան եղբայրները, իմ քեռիները, որոնց ռազմաճակատային սխրանքների մասին ես դեռ մանկուց լսել եմ իմ մորից:

Նրանց Հայրենական մեծ պատերազմի տարիներին կատարած հերոսությունը ոգեշնչել է ինձ և վճռական ազդեցություն ունեցել իմ մասնագիտական կողմնորոշման վրա: Երկար տարիներ գիտահետազոտական բեղմնավոր աշխատանք կատարելով Մոսկվայի և Լենինգրադի ռազմապատմական արխիվներում, ես բավականաչափ արժեքավոր փաստեր հավաքեցի Հայրենական մեծ պատերազմի հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ և դրանք հրատարակել առանձին գրքերով, փաստաթղթերի ժողովածուներով, հոդվածներով և այլն: Այդ ընթացքում ես միշտ մտածել եմ, որ անպայման գիրք գրել նաև ռազմաճակատում իմ քեռիների կատարած սխրանքների մասին, մանավանդ, որ գործող բանակից գրած նրանց նամակները և արխիվում հայտնաբերած փաստաթղթերը միանգամայն բավարար են դրա համար: Բացի այդ ես մանկուց միշտ հպարտացել եմ իմ քեռիներով, ձգտել կյանքում նմանվել նրանց:

Այժմ ես վաստակել եմ այդ իրավունքը լուսաբանել 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում առաջին օրվանից մինչև Հաղթանակի օրը մարտական հերոսական ուղի անցած խիզախ հայրենասեր զինվորի, ծնողասեր որդիների համբավ վաստակած մարդկանց կյանքն ու գործունեությունը:

Մինասյան եղբայրների ռազմաճակատում կատարած սխրանքների, պատերազմական պայմաններում նրանց առօրյա կյանքի և գործունեության ուսումնասիրությունը այսօր ոչ միայն ճանաչողական նշանակություն կունենան նրանց սերունդների համար, այլև մեծ չափով կնպաստի հայ երիտասարդության, հատկապես Հայկական բանակում ծառայող զինվորների ու սպաների ռազմահայրենասիրական դաստիարակության գործին: Մեր ուսումնասիրությունը նաև անչափ կարևոր փաստեր կարող է տալ Հայրենական մեծ պատերազմի տարիներին քաղաքի և գյուղի առօրեականության հիմնահարցով զբաղվող պատմաբաններին:

Հավելվածում տեղ ենք տվել մի քանի նամակների, որոնք

նույնպես ստեղծված են պատերազմի տարիներին՝ ռազմաճակատում: Դրանք գրված են կյանքի ու մահվան սահմանագծում, տոգորված խոր անկեղծությամբ, Հայրենիքի նկատմամբ անսահման նվիրվածությամբ, հաղթանակի հավատով, ծնողների, հարազատների, հայրենի երկրի հանդեպ տածած մեծ սիրով:

Հավելվածում տեղ է գտել նաև Մինասյան եղբայրների հորեղբոր՝ մայոր Շմավոն Մինասյանի զոհվելու մասին հրամանատարության նամակը՝ հասցեագրված նրա կնոջը՝ Լյուբով Իսակովնային:

Հավելվածում բերած բոլոր փաստաթղթերն ու նամակները մենք առաջին անգամ տպագրել ենք «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1978 թ. թիվ 3–ի 13-26 էջերում:

ՀԱՎԵԼՎԱԾ

№ 1

Օ. Մինասյանի նամակը ծնողներին
22 հունիսի 1941 թ. *Լենինգրադ*
«Գրուզինո» երկաթուղային կայարան

Սիրելի հայրիկ և մայրիկ ջան.

Այսօր ճամբարից ճանապարհվում ենք դեպի Սորտավալա[1]: Թե հետագայում որտեղ կլինենք, այդ առայժմ հայտնի չէ:

Չափազանց խնդրում եմ մեր մասին բոլորովին չմտածեք: Ես և Անդրանիկը որտել էլ լինենք, միշտ լավ և առողջ ենք լինելու: Պատերազմի ժամանակ զուցե մեր նամակները ուշ հասնեն: Դրա համար բոլորովին չանհանգստանաք. ուժերիս չափ կաշխատեմ հաճախակի կապ պաշտպանել նամակով: Այժմ գրեցեք հին հասցեով, մինչև մեր հիմնական ռազմաճակատի հասցեն ուղարկելը: Միշտ եղեք ուրախ: Մենք միշտ պատրաստ ենք մեր ամբողջ կյանքը նվիրել մեծ հաղթանակի համար:

Սիրելի հայրիկ և մայրիկ ջան.

Դուք պետք է հպարտ լինեք, որ ձեր զավակները այսօր կռիվ են մղում թշնամու դեմ՝ վաղվա է՛լ ավելի երջանիկ ու սքանչելի կյանքի համար: Կարմիր բանակը ջարդուփշուր կանի մեր հայրենիքի ոխերիմ թշնամիներին: Մենք, անշուշտ, փառապանծ հաղթանակով կվերադառնանք տուն:

Ջերմ համբույրներով, ձեր՝ Օնիկ:

---

[1] *Սորտավալա քաղաքը գտնվում է Լադոգա լճի հյուսիսային ափին՝ Կարելիայում:*

№ 2

Ա. Մինասյանի նամակը եղբորը
1 մարտի 1942 թ. Մորշանսկ, Տամբովի մարզ

Կարոտալի եղբայր Օնիկ ջան.

Պատերազմն սկսվելու օրը մենք գտնվում էինք դաշտային պարապմունքներում[1]: Թշնամու կողմից սահմանը խախտելուց հետո սկսեցինք դիմադրել նրան: Մեծ դժվարությունների հանդիպելով, թշնամուն հակահարված տալով նահանջեցինք: 5-6 անգամ ընկանք թշնամու օղակի մեջ, սակայն հաջողվեց ավինամարտի միջոցով ազատվել: Թե ինչ սարսափելի է պատերազմը այդ մասին ավելորդ եմ համարում գրել, քանի որ քեզ հայտնի էր[2]: Գուցե հանդիպեի, քեզ այն ժամանակ մանրամասն կպատմեմ: Թշնամին բացի մեր դիմադրությունից, ուժգին հարված է ստացել մեզնից, քանի–քանի անգամ նա մեր ավինամարտից փախուստ է գործել պատերազմի դաշտում թողնելով հազարավոր ապանված զինվորներ ու սպաներ: Սակայն գազազած թշնամին պահեստային նորանոր ուժեր շրջելով մեզ վրա, ստիպում էր նահանջել:

Արևմտյան Բելոռուսիայի Պինսկ քաղաքի տակ մի անհավասար մարտում մի քանի գնդացրորդների հետ ստիպված էինք կռվել թշնամու մեկ գումարտակի դեմ: Երեք ժամ անընդհատ մենք դիմադրում էինք թշնամուն:

Խփվում են բոլոր գնդացրորդները: Մնում եմ միայն ես: Մահն աչքիս առաջ առնելով այնքան եմ դիմադրում, մինչև որ մեր գումարտակն անցնում է գետի մյուս ափը[3]: Թշնամու ավտոմատային կրակի տարափի տակ ստիպված եմ լինում նահանջել: Սակայն նրա սնայպերի գնդակը ինձ վիրավորում է: Չնայած ծանր վիրա-

---

[1] *Այն զորամասը, որտեղ ծառայում էր Ա. Մինասյանը 1941 թ. հունիսի 22-ին, տեղավորված էր Բրեստի ամրոցում:*
[2] *Օնիկ Մինասյանը մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին:*
[3] *Խոսքը վերաբերում է Պինսկ գետին:*

վորվելուն և ուժեղ ցավերին, թշնամուն խեղաթյուրման մեջ գցելով, անտառներով ու ճահիճներով, միայն 2 օրից հետո հասնում եմ մեր զումարտակին և այդ վիաճում 3 օր ղեկավարում իմ վաշտի գործողությունները: Վերքս ծանրանում է, որի պատճառով էլ ինձ տեղափոխում են հիվանդանոց...

Քո ուղարկած դրամական զումարներն ու աստեստատը[1] տանը ստացել են: Ես նույնպես ուղարկել եմ, ևս ստացել են: Տնից լավ են գրում, բոլորն էլ ողջ և առողջ են: Քեզ անպայման կհետաքրքրի ինձ հետ գտնվող տղաների մասին: Պայմաններն այնպես դասավորվեցին, որ նրանց չկարողացա նույնիսկ հանդիպել: Այսօր տնից գրում են, որ նրանցից ոչ մեկից տեղեկություն չկա պատերազմն սկսվելու օրից մինչև հիմա[2]:

Գազազած թշնամին ինձնից մի շարք անգամ հակահարված է ստացել: Այժմ ավելի կազդուրված և նոր ուժեր կուտակած մեկնելու եմ ռազմաճակատ: Նոր ուժով և նոր թափով ես նրանից վրեժ կլուծեմ կորած ընկերներիս համար, իմ վերքի համար...

Ջերմագին ողջույններ հաղորդի՛ր քո մտերիմ ընկերներին:

Կարոտալի համբույրներով, քո՝ Ա, Մինասյան:

ՀՊՊԿԱ, մայոր Ա.Ֆ. Մինասյանի անձնական գործ, թթ. 2-3: Բնագիր, ձեռագիր:

---

[1] *Ռազմական արձանագրագիր, հավաստագիր, որի համաձայն թիկունքում գտնվող ճակատամարտի ընդանիքը ստանում էր զինվորականին հասնող աշխատավարձը, կամ նրա մի մասը:*

[2] *Խոսքը վերաբերում է Բրեստում իր հետ ծառայող դասակցի ռազմիկներին: Ինչպես պարզվեց հետագայում, ամրոցի միջնաբերդում հերոսաբար զոհվել էին Թավադի Արշակի Բաղդասարյանը, Վահան Գրիգորի Գրիգորյանը, Գեղեոն Արսենի Ավագյանը և որիշներ:*

№ 3

Из наградного листа на старшего лейтенанта Минасяна А.Ф. 3 мая 1943 г.

Минасян Андраник Федорович, старший лейтенант, заместитель командира 3 роты по политчасти 217 батальона инженерных заграждений 44 отдельной инженерной бригады специального назначения, 1914 г. рождения, член КПСС с 1932 г., в РККА с октября 1939 г., родился в с. Шикаох Кафанского района Арм. ССР.

...Будучи заместителем командира роты по политической части, т. Минасян всегда уделял особое внимание дисциплине среди бойцов и командиров своей роты и добился в этом больших успехов. Это особенно ярко подтвердилось при выполнении боевого задания, когда под минометно-пулеметным обстрелом противника, бойцы под его руководством самоотверженно грузили лес для моста через р. Сев. Донец. С исключительным упорством и настойчивостью т. Минасян сгружал одну платформу за другой и только когда задание было выполнено, он отвел людей в безопасное место.

Командир 317 БИЗ старший лейтенант Бодров

Командир 44 ОИБр полковник Ческис

Приказом командира 44 ОИБр от 17.5.1943 г. Награжден медалью «**За отвагу**».

ЦАМО РФ, ф. 33, оп. 682526, д. 1643, л. 279, Подлинник.

№ 4

Из наградного листа на порторга 217 БИЗ 44 ОИБр
Капитан Минасян А.Ф.
23 июля 1943 г.

...Бесстрашный парторг, личным примером вселял среди бойцов и командиров стойкость, волю к выполнению боевого задания по постройке переправы через р. Сев. Донец в район пос. Белая Гора.

Под шквальным огнем противника т. Минасян вместе с бойцами подносил необходимый материал к реке.

Противник вел пулеметный огонь по ройону работ. Т. Минасян появлялся там, где было наиболее опасное место и подбодрял бойцов.

Т. Минасян лично вытащил из воды 4-х раненых бойцов и 1-го младшего командира.

Командир 217 БИЗ гвардии старший лейтенанта Рунов

Командир 44 ОИБр полковник Неведьев

Приказом командира 44 ОИБр от 3.8.1943 г. Награжден орденом «Красной Звезды».

ЦАМО РФ, ф. 33, оп. 682536, д. 1527, л. 204 Подлинник.

№ 5

Из наградного листа на партора 217 БИЗ 44 ОИБр
Капитан Минасян А.Ф.
27 ноября 1943 г.

...При проведении боевой операции по форсированию правого берега р. Днепр в районе д. Балабино южнее г. Запорожье в ночь с 25 на 26 ноября 1943 г. Канпитан Минасян как партийный руководитель провел огромной важности политическую работу по подготовте и мобилизации всех коммунистов и комсомольцев батальона на героическое выполнение поставленной задачи по переброске десанта. Тот факт, что операция по переброске десанта частей 60 гвардейской стрелковой дивизии в количестве 2.350 человек пехоты с боеприпасами и вооружением и одно артиллерийской батареи, произведена была отлично под сильным огнем противника из всех видов оружия и что коммунисты и комсомольцы являлись в авангарде всего личного состава, проявляя образцы доблести, отваги, мужества и героизма – есть результат огромной ответственной, углубленной работы парторга батальона т. Минасяна, который сам личным примером воодушевлял их на преодоление трудностей.

Днем 26 ноября 1943 г. Капитан Минасян лично в числе других офицеров 217 БИЗ первым переправился на правый берег и обеспечил срочное выполнение боевого задания по устройству дороги на песчаном груите от места причала паром, переправив большое количество автотранспорта с артиллерией, боеприпасами и других имуществом, следовавшим для подкрепления наших наступающих частей на правом берегу р. Днепр.

За проявленное мужество при форсировании р. Днепр капитан А.Ф. Минасян достоин присвоения звания **Герой Советского**

Союза.

Командир 217 БИЗ майор Колосков

Командир 60 гв. Сд гвардии генерал-майор Арнаков

Приказом войскам 6-й армии от 1.12.1943 г. Награжден орденом «**Красного Знамени**».

ЦАМО РФ, ф. 33, оп. 686044, д. 854, л. 204, Подлинник.

№ 6

Օ. Մինասյանի նամակը ծնողներին
23 փետրվարի. 1944 թ.
Սիրելի ծնողներ

Հայտնում եմ ձեզ, որ ես շատ լավ եմ, ողջ և առողջ: Այսօր փետրվարի 23-ին, մեր ռազմաճակատի շտաբից հրաման ստացվեց, համաձայն որի ինձ շնորհված է մայորի զինվորական կոչում:

Իհարկե, այդ նոր զինվորական կոչումն ինձ ավելի պատասխանատու է դարձնում և այն արդարացնելու համար ես պետք է շատ աշխատեմ:

Կարմիր բանակի 24-րդ տարեդարձին ինձ շնորհվեց քաղաքի կոչում, 25-րդ տարեդարձին՝ կապիտանի, իսկ հիմա, 26-րդ տարեդարձին՝ մայորի:

Ներկայումս է լ ավելի եռանդով ու անդադար կաշխատեմ, որպեսզի միշտ պատվով պահեմ իմ բարձր զինվորական կոչումը և պատասխանատու աշխատանքը:

Շատ լավ անցկացրեցինք Կարմիր բանակի 26-րդ տարեդարձը... Ինձ ստիպեցին երգել մայրենի լեզվով, երգեցի Սայաթ-Նովայից և Թումանյանի «Անուշ»-ից...

Մինչև նամակս հասնի տուն, երևի մեր գյուղում արդեն կսկսի բացվել մանուշակը... Գոնե նամակի մեջ ուղարկեք մեր լեռների

ծաղիկներից:

Ջերմ ողջույն բոլորին:

Մնամ ձեր որդի՝ Օնիկ:

ՀՊՊԿԱ, փոխգնդապետ Օ.Ֆ. Մինասյանի անձնական գործ, թ. 5:

Բնագիր, ձեռագիր:

№ 7

Письмо О. Минасяна брату
7 июля, 1944 г.
Кандалакшинское направление

Любимый Андраник!

Шлю тебе горячий братский привет из далекого севера.

Письмо пишу, когда наш фронт по примеру вашего фронта одерживает славные победы[1].

Наконец, и о нас сейчас говорит вся страна. Эти победы радуют и вдохновляют нас. Я лично чувствую прилив сил, когда стремительно двигаемся вперед, преодолевая все препятствия в пути. Театр военных действий на нашем участке совершенно не такой, как у вас на юге. Здесь больше всего напоминают горы, леса Армении... Но странно как-то, когда совершенно не бывает ночи уже второй месяц. В сутке 24 часа светло и всегда светит солнце.

Андраник джан! Я нахожусь в своей части, чувствую себя прекрасно. Изо всех сил стараюсь оправдать доверие, которое возложено на меня...

Нет сомнения, что скоро финским холопам Гитлера будет

[1] *Слово относится к наступлению войск Карельского фронта, начатое 21 июня 1944 г., вследствие чего Финляндия вышла из войны 4 сентября 1944 г.*

капут...

Пиши, родной, почаще. Желаю тебе счастья и удачи.

Целую – твой Оник

Архив КИВОВ, Личное дело подполковника О.Ф. Минасяна, л. 7. Подлинник, рукопись.

№ 8

Из боевой характеристики на заместителя командира по политчасти 208 ОЗАД майор Минасян О.Ф.
18 июля 1944 г.

Майор тов. Минасян О.Ф. службу в Красной Армии начал с рядового бойца, а в настоящее время занимает должность заместителя камандира дивизиона по политчасти.

За время службы в дивизионе тов. Минасян является образцом в соблюдении порядка и дисциплины, а также передовиком боевой и политической подготовки.

В работе энергичен и инициативен. Благодаря его упорной повседневной работе, личный состав дивизиона в настоящее время имеет хорошую дисциплину, моральное состояние и готов выполнять все поставленные задачи.

Партийная организация дивизиона является авангардом в боевой работе и учебе, в соблюдении порядка и дисциплины, в выполнении поставленных задач.

Майор тов. Минасян является волевым, культурным и грамотным офицером. Повседневно находятся среди бойцов и командиров, много проводит лекций и бесед, своевременно отзыватеся на запросы подчиненных. Много работает над повышением своих знаний, в результате чего зенитное дело

изучил на хорошо...

Майор тов. Минасян морально устойчив, идеологически выдержан, предан делу партии Ленина...

Вывод: Должности заместителя командира по политической части 208 ОЗАД майор тов Минасян О.Ф. вполне соответствует.

Командир 208 ОЗАД майор Карпенко Г.К.

ЦАМО РФ, ф. 208 ОЗАД, оп. 28344, д. 7, л. 35. Подлинник.

№ 9

Письмо А. Минасяна брату
30 октября 1944 г.
г. Белград

Дорогой Оник!

С большим удовольствием прочел твои письма. Они мне очень и очень понравились. Я рад, что после излечения письмо, написанное мною, ты получил. Просишь, подробно написать «как с моей рукой». До этого я уже подробности писал, только хочу тебе сообщить и заверить, что моя рука работает прекрасно, лучше, чем раньше. Дело в том, что я сейчас никакой боли не чувствую в боевой обстановке, от злости еще крепче бью проклятых немцев. Сейчас нахожусь в Белграде. Нам по счастливалось штурмовать и освободить этот город от немцев. Первый день его освобождения войдет в историю, как немеркнущий символ боевого братства народов в борьбе против фашизма. Сейчас более детально изучаю этот город. Народ нас встречает радостно, с криками «живели», «живели»[1]. Когда идем по улицам, то с четырех сторон на нас бросают цветы, фрукты и т.д. Здесь народ действительно герой. Я вспоминаю уличные бои, когда местное население всеми силами

1 Живели (югослав.) — Да здравствует!

помогало нам выкуривать немцев из чердаков и подвалов, иногда в серезных боях я им говорю, что надо спрятаться, а они говорят, а почему вы не прячетесь? Мы говорим:— «Мы войники»[1]. Они отвечают: — «Мы тоже войники».

Немецкие насильники, что хотели, то и творили над югославским народом. Когда захватываем пленных, то они просят нас дать им их на растерзание. Отсюда понятно, как они жили под игом немецких фашистов.

В день освобождения Белграда был салют. Я следил за действием наших групп. Через несколько минут приближается ко мне толпа. Они кинулись на меня и целуют со всех сторон. Меня подняли на руки с возгласами – ура, живели России, живели русские войники, живели друг Сталин. Они очень заботливы, они видят своих освободителей.

Оник джан! Письмо, которое писал на Одессу, я получил поздно, поэтому не имел возможности узнать о судьбе матери Дурова[2]. После ранения я с 10 августа по 17 сентября лечился в Одессе. У меня там знакомых очень много. Каждый день приходили ко мне на свидание, так что как будто я находился в отпуске...

Из дома пока писем не получаю. По всей вероятности, адресованные мне письма получили обратно. Чувствую, что дома беспокоятся обо мне. Прошу после войны приехать в гости. На самом деле хочется иметь крыля, прилететь к тебе. Но думаю после войны обязательно быстро решим этот вопрос. Прошу писать почаще. Напиши адрес Любы[3], номера забыл, поэтому нет ответа на мои письма.

---

1 Войники (югослав.) — солдаты.

2 Дуров Михаил Петрович, боевой товарищ майора Минасяна, одессит. В письме Оник Федорович просил брата выяснить судьбу матери друга, которая жила в Одессе до освобождения города.

3 Речь идет о жене Шмавона Минасяна —Любови Исаковне.

Целую крепко, твой А. Минасян

Архив КИВОВ, Личное дело майора А.Ф. Минасяна, лл. 10-11. Подлинник, рукопись.

№ 10

Из наградного листа на майора Минасяна О.Ф.
10 ноября 1944 г.

Минасян Оник Федорович, майор, заместитель командира по политчасти 208 отдельного зенитного артиллерийского дивизиона, 1917 г. рождения, член КПСС с 1941 г., в РККА с октября 1938 г., родился в с. Шикаох, Кафанского района Арм. ССР.

...Благодаря упорной работе т. Минасяна, дивизион за все время Отечественной войны отлично справился со всеми поставленными перед ним боевыми задачами и имеет на своем боевом счету 18 сбитых самолетов, в чем исключительно большая заслуга майора Минасяна. Во время сентябрьской наступательной операции войск 19 армии т. Минасян всегда был там, где создавались самые трудные условия для батарей. Он лично руководил разминированием местности и занятием батареями огневых позиций. Только благодаря неустанной работе и личному умелому руководству майора Минасяна, подразделения дивизиона отлично справились с поставленными перед ними боевыми задачами и не имели потерь как в личном составе, так и в материальной части.

Вывод: За исключительно хорошее руководство во время сентябрьской операции, за самоотверженную работу по разминированию местности для занятия батареями огневых

позиций майор Минасян заслуживает правительственной награды.

Командир 208 ОЗАД майор Карпенко

Начальник политотдела 19 армии полковник Поморцев

Приказом войскам 19 армии от 16.5.1945 г. Награжден орденом **«Красной Звезды»**.

ЦАМО РФ, ф. 33, оп. 690306, д. 3559, л. 95. Подлинник.

№ 11

Из наградного листа капитана Минасяна Ш.А.
3 декабря 1944 г.

Минасян Шмавон Агаджанович, капитан, заместитель командира полка по политчасти 2004 зенитного артиллерийского полка 69 зенитной артиллерийской дивизии РГК, 1904 г. рождения, член КПСС с 1927 г., в РККА с 1926-1928 и с июня 1941 г., родился в с. Шикаох, Кафанского района Арм. ССР.

Капитан Минасян Ш. А. делу партии Ленина и социалистической родины предан, пользуется заслуженным деловым авторитетом среди всего личного состава полка. В период наступления с 13 июля 1944 г. по 1 сентября 1944 г. капитан Минасян Ш.А. проводил большую воспитательную работу среди личного состава полка, мобилизовал личный состав на выполнение боевой задачи, что способствовало полку выполнить все боевые задачи четко и в срок. С 13 июля по 1 сентября 1944 г. полком отражено 245 самолето-налетов авиации противника. Сбито 3 самолета Ю-87. В районе переправ через реку Зап. Буг и через реку Висла капитан Минасян Ш.А. все время находился в батареях, чем способствовал четкому выполнению боевой задачи полком, авиация противника ни в районе реки Зап. Буг, ни в районе реки Висла не могла препятствовать продвижению наших войск через переправы. На

переправы не было сброшено ни одной бомбы.

Капитан Минасян Ш.А. заслуживает правительственной награды.

Командир 2004 Зен. Ап. Майор Ерсин

Начальник полиотдела 69 Зен. Ад. Майор Волченко

Приказом войскам 3 гвардейской армии от 5.3.1945 г. капитан Ш.А. Минасян награжден орденом «**Отечественной войны II степени**».

ЦАМО РФ, ф. 33, оп. 690155, д. 6701, л. 224. Подлинник.

№ 12

Из наградного листа на майора ***Минасяна Ш.А.***
30 января 1945 г.

Майор Минасян Ш.А., работая заметителем командира полка по политчасти, в наступательных операциях с 12 января 1945 г. зарекомендовал себе смелым, инициативным офицером. Всегда в тяжелую минуту боев с наземным противником находился в подразделениях, чем способствовал выполнению боевой задачи. Полк за два дня уничтожил и подбил: 7 бронетранспортеров, до 40 автомашин и до 500 солдат и офицеров противника.

Майор Минасян достоин награждения правительственной наградой.

Командир 204 зенитного артиллерисскогоСандомирского полка 69 Зен. Ад. РГК

гвардии майор Басинский

Начальник политотдела 63 Зен. Ад., подполковник Волченко

Приказом войскам 3 гвардейской армии от 5.3.1945 г. майор Ш.А. Минасян награжден орденом «**Красной Звезды**».

ЦАМО РФ, ф. 33, оп. 690155, д. 6701, л. 153. Подлинник.

№13

Письмо А. Минасяна брату
9 мая 1945 г.
г. Вена

Дорогой Оник!

Поздравляю тебя с днем торжества всего свободолюбивого человечества с днем победы. Долгожданный день встретил прекрасно, сколько слез было в этот день. Находясь на территории чужбины, местное население радостно приветствовало нас. Как хочется в этот момент быть с товбой, как хочется целовать тебя крепко крепко.

Да! все затихло на фронте, как будто прошедшие дни были сном, теперь на фронте чувствуем вроде облегченным и под музыку, с воодушевлением и великой радостью с боевыми друзьями отмечаем день победы. Думаю, скоро встретимся, долго мечтал об этом дне. Поднимая бокал, пью за нашу победу и твое здоровье, мечтаю как можно быстрее встретиться с тобой[1].

Целую крепко-крепко, твой А. Минасян.

Архив КИВОВ, Личное дело майора А.Ф. Минасяна, л. 15, Подлинник, рукопись.

---

[1] *Долгожданная встреча братьев состоялась в середине октября, 1945 г., в родной деревне Шикаохе.*

№14

Письмо боевых друзей майора Ш.А. Минасяна
его жене
20 июля 1945 г.

Многоуважаемая Любовь Исаковна!

Мы хотим разделить с вами ту печаль и скорбь, которая постигла вас и Вашу семью. Ваш муж Минасян Шмавон Агаджанович честно выполнил свой долг перед Родиной и погиб при исполнении служебных обязанностей. Шмавон Агаджанович выполнил повеления матери-родины по разгрому врагов, фашистский зверь повержен, наше будущее светлое счастье торжествует. Это отстаивал тов. Минасян вместе со всей Красной Армией. Он сражался за независимость нашей родины как герой, и мать — Родина оценил его как заслуженного, стойкого борца за независимость нашей родины, за счастье народа. Тов. Минасян награжден правительством: орденом «Отечественной войны II степени», орденом «Красной Звезды», он получил медали: «За оборону Кавказа», «За взятие Берлина», «За победу над Германией в Великой Отечественной войне 1941-1945 гг.» и «За освобождение Праги». Так оценила Родина своего сына — героя.

Тов. Минасян погиб, а семья его в лице Вас, Любовь Исаковна и его детей живет в семье свободного советского народа, в нашей советской стране все одинаково обогревются заботой, поэтому Вы и Ваша семья никогда не будете забыты. Под руководством Коммунистической партии мы, вместе с Вами разгромили врага, под ее руководством будут воспитываться дети погибших отцов.

Мы обращаемся к Вам, Любовь Исаковна, воспитывать своих детей так же, как Вы воспотывали вместе со своим мужем Шмавоном Агаджановичем, чтобы дети его были такими же, как их папа умными, стойкими, выдержанными[1].

Просим Вас, Любовь Исаковна, держите с нами связь, обращайтесь за советом, за помощью, желаем Вам и Вашей семье здоровья на долгие годы.

С приветом его боевые друзья по совместой службе и борьбе с фашистской Германией.

Нечаев

Бурцев

Сидельников.

Архив КИВО, Личное дело майора Ш.А. Минасяна, л. 5. Заверенная машинописная копия.

---

[1] *Любовь Исаковна с честью выполнила наказ боевых друзей мужа. Она всю свою жизнь посвятила делу воспитания своих двух сыновей. Старший Рубен Шмавонович – полковник Вооруженных Сил СССР, а младший – Роман-кандидат технических наук.*

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքում՝ շիկահողցի ծնողների ընտանիքում: Հայրը Ամասիա Ռուբենի Հարությունյանը, մինչև պատերազմը աշխատել է Շիկահողի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, ապա՝ տնօրեն, կամավոր մեկնել ռազմաճակատ և 1942-1943 թթ. Հայկական 89-րդ հրաձգային Թամանյան դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդի շարքերում մասնակցել Կովկասի ճակատամարտին, ծանր վիրավորվել, պարգևատրվել Կարմիր աստղի շքանշանով: Վերադառնալով հայրենի Կապան՝ աշխատել է ՀԼԿԵՄ շրջկոմի առաջին քարտուղար, կոմունալ բաժնի վարիչ, միաժամանակ հեռակա կարգով ավարտել Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը, ապա՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետը, Կապանում կառուցել տարածաշրջանի խոշորագույն տրիկոտաժի ֆաբրիկան, դարձել նրա հիմնադիր տնօրենը: Թոշակի անցնելուց հետո մինչև մահը՝ 2006 թ. սեպտեմբերի 3-ը, աշխատել է շրջանի պատերազմի վետերանների միությունում: Մայրը Բարուշկա Փեդրովի Մինասյան-Հարությունյանը, պատերազմի նախօրյակին ավարտել էր Կապանի բժշկական տեխնիկումը, աշխատել Շիկահողի հիվանդանոցում որպես բուժքույր: Այնուհետև նա այդ աշխատանք շարունակել է Կապանի քաղաքային պոլիկլինիկայում: Չնայած բժշկական կրթության՝ նա շատ լավ գիտեր հայ դասական գրողների ստեղծագործությունները, հիանալի ասմունքող էր, վարպետորեն արտասանում էր Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Հակոբ Հակոբյանի, Հովհաննես Շիրազի, Սիլվա Կապուտիկյանի պոեմներն ու բանաստեղծությունները, երաժշտական լավ ձայն ուներ, որը ժառանգել էր հորից, երեխաների համար սկզբից մինչև վերջ երգում էր «Անուշ» օպերան, «Ուշ լինի, նուշ լինի» օպերետան, Վաղարշակ Սահակյանի, Ջիվանու, գուսան Աշոտի երգերը: Նա գրականության և երաժշտության հանդեպ ունեցած իր սերը սերմանում էր 4 զավակների՝ Կլիմենտի, Լավրենտի, Սվետլանայի և Անահիտի մեջ, ավագ որդուն դաստիարակում Հայրենական մեծ

պատերազմին սկզբից մինչև վերջ մասնակցած 3 եղբայրների՝ մայոր Անդրանիկի, փոխգնդապետ Օնիկի, Նովոռոսիյսկի «փոքր հողում» զոհված դեսանտային Պարգևի, Չեխոսլովակիայում զոհված հորեղբոր՝ մայոր Շմավոն Մինասյանի ոգով, մանկուց ավագ որդու մեջ սեր արթնացնելով պատերազմի բոլոր մասնակիցների հանդեպ: Ուստի պատահական չէր, որ հետագայում բարձրագույն կրթություն ստանալուց հետո, ավագ որդին իր ողջ կյանքը նվիրաբերեց Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի զավակների ներդրած ավանդի հետազոտման ծանր ու դժվարին, բայց շնորհակալ գործին և դարձավ այդ հիմնահարցի լուսաբանման նվիրյալ մասնագետը Հայաստանում: Կ. Ա. Հարությունյանը 1947-1957 թթ. սովորել և ավարտել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Դպրոցական տարիներին մասնակցել է քաղաքային գրադարանին կից գրական խմբակի պարապմունքներին, գրել արձակ և չափածո ստեղծագործություններ, տպագրվել շրջանային «Պղնձի համար» թերթում, «Ղափան» գրական ալմանախում, ակտիվ թղթակցել «Պիոներ» ամսագրին և «Պիոներ կանչ» թերթին: Դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Կապանի մեքենատրակտորային կայանում, Կովկասյան շինմոնտաժային տրեստում որպես փականագործ, ապա ընդունվել Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետը (սկզբում հեռակա, ապա ստացիոնար բաժին): 1961-1966 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-լեզվագրական ֆակուլտետի պատմության ցերեկային բաժինը: Ինստիտուտում սովորելու տարիներին թղթակցել է ինստիտուտի «Մանկավարժ» թերթին, բարձր կուրսերում ղեկավարել Հայոց պատմության ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, հանդես եկել «Մեծ եղեռնը», «Հայ կամավորական շարժումը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» հետաքրքիր, այն ժամանակվա համար շատ համարձակ զեկուցումներով, 1966 թ. ապրիլի 25-28-ին մասնակցել է Բաթումիում կայացած Անդրկովկասյան հանրապետությունների մանկավարժական ինստիտուտների ուսանողական գիտական նստաշրջանին, կարդացել «Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը 1914-1916 թթ.» զեկուցումը: 1966 թ. սեպտեմբեր – 1968 թ. դեկտեմբեր ամիսներին Կ. Ա. Հարությունյանն աշխատել է Հայաստանի

նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող, ձեռք բերել արխիվային փաստաթղթերի հետ աշխատելու փորձ, «Բանբեր Հայաստանի արխիվների հանդեսում» տպագրել իր առաջին գիտական գործերը: Արխիվում աշխատելու տարիները զգալի չափով նպաստել են ապագա պատմաբան-գիտնականի ձևավորման և կայացման գործընթացին: 1968 թ. ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան (արտադրությունից կտրված) և 1971 թ. հաջողությամբ ավարտել այն: Ավարտելուց հետո մինչև այսօր Կ. Ա. Հարությունյանն աշխատում է նույն ինստիտուտում սկզբում որպես կրտսեր, ապա՝ ավագ և առաջատար գիտաշխատող, իսկ 1994 թ. հունիսից՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» այնուհետև՝ «Հայ զինվորականության պատմությունը» թեմատիկ խմբերի ղեկավար 2015թ. գլխավոր գիտական աշխատող: 1979-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1994-ին՝ դոկտորական ատենախոսություններ, ստացել պատմական գիտությունների թեկնածուի և դոկտորի գիտական աստիճաններ: Նա մասնագիտացել է Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության, հայկական ազգային զորամիավորումների և զինվորական մամուլի պատմության, հայ մարշալների և Հայկական բանակի գեներալների կենսագրությունների անհայտ էջերի լուսաբանման հիմնահարցերում: Կ. Ա. Հարությունյանը հրատարակել է 37 մենագրություն՝ 500 տպ. մամուլ ծավալով, համահեղինակ է 12 այլ գրքերի, մասնակցել արխիվային փաստաթղթերի ու նյութերի 4 ժողովածուի և «Հուշամատյան» հիմնակազմ քառհատորյակի կազմման և խմբագրման աշխատանքներին: Գիտական հանդեսներում, ժողովածուներում և հանրագիտարանում տպագրել է 100 աշխատություն, միջազգային, հանրապետական, ակադեմիական և ինստիտուտային գիտաժողովներում հանդես եկել 63 զեկուցումներով, տպագրել Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցին վերաբերող 3 պլակատ, որոնք բաժանվել են հանրապետության բոլոր դպրոցներին ու զորամասերին, ուղարկվել Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Վոլգոգրադ, Մինսկ և այլ քաղաքներ, հիմնահարցը լուսաբանող 113 հոդված տպագրել թեր-

թերում: Գրքերի և հոդվածների մի զգալի մասը հրապարակվել է նաև ռուսերեն: Ռուսերեն և հայերեն կազմել է քարտեզներ նվիրված Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությունը, որոնք տեղ են գտել «Հայաստանի ազգային ատլաս» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս» հիմնակազմ գործերում: Բացի վերոհիշյալից Կ. Ա. Հարությունյանը խմբագրել է 32 և գրախոսել 15 գիրք: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 4 թեկնածուական ատենախոսություն և պաշտպանության է պատրաստվում ևս 2 թեկնածուական ատենախոսություն: Կ. Ա. Հարությունյանի ընդդիմախոսությամբ պաշտպանվել է 5 ատենախոսություն, որից 1-ը՝ դոկտորական: Գիտահետազոտական և գիտական կադրեր պատրաստելուն զուգընթաց նա տարիներ շարունակ զբաղվում է նաև մանկավարժական աշխատանքով՝ մի շարք բուհերում (Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Գավառի պետական համալսարան, Դավիթ Անհաղթ համալսարան) վարում պետական քննական հանձնաժողովների նախագահի պարտականություն: Նա ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և ՀՀ պաշտպանության նախարարության ռազմապատմական թանգարանի գիտական խորհուրդների և ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամյան» հայրենասիրական կազմակերպության նախագահության անդամ է, երկար տարիներ հանդիսանում է ինստիտուտի արհկոմի նախագահ: Նրա գիտական հայրենանվեր աշխատանքն ըստ արժանվույն է գնահատվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Ռուսաստանի Դաշնությունում: 1989թ. մայիսի 17-ին Կ. Ա. Հարությունյանը պարգևատրվել է ՀԽՍՀ ԳԱ Գովեստագրով, որը նրան է հանձնել Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Գիտական աշխատություններում և մամուլում Խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս Հ. Ք. Բաղրամյանի 100-ամյակը լուսաբանելու համար Կ. Ա. Հարությունյանը 1997 թ. նոյեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի թիվ 619 հրամանով պարգևատրվել է «Մարշալ Բաղրամյան» մեդալով:

Ռազմահայրենասիրական գրականություն ստեղծելու բնագավառում կատարած շնորհակալ գործի համար Ռուսաստանի Դաշնության մունիցիպալ ակադեմիայի նախագահության 2004 թ. սեպտեմբերի 6-ի

թիվ 1 որոշմամբ Կ.Ա. Հարությունյանը պարգևատրվել է «Մ.Ա. Շոլոխովի 100-ամյակի առթիվ» հուշամեդալով: Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին հիմնահարցը բազմակողմանի և նորահայտ արխիվային փաստերի հիման վրա լուսաբանելու համար ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ 2005 թ. մայիսի 9-ի հրամանագրով Կ. Ա. Հարությունյանը պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Հաղթանակի 60 տարին» հոբելյանական մեդալով: 2007 թ. ապրիլի 9-ին Կ. Ա. Հարությունյանն արժանացել է ՌԴ ԳԱ նախագահության և Ռուսաստանի պատմության ինստիտուտի «Պատվավոր դիպլոմի՝ УЧАСТИЕ АРМЯНСКОГО НАРОДА В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ СОВЕТСКОГО СОЮЗА (1941-1945)» մենագրության համար: Բացի այդ Կ. Ա. Հարությունյանը 2009 թ. մայիսի 26-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի թիվ 123-Ա հրամանագրով Հանրապետության տոնի կապակցությամբ պարգևատրվել է «**Մովսես Խորենացի**» մեդալով, 2010 թ. ապրիլի 20-ին Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրության ոլորտում ունեցած մեծ վաստակի համար արժանացել է ՀՀ ԳԱԱ Վաստակագրի (թիվ 81), որը նրան է հանձնել ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյանը, իսկ 2010 թ. հունիսի 29-ին ռազմահայրենասիրական գրականություն ստեղծելու բնագավառում ունեցած ներդրման, ինչպես նաև ծննդյան 70-ամյա հոբելյանի առթիվ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի թիվ 723 հրամանով պարգևատրվել «Վազգեն Սարգսյան» մեդալով: Բացի վերոհիշյալից Կ. Ա. Հարությունյանը պարգևատրվել է «Մեծ հաղթանակի 65 տարին», (8 մայիսի 2010 թ.) «Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյան» (№ 119, 16 սեպտեմբերի, 1943 թ.), «Գարեգին Նժդեհ» (29 ապրիլի, 1915 թ., հրաման № 424), «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի 70-ամյակը» (9 մայիսի 2015 թ.), 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի 75-ամյակը (9 մայիսի 2020 թ.) մեդալներով, ԱՊՀ Միջազգային վետերանների Միության «Պատվո նշան» կրծքանշանով (30 հոկտեմբերի 2014 թ.), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Վաստակագրով» «Մարշալ Բաղրամյան հայրենասիրական հասարակական կազմակերպության «Պատվոգրով» (1.05.2010 թ.), ՀՀ ՊՆ մարշալ Արմենակ Խանափերյանցի ավիացիոն

ինստիտուտի «Պատվոգրով» (17.02.2012 թ.), ՀՀ Պաշտպանության նախարար Դ. Է. Տոնոյանի «Պատվոգրով» (6.11.2019 թ.) և «Ծովակալ Իսակով» մեդալով (09.05.2020 թ.) և այլն: Կ. Ա. Հարությունյանն ամուսնացած էր Եվգենյա Տիգրանի Մինասյանի հետ (որը վրաերթի հետևանքով զոհվել է 2006 թ. նոյեմբերի 27-ին՝ Երևանում), ունի մեկ տղա՝ Անդրանիկ երկու աղջիկ՝ Հասմիկ և Անահիտ, 4 թոռ, Տիգրան, Ամասիա, Ռուդիկ, Էդգար և 1 թոռնուհի՝ Շուշան անուններով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ 27

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ 51

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԻՆԱՍՅԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ՈՒ
ԸՆԿԵՐՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ 79

ՎԵՐՋԱԲԱՆ 95

ՀԱՎԵԼՎԱԾ 104

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 121

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԻՆԱՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

(1941-1945 թթ.)

Խմբագիր՝ ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Համակարգչային շարվածքը՝ ԱԻԴԱ ՏՈՆՈՅԱՆԻ
Լուսանկարների մշակումը՝ ԷԴԳԱՐ ՄԻՆԱՍՅԱՆԻ

Չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 8 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ, 70 գ/մ²:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մայլյան 43
հեռ՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

1300դ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ-
FL0680714

II
А110295